Universitäts- und Landesbibliothek Bonn

# Çouçak hajerēn dzeṙagrneri Thiflizi Nersisean Hogeuor Dpranoçi

Kanajeanz, Stephan

Thifliz, 1893

urn:nbn:de:hbz:5:1-4388

Visual Library

# ՑՈՒՑԱԿ

# ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐՆԵՐԻ

## ԹԻՖԼԻԶԻ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ

ԿԱԶՄԵՑ

ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԵԱՆՑ

ԹԻՖԼԻԶ 1893
ՇԱՐԱՁԷԻ ՏՊԱՐԱՆ

# CATALOG

DER

# ARMENISCHEN HANDSCHRIFTEN

DES

ARMENISCHEN NERSISIAN SEMINARS ZU TIFLIS

VON

STEPHAN KANAJEANZ

TIFLIS 1893
BUCHDRUKEREI SCHARADZE.

Gour

ՀԱ.

ARM

2°

Gousen 3327

# ՑՈՒՑԱԿ

# ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐՆԵՐԻ

## ԹԻՖԼԻԶԻ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ

ԿԱԶՄԵՑ

ՍՏԵՓԱՆ ԿԱՆԱՅԵԱՆՑ

ԹԻՖԼԻԶ 1893
ՇԱՐԱՁԷԻ ՏՊԱՐԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 1 сентября 1893 года.

# CATALOG

DER

# ARMENISCHEN HANDSCHRIFTEN

DES

ARMENISCHEN NERSISIAN SEMINARS ZU TIFLIS

VON

STEPHAN KANAJEANZ

TIFLIS 1893
BUCHDRUKEREI SCHARADZE.

3327

Дозволено цензурою. Тифлисъ, 4 сентября 1893 года.

EX BIBLIOTHECA DR. IS. GOUSSEN
BONNAE (BIBL. UNIV.)

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

# Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ ԹԻՖԼԻԶՈՅ

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

## Ա.

Հայերէն ձեռագրները Հայոց ազգի պէս ցրուած են աշխարհիս զանազան կողմերը, սկսեալ Կալկաթայից մինչև Լոնդոն, Պետերբուրգից Բաղդատ։ Եւրոպայի քաղաքներում փոքր ի շատէ մի յայտնի մատենադարան չէք գտնի, ուր գէթ մի քանի ձեռագրներ չլինէին։

Որքան քաղաքակիրթ պետութեանց մէջ ընդմիշտ ցանցառ բնակութիւն հաստատած Հայերը մատնուած են, վաղ թէ ուշ կորստեան վիճակի, այնքան աւելի ապահով է ձեռագրների ապագան, ուր դասաւորուած և ցուցակագրուած մնում են և դեռ երկար և շատ երկար անկորուստ կը պահպանուեն։

Սակայն ինչպէս որ Հայ ազգի մեծամասնութիւնը տակաւին իւր հայրենի երկրում է մնում, այնպէս էլ ձեռագրներն են. որոնք իւրեանց տէրերի նման դժբախտաբար կը վիճակուին անդարձ կորստեան, եթէ վաղօրօք շուտափոյթ ճար չտեսնուի։

Արդէն կարողենք տխուր վստահութեամբ համարձակ ասել, որ մեր նախնի մատենագրների երկերից շատերն անդառնալի կորած են և հազիւ թէ մի օր ի յայտ գան. և զարմանալի չէ, երբ մի կողմից կարող իշխանութիւնն և անձեր հոգ և խնամք չեն տանում, միւս կողմից ժողովրդի տգիտութեան շնորհիւ դեռ այսօր էլ մեր նախնեաց ոսկեծղի մատեանները հետզհետէ փչանում են։ Որքան նահապետական տներ կան Ռուսա-հայաստանի գիւղերում, ուր ձեռագրներ բարձի թողի տան մի անկիւնում, «ակնատի» մէջ, երեսի վրայ քցուած, վերջի վերջոյ եղի «պուլիկի», պանրամանի, աղամանի և «կճուճների» «բերնըկալ» են դառնում։

Վատթար ևս է Թուրքիայում առհասարակ և Տաճկահայաստանում ի մասնաւորի, ուր երկար տարիներ ճամբորդած և կեանքը մաշած Վարագայ ուխտի միաբան արժանապատիւ Արեստակէս վ. Տէվկանցը հետևեալ տխուր և սրտաճմլիկ նկարագրութիւն է անում իւր Հայերգի նախերգի մէջ։

«Իրաւէ որ մենք շատ, ու շատէն շատ ոսկեծղի անուններով պճնուած խումբեր ունեցեր և ունինք դեռ ևս, այլ սակայն ո՞ւր է իրենց գործն ու փորձ, ո՞ւր է իրենց արիքն ու բարիք, արդիւնքն ու արգասիք. ո՞ւր են մեր ազգի գրական հերոսներու ձեռնարկն ու բաստ. և ո՞ւր են մեր ազգասէրներ, որ եղբայրական ձեռք տան, ուժ տան, սիրտ տան մեղուաջան մշակներուն, որ մեր նախնեաց ընտիր ընտիր ձեռագիր մատեանները հաւաքեն, կենտրոնացնեն, տեղ տեղ գրադարաններ հաստատեն, որ օտարն չտանէ զանոնք և իրեն անձնական շահուն չգործածէ. և նոցա պարունակութեան էական կէտերն ըստ քմաց չխեղաթիւրէ։ Քանի տարի յառաջ Կ. Պոլիս գտնուած միջոցիս Միհրդատեանցի հարիւրաւոր ձեռագիրներն տեսած եմ. այժմ նա մեռած է. ո՞ւր է իւր գրքերն...։ Ժամ մ'առաջ Գլակայ վանք նոյնպէս շատ հատորներով հին ձեռագիրք կա-

յին, վերջերս ես հոն գիտեցայ, հատ մը չկար։

«Ուր թողունք հին Հայաստանի բազմաթիւ գաւառներ, և անթիւ նորա ամէն մի գիւղերն, ուր սպասած էն աւելի գրեանք կան, որ երթալով խոպան պիտի փչանան։

«Մեր ուխտի եղբայրներէն տէր Ղևոնդ վ. Փիրղալէմեան, որ քանիմ տարի առաջ Վանայ սահմանին մէջ Բէլու անուն գեղ գնալով ձեռագիր գրեանք տեսեր եկեղեցին գրուած մեծ վանդակով, և նոյներու յիշատակրաններ գրած էր, ուր կային և իմ մասնաճուղիս վերաբերեալ շատ հատուածներ, այս համար գնացի որպէսզի հաւաքեմ, բայց աւա՜ղ երկու կտոր ձեռագրէն աւելի բան չկային, (Նարեկ և Յայսմաւուրք) սպառուած էին, ի շարս որոց կպատմէ յիշեալ Վ. Ղևոնդ որ մագաղաթեայ երկաթագիր Աղաթանգեղոս մի կար, որոյ մէջ դաշանց թղթի գիծմ' անգամ չկար և այլն...»

«Ես որ Յու՛ստանի մէկ մաս, և Հայաստանի գրեթէ մեծ մասն ճանապարհորդութիւն ըրած եմ կրկնակի կերպով և կրկին պաշտօնով, ի մասոյ շատ լաւ նկատած եմ որ ազգային ձեռագիրներ ես ընդ ես մաշելու, կորսուելու վերայ են, և եթէ տակաւին իրենց նախնի դրութեամբ մնան, թերևս քառորդ դարէն ետք մէկ հարիւրեկորդն չի մնար։ Զի հոր ի սիրտ սոսկացած եմ տեսել որ, յական յանուանէ մէկ-երկու յիմարներ կճանաչեմ, որք հարիւրաւոր ձեռագիրք մեռեալներու հետ ի շիրիմ թաղած, և որպէս բարեպաշտական գործ մի համարելով, կազմէր քակուած գրքեր տարեր, թաղեր են ի լեռ և ի կղզիս որ այս կողմ այն կողմ չցրուեն, ու իրենց բարեպաշտ զգացման կամ հաւատքին չդիպչեն։ Քանի քանի տեղ, քանի քանի՛ գտնուած նկարք, պատկերք և թռչնագիրներ, աղայոց ձեռք կտրտուած խաղալիք էին եղեր։ Ա՜հ չեմ կրնար սրտիս ծալքերն բանալ, մորմոք զիս կը մեռցունէ, զի մեր անդարմանելի և անդառնալի վնասներ նկատելով կեանքս կը շղթիանայ ետալով ի տապ սիրոյ գեղեցկութեան նախնի հարց հարընտիր հնութեանց, որոնք տեսնողի ուշք կրաղեն, խելքն կխլեն իրենց կիրթ ու փափուկ ճաշակովը, որոնց նկարն ու պատկերքը, գիրն ու փափուկ գրիչ գիտեն վստահ կերպով մրցել դարուս ամենաընտիր վրձիններու հետ, իրենց հազարամեայ հնութեամբ, և անխնամ դրութեամբն իսկ, միանգամ և միշտ յաղթութեան դափնին իրենց կողմ շահելով, ի վարձ իրենց անմահ արհեստին։ (Հայերգի նախերգ. էջ Գ—Ե։ Թիֆլիս 1883)։

Այս չարեաց ինչպէս և մեր այլ շատ ազգային պակասութեանց դարմանը կարող էր անել գլխաւորապէս մեր հոգևոր իշխանութիւնը։ Ս. Էջմիածնայ այժմեան կառավարիչները, երանի թէ առհասարակ հետևելով երջանկայիշատակ Գէորգ Դ. ուսումնասէր և հայրենասէր հայրապետի շաւղին, ժողովէին մեր վանքերից կարևոր ձեռագրները Ս. Էջմիածին՝ փոխանակ 1892-ին մայիսին դէսից դէնից հարկաւոր վարդապետներ, այժմ էլ վարդապետացուներ հաւաքելու։ Իսկ Թուրքիայում Կ. Պօլսի պատրիարքարանը մէկ-երկու կեդրոններ ընտրելով Տաճկա-Հայաստանում զօրօրինակ Վարագ և Ս. Կարապետ, փոքր Ասիոյ նահանգներում գտնուածները Կ. Պօլսի պատրիարքարանը հաւաքէին. և Թուրքիոյ այլ գաւառներինը Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը։

Այլև ցանկալի կլինէր որ Հայոց լուսաւորութեան և բազմամարդութեամբ կեդրոն դարձած քաղաքներում Կ. Պօլսում և Տփխիսում, առաջնում անմահ Ներսէս պատրիարքի անունով հիմնուած Ներսիսեան վարժարանը, երկրորդում Ներսէս Ե. աշտարակցու ձեռակերտ Ներսիսեան դպրանոցը գուն գործէին իւրեանց կողմից աւարտած և հետզհետէ աւարտող սաների ձեռքով և ջանքով մեր գիւղերում աստանդ ցրուած ձեռագրները հաւաքել։ Նոյնը կարող էր անել Կարնում Սանասարեան վարժարանը։

Մասնաւոր անհատներ շատ կան զանազան տեղերում, որոնք այսպէս թէ այնպէս տէր են դարձել բաւական հայերէն ձեռագրների. դիւրին կլինէր վերոյիշեալ հաստատութեանց մասնաւոր վարձատրութեամբ ձեռք բերել։ Մենք համոզուած ենք որ սոցանից շատերը և նոյն իսկ նուէր կտան այդ հաստատութիւններից

մէկին կամ միւսին, եթէ *համոզուին* որ՝ չէին կորչելու նման քանի մարդիկ կան, որոնց մօտ մէկ երկու ձեռագրներ եմ տեսել. և երբ առաջարկում էի վերոյիշեալ հաստատութեանց մէկին ուղարկել, ինձ պատասխանում էին «ինչո՞վ կարող էք *երաշխաւորել*, որ այնտեղ չի կորչի և աւելի *ապահով* է»։

Երաշխաւորութիւն և ապահովութիւն են ուզում ահա նոքա, որոնք սիրով իւրեանց ձեռագրները վերոյիշեալ հաստատութեանց նուիրել կը ցանկային. և միևնոյն իրաւամբ պէտք է պահանջեն այն հաստատութիւններից, որոնց կոչումն ու պարտքն է ձեռագրները ժողովել և պահպանել. որովհետև բաւական չէ միայն գիւղերից և մասնաւոր անհատներից ձեռագրներ հաւաքել, դիզել, անխնամ թողնելով, ուր կորուստից և կողոպտումից ազատ չեն։

Ահա որպէս զի ձեռագրները մի կողմից *աւելի* ապահով վիճակի մէջ լինեն, միւս կողմից դիւրութիւններ գրուին մեր նախնի մատենագրութիւն ուսումնասիրելու, անհրաժեշտ էր անշուշտ ունենալ բոլոր հայերէն ձեռագրների գիտական, մի ընդհանուր, մայր ցուցակ։

Ուստի գեղեցիկ է այն միտքը, որ Վիեննայի Մխիթարեանները յղացան, և մէկ երկու տարի է որ՝ միևնոյն ծիր թափում են և ջանք չեն խնայում իրագործելու նոյն գովելի գաղափարը։

Բայց ի հարկէ ցուցակն եւս շատ չօգնի ձեռագրների պահպանութեան և գրականութեան բարգաւաճման, եթէ կանոնաւոր վարչութիւն և եւրոպական բարեկարգ մատենադարանների կարգ ու կանոնը չմտցուի և մեր մատենադարաններում։ Այնպէս չըպատահի *այլ եւս* այս ինչ կամ այն ձեռագիրը չկամենալով խնդրողին տալ, պատրուակեն թէ՝ պահարանի բանալիքը կորել է, ինչպէս անում են Վենետիկի Մխիթարեանները. և կամ անհեթեթ գումարներ պահանջեն, իբրև գրաւական և այն էլ դեսպանատան միջոցով, չգիտեմ թէ երաշխաւորութեամբ, թէ երկուսով էլ հանդերձ, մի աննշան ձեռագրի համար, հակառակ Եւրոպայի մատենադարաններում կարգ դարձած գեղեցիկ սովորութեան, երբ միմեանցից ձեռագրներ են խնդրում, ինչպէս որ վարուեցան Վիեննայի ուսումնական Մխիթարեանները Բեռլինի կայսերական մատենադարանի հետ. և կամ օտարներին մատենադարանի բանալիքն անգամ յանձնեն իսկ հային *օտար* (՞՞) անուանելով հակառակ ամենայն իրաւանց և արդարութեան մատենադարանի դռներն առաջը փակեն, ինչպէս արին Ս. Էջմիածնում։ Տէ՛ր, դու փրկիր մեզ այսպիսի կարգապահներից։

## Բ.

Այն ինչ որ մենք իբրև ուսանող Վիեննայի Մխիթարեանների առաջարկութեամբ չէինք կարող յանձն առնել կատարել, այն է աշխատակցել իւրեանց օգտակար ձեռնարկութեան՝ կազմելով Գերմանիայում եղած հայերէն ձեռագրների ցուցակը, ուրախ ենք որ այսօր Ներսիսեան հոգևոր դպրանոցի գրատան հայերէն ձեռագրների ցուցակը կազմելով՝ կարող ենք մեր մասն մասնակցել այս օգտաւէտ գործին։

Եթէ մեզ յաջողուի, մտադիր ենք ապագայում հետզհետէ Տփխիսի բոլոր հայերէն ձեռագրների ցուցակը կազմել, որոնց թիւը մօտ 600-ի, իսկ ըստ ոմանց մինչև հազարի է հասնում։

Ներսիսեան հոգևոր դպրանոցի գրատան հայերէն ձեռագրների ցուցակը կազմեցինք մեր ուսուցիչ և բարեկամ նոյն դպրանոցի այժմեան տեսուչ Մեծապատիւ պ. Կ. Կոստանեանցի առաջարկութեամբ *), որն այժմ լոյս է տեսնում միևնոյն դպրանոցի յարգելի հոգաբարձուների որոշմամբ։

Ներսիսեան Դպրանոցի մատենադարանը շատ աղքատ է ձեռագրներով, որովհետև դպրանոցն ինքն առանձնապէս նպատակ չունենալով ձեռագրներ ժողովել, ուշք չէ դարձրել ցարդ այս մասին. ուստի եղած-

---

*) Թէ Կ. Կոստանեանցին և թէ նորա օգնական և գրագարանապետ պ. Ա. Մանդինեանցին յայտնում ենք մեր խորին շնորհակալիքը մեր աշխատութեան ժամանակ մեզ ընծայած դիւրութեանց համար:

ներին էլ կամ նուէր են և կամ պատահաբար գրաւուած մնան։

Բացի այդ որ մատենադարանից երբեմն երբեմն անյայտացել են գրքեր, որոնք յաճախ Տփխիսի կիրակնօրեայ տանավաճառին շուկայում և հնագրախանութներում (antiquariat) ի վաճառ են հանւում, հաւանօրէն նոյն վիճակի են ենթարկուել և ձեռագրներ։

Հաւաստողներ կան որ գրատունը քառասուն և հինգ, իսկ ոմանք թէ մինչև երեք հարիւր ձեռագիր է ունեցել, բայց մենք գտանք միայն 30 հատ. և մի տաղարանի ծածկոցով էլ վերջը պ. Ա. Մանդինեանից ստացանք, որը սակայն պէտք է այստեղ շեշտել, գրատանը չէր պատկանում։ *)

Երեսուն և մէկ ձեռագրների, որոնցից շատերն ինչպէս ասած ձեռագիր չեն, հնութիւնը հասնում է ԺԹ—ԺԵ դարը։ Սոցանից ամենահինը կրում է 1405 (Թ. 18) և նորագոյնը 1854 (Թ. 29) թուականը։ Տասն և ութ ձեռագրի ժամանակը ճիշտ որոշ է յիշատակարաններին կամ յիշատակագրութեանց նայելով, որ են.

| Դար | Տարի | Թիւ |
|---|---|---|
| ԺԵ | 1405 | 18 |
| ԺԶ | 1505 | 2 |
| ԺԷ | 1624 | 30 |
| » | 1626 | 12 |
| » | 1649 | 14 |
| » | 1676 | 3 |
| ԺԸ | 1712 | 26 |
| » | 1758 | 6 |
| » | 1769 | 1 |
| » | 1772 | 20 |
| » | 1798 | 27 |
| ԺԹ | 1812 | 7 |
| » | 1820 | 5 |
| » | 1828 | 8 |
| » | 1831 | 17 |
| » | 1837 | 23 |
| » | 1843 | 25 |
| » | 1854 | 29 |

*) Ցաւանք որ ցուցակի կազմուելուց և տպագրուելուց յետոյ կանոնաւոր փորձութեան ներքոյ պյաուհեան այս տեսակ անփութութեանց առաջ կանուիք։

Իսկ ծածկոցով 18 ձեռագրի ժամանակն որոշեցինք ի հարկէ միայն մերձաւորապէս, գլխաւորաբար ըստ հնագրութեան (paleographie), որով կստանանք հետևեալ տախտակը.

| Դար | Թիւ |
|---|---|
| ԺԶ դարից առաջ | 13 |
| ԺԷ դարից ոչ առաջ | 11 |
| ԺԷ | 15 |
| » | 16 |
| ԺԷ—ԺԸ | 31 |
| ԺԸ | 10 |
| » | 9 |
| » | 22 և 22ա |
| ԺԹ | 4 |
| » | 19 |
| » | 21 |
| » | 24 |
| » | 28 |

Ներսիսեան հոգևոր դպրանոցը շուրջ 70 տարի գոյութիւն ունի, իսկ թէ գրատունը երբ է հաստատուել, չենք կարող հաւաստի որոշել։ Աւելի դժուար և անհընարին եղաւ իմանալ թէ որ ձեռագիրն երբ է մտել մատենադարան, որովհետև այժմեան գրադարանապետը չկարողացաւ այս մասին տեղեկութիւն տալ մեզ։ Միայն թէ հաստատ կարելի է ասել որ՝ 4 ձեռագիր Թ. 4, 7, 17 և 26 որոնց ներսի կողմերին կպցրած տոմսերի վրայ տպագրուած է «Աղէքսանդր Ղազարեան Թահիրեանց», ինչպէս համեստաշուք կոյս Թահիրեանից իմացանք, իւր. հօր, Աղէքսանդր Ղազարեան Թահիրեանի, մահուանից 1890-ից յետոյ է մտել դպրանոցի մատենադարանը, հանգուցեալի բոլոր գրքերի հետ ի միասին։ Թ 19 մատենադարանին նուիրել է Ներս. դպրանոցի 5-րդ դասատան աշակերտ Աւ. Ասրէսեանց, 1892 ամ. 29 փետր.։ Թ 31 տաղարանի ծածկոցն ստացանք ցուցակն աւարտելուց յետոյ 1893 ամի յունիսին պ. Ա. Մանդինեանից. իսկ ծածկոցների համար ոչ մի տեղեկութիւն չկայ. բայց հաւանական է կարծել որ սոքա վերջինշեալներից էլ առաջ են մատենադարան մտել։

Արդէն ասացինք որ գալրանոցն առանձին նպատակ չունեցել ձեռագրներ ժողովելու, այլ պատահական կերպով են ձեռք բերուել և ոչ ընտրովի. ուստի և առանձին նշանակութիւն չունին, բաց մեծի մասին կրօնական բովանդակութիւն ունեցող, մանաւանդ մեկնաբանութեան և առհասարակ եկեղեցական գրականութեան են վերաբերում։ Սակայն ուշադրութեան արժանի են Թ 1, 12, 26, 30։ Մեր միջնադարեան եկեղեցական և աշխարհիկ գրականութեան համար առանձին նշանակութիւն կարող են ունենալ Թ. 1-ի բ. մասը. Թ. 2 և 31։

Գեղարուեստական առանձին արժէք ունեցող ձեռագրներ չկան. եղածներից էլ ցաւում ենք որ հնար չունեցանք հաս ու կտոր զարդերից մի խորանազարդի և մէկ-երկու լուսանցազարդի լուսատիպ նկարները ցուցակիս մէջ դուրս բերել։

Մեր այս ցուցակը կազմելիս դիտել ենք ա). 1 Մեծութիւն. 2 կազմ. 3 վիճակ. 4 նիւթ. 5 թերթ. 6 դատարկ. 7 տող. 8 գիր խորագիր, վերնագիր և սկզբնագիր. 9 զարդ, խորանազարդ և լուսանցազարդ. 10 պատկեր. 11 թուական. 12 գրիչ. 13 տեղ. 14 յիշատակագրութիւն (յիշատակարան և յիշագրութիւն); 15 տեղեկութիւն ընդհանրապէս ձեռագրի մասին։ Այս մասն համառօտ ենք անցել. թէպէտև այժմ եւրոպայում բանն աւելի ևս կարճ են կապում։ Որ ձեռագիրը այս կամ այն մասը չունեցել, աւելորդ ենք համարել առանձնակի յիշել, և ամենեքն յառաջ չենք բերել, ինչն ըստ ինքեան հասկանալի համարելով. Միակ բացառութիւն կարելի էր անել յիշատակարանի համար, որի և չլինելը յիշելն կարևոր էր. բայց այս պակասը լրանում է ձեռագրերի ընդհանուր տախտակով, ուր մենք յիշատակարանին առաջին սիւնակ ենք նուիրել։ *)

բ) Գրքի բովանդակութիւնը, որն իբրև կարևորագոյն մաս ընդարձակօրէն յիշել ենք, այնպէս որ թերևս ոմանց տեղ տեղ չափազանց թուի։

գ) Առանձին ուշք ենք դարձրել յիշատակագրութեանց (յիշատակարան, լուսանցագրութիւն, յիշագրութիւն) և համարեա բոլորն էլ ամբողջովին յառաջ ենք բերել, զգալով սոցա կարևորութիւնը։

Այս ցանկի մէջ հարկաւոր համարած տեղերում մէկ-երկու մանր-մունր ծանօթութիւններ ենք յաւելցրել։

Ի վերջոյ կարևոր ենք համարում ձեռագրների վրայ մի համառօտ ակնարկ ձգելու համար, իւրաքանչիւրի մասին առանձին առանձին ընդարձակ խօսելուց յետոյ, յառաջաբանին կցել ձեռագրների ընդհանուր տախտակը։

---

*) Վեննայի արժանապատիւ Մխիթարեան երկու միաբան Հ. Յ. Տաշեան եւ Հ. Գ. Գալեմքարեան, ինչպէս եւ Տրդատ Վ. Պալեան իւրեանց կազմած ցուցակների մէջ յիշում են եւ իւրաքանչիւր ձեռագրի չափը. բայց մենք աւելորդ համարեցինք։ Սակայն եւ այնպէս ով որ մեր ձեռագրների վերաբերութեամբ այս մասին հետաքրքրուի, տեղեկութեանց եւ յիշատակագրութեանց մէջ կարող է գտնել։

# ՁԵՌԱԳՐՆԵՐԻ
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱԽՏԱԿ

| Թ. | Մատեան | Թերթ և մեծութիւն | Նիւթ | Գիր | Թուական | Գրիչ | Տեղ | Ճիշտատակարան |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Պատմութիւն Աղէքսանդրի և Անմահի. | 180 (22×16,3 սմ.) | Թուղթ | Նոտրագիր | 1218 | Ցարութիւն Դաւթեան | Անյայտ | Ունի |
| 2 | Գանձարան | 368 (19,5×13 սմ.) | » | Բոլորագիր | 1505 | Մխիթար | Անյայտ | Ունի |
| 3 | Մաշտոց | 98 (18×15,5 սմ.) | » | Բոլորագիր | 1676 | Ճուլղյենց Յակոբ | Տրպիզոն | Ունի |
| 4 | Աղօթագիրք | 78 (18×10,7 սմ.) | » | Նոտրագիր | ԺԹ դար | Մինաս Սաղաթրեգեան Կամսարական | Արշարունիք | Չունի |
| 5 | Մեկնութիւն կաթուղիկէ եկեղեցւոյ | 52 (21,5×15 սմ.) | » | Նոտրագիր | 1820 | Նոտար Սարգիս Պօղոսեան | Կարին | Ունի |
| 6 | Մեկնութիւն Ոսկեբերանի, Եփրեմ | 579 (21×15 սմ.) | » | Նոտրագիր | 1758 | Անյայտ | Հիլպէ քաղաք | Ունի |
| 7 | Մեկնութիւն առաքաց աւետարանի | 111 (23×16 սմ.) | » | Նոտրագիր | 1812 | Անտոն արեղայ | Երուսաղէմ | Ունի |
| 8 | Կերակուր քաղանայից | 41 (20,5×16,7 սմ. | » | Նոտրագիր | 1828 | Մովսէս գրիչ Կիրակոսեան | Կարմիր վանք Բարձր Հայք. | Ունի |
| 9 | Աստղաբաշխութիւն | 119 (15×10,5 սմ.) | » | Նոտրագիր | ԺԸ դար | Անյայտ | Անյայտ | Չունի |
| 10 | Նշանակութիւն կաթուղիկէութեան | 108 (17,2×10,5 սմ.) | » | Նոտրագիր | ԺԸ դար | Անյայտ | Անյայտ | Չունի |
| 11 | Գիրք վկայութեանց | 297 (16,5×10 սմ.) | » | Նոտրագիր | ԺԷ դարից առաջ | Աղէքսանդր | Անյայտ | Չունի |
| 12 | Ժողովածոյ | 303 (13×11 սմ.) | » | Նոտրագիր | 1626 | Ցիսայեայ եպիսկոպոս | Անյայտ | Ունի |
| 13 | Ժողովածոյ | 253 (17×12,4 սմ.) | » | Բոլորագիր | ԺԶ դարից առաջ | Անյայտ | Անյայտ | Չունի |
| 14 | Պարզատումար | 153 (11,5×8 սմ.) | » | Նոտրագիր | 1649 | Անյայտ | Անյայտ | Ունի |
| 15 | Աստուածաբանութիւն | 226 (45,5×9,6 սմ.) | Թուղթ | Բոլորագիր | ԺԷ դար | Անյայտ | Անյայտ | Չունի |
| 16 | Քարոզագիրք | 169 (23,5×16 սմ.) | » | Նոտրագիր | ԺԷ դար | Անյայտ | Անյայտ | Չունի |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | Աստուածաբանութիւն | 226 (45,5×9,6 սմ.) | Թուղթ | Բոլորագիր | ԺԷ դար | Անյայտ | Անյայտ | Չունի |
| 16 | Քարոզագիրք | 169 (23,5×16 սմ.) | » | Նոտրագիր | ԺԷ դար | Անյայտ | Անյայտ | Չունի |
| 17 | Վարք ս. Գ. Լուսաւորչի | 128 (23×18,5 սմ.) | » | Շղագիր | 1831 | Աղէքսանդր Թայիրեանց | Տփխիս | Չունի |
| 18 | Սաղմոսի մեկնութեան քաղուածոյք | 352(27×18 սմ.) | » | Բոլորագիր | 1405 | Գրիգոր | Անյայտ | Ունի |
| 19 | Ն. Ասորւոյ Մեկնութիւն Յովհաննու | 115 (26,3×21 սմ.) | » | Շղագիր | ԺԹ դար | Անյայտ | Անյայտ | Չունի |
| 20 | Մեկնութիւն առակաց աւետարանի | 43 (23×18,5 սմ.) | » | Նոտրագիր | 1772 | Մահտեսի Ստեփան | Պասրա | Ունի |
| 21 | Տեղեմաք | 268 (32×19,5 սմ.) | » | Շղագիր | ԺԹ դար | Անյայտ | Անյայտ | Չունի |
| 22<br>22ա | Բառարան Անգլերէն-Հայերէն | 186+104(41×16,5 սմ.) | » | Նոտրագիր | ԺԸ դար | Անյայտ | Հնդկաստան՞ | Չունի |
| 23 | Բանք ոսկիականք | 126 (34,5×22 սմ.) | » | Նոտրագիր | 1837 | Գրիգոր քահանայ Լօռու-Մելիքեան | Տփխիս | Չունի |
| 24 | Ճեմարան մտաց | 144(34×21 սմ.) | » | Նոտրագիր | ԺԹ դար | Գրիգոր քահանայ Լօռու-Մելիքեան | Տփխիս | Չունի |
| 25 | Մեկնութիւն գանձագան նիւթոց | 92(34+22 սմ.) | » | Նոտրագիր | 1843 | Գրիգոր քահանայ Լօռու-Մելիքեան | Տփխիս | Չունի |
| 26 | Գաւազանագիրք | 230 (33,5+22,5 սմ.) | » | Նոտրագիր | 1712 | Ա. Եւդոկիացին(°) Պունկիանոս | Ս. Էջմիածին | Ունի |
| 27 | Գիրք խոստովանական | 132(34+21 սմ.) | » | Նոտրագիր | 1798 | Անյայտ | Աստրախան | Չունի |
| 28 | Բառարան | 151)33+21 սմ.) | » | | ԺԹ դար | Անյայտ | Անյայտ | Չունի |
| 29 | Ա. Նարեկ. և Մեկնութ. Յովհան. աւետարանի | 103(35+22 սմ.) | » | Շղագիր | 1854 | Ներսէս դպիր Տ.-Բարսեղեան Արովեանց | Անյայտ | Ունի |
| 30 | Բուզանդ և Միքայէլ Ասորի | 61+2 (26,8+20,5 սմ.) | » | Նոտրագիր (հին) | 1624 | Անյայտ | Նախավկայի վանք | Ունի |
| 31 | Տաղարան | 16 (13,7+8,4 սմ.) | » | Նոտրագիր | ԺԷ—ԺԸ դար | Անյայտ | Անյայտ | Չունի |

## 1.

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂԷՔՍԱՆԴՐԻ ՄԱԿԵԴՈՆԱՑՒՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՆՄԱՆՈՒԹԻՒՆ·

ՄԵԾՈՒԹԻՒՆ 22 × 16,3 *սմ.*: —ԿԱԶՄ, *խաւարարտ կաշեկազմ. մէջքի վերայ ոսկեզօծեր կարմիր:* — ՎԻՃԱԿ *լաւ:* —ՆԻՒԹ *թուղթ, կապտավուն, անհարթ:* — ԹԵՐԹ 180. *ա.* էջ 118, *բ.* 238: —ԴԱՏԱՐԿ *մի մի թերթ սկզբից եւ վերջից եւ էջ* 1, 2. 117, 118. 234 — 238. 1—219 *համարեա իւրաքանչիւր երես դատարկ թողած տեղեր՝ ապա պատկերներ նկարելու համար:* —ԳԻՐ *Նօտրագիր միասիւն* 17,5×13*սմ.*: — ԹՈՒԱԿԱՆ 1218 =1769: —ԳՐԻՉ *Յարութիւն Դաւթեան:* ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. *էջ* 115—116. 233: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. *կազմի մէջքի թերթերի վերայ գրուած է «գրչագիր Աստուածամանմանութեան* № 106» *էջ* 3 *երկու տեղ եւ* 234 *մի տեղ «Ներսիսեան հոգեւոր դպրանոցի» մատենադարանի կնիքը:*

### Մատեանս է

### Ա.

էջ 3—118. Գիրք որ կոչեցաւ *Աստուածամանմանութիւն շարադրեալ 'ի Պետրոսէ* որդինւոր յեպիսկոպոսէ Նախիջեւանցւոյ *Աղամալեան* ի սբ. Էջմիածին 'Ի փառս Մեծին Աստուծոյ և 'ի պատիւ Ամենօրհնեալ Սրբոյ կուսին Մարիամու Աստուածածնին և 'ի պարծանս մանկանցն սրբոյն Սիօնի մօրս մերոյ: Յորդորմամբ եղբարց ոմանց աշակերտաց գրոց սրբոց հետեւողաց ճշմարտասիրաց անձանց: 'Ի յաւուրս գերիշխանութեան Հայրապետին մերոյ *Սիմէօնի սրբազնագոյն կաթուղիկոսին*, 'ի թուականի ՌՄԺԸ=1769.

### Բ.

1. էջ. 1—233. էջ 1. «Պատմութիւն Մեծի աշխարհակալի, *Աղէքսանդրի Մակեդոնացւոյ*, կեանքվարուց քաջութիւն մինչ'ի վախճան նշանօք: Իմաստունք եգիպտացւոց, երկրի և ծովու չափոյ հասեալ և զերկնից աստեղս թուեալ, աւանդեցին ամենայն աշխարհի.... և ինքն գիւթելով կոչէր զերկնային գեօ, և զաստուածս և մկրտէր 'ի լականն, և որ ի թշնամեացն գային 'ի վերայ՝ կորնչէին. և բազում ամ թագաւորեաց խաղաղութեամբ: Նա ասացեալ եղև կաֆայս զայս.

Ով վուռ չըւեր Նեգդանեբոս
Որ թագաւորէիր յԵգիպտոս
Ու թէ հզօր ձեռամբ հարոս
Այլ լականաւըն Պոսիպոս
Գիտակ եղեր որկար ակոս,
Ջհերդ և զմօրուսս ածեր ափսոս,
Փախստական լինես յաքսորս
Դիմեալ յամրչիան Ոլոմպիոս.

Այն ձեւով մինչեւ էջ 221 նախ հնգեկայլիսաթենեսի „Պատմութիւն Աղէքսանդրի" գրքից մի հատուած, ապա բաժանգակութիւնք սառնաւորով, շատ էջեր բաց թողած, անշուշտ յետոյ պատկերներ նկարելու համար, ինչպէս որ վերջագրներից էլ երեւում է:

Վերջ էջ 220—221. «Այս է կատարումն ժամանակաց Աղեքսանդրի, ծննդեան և քաջութեան և թագաւորութեան, Հանճարոյն և իմաստութեան, իրաւանց և դատաստանին, ողջախոհութեան և արիութեան, զոր վերին նախախնամութեամբն վարեալ զկենցաղս վճարեաց զվախճանն մահու. Համառօտագոյն սորան Հետևեալ է «Եւ թէ որպիսի փառնգիք և աղէտս տառապականս տանցեալ է տարբերաբար Աղեքսանդրի ի Հիւանդութեան իւրում (Կաֆայ յողբով): Նորին գրած երեք բաղդ |Մեծ Հանճարեղդ անձնամարդ| Հզօրագունից պարծանք և զարդ| Առաստաղրոտ ու միշտ զուարթ| Քո սէրն ի սիրտս եղև մակարդ| Զինչ զձուկն որ ընկնի կարթ |Արեւդ պայծառ լինի դէտ վարդ| Քո մանկութիւնդ մշտադալար:

Պայծառ արեգակն ես դու 'ի գարնան աւուրքն 'ի նման |Որ շողն 'ի ծաղկունքն իջնու ու ծագէ լոյս զարմանական|. Նրման առիւծու ես դու որ իշխան է անվաւերական. |Աստուած պահապան լինի քեզ աջովն իւր տէրունական:

2. Էջ 151. Խոշորագիր «Ի Գրիգորիոս կաթողիկոսէ Աղթամարցոյ առ ճշմարիտ Աստուածն մեր».

Նախախնամութեան վերին դու շարժող երկնից կամարին,
Մի և անկարօտ անմահ անորակ անձն անմարմին.
Եւ Հրամանաց քոց աՀեղ ամենայն եղեալք Հնազանդին,
Անշունչ անՀոգի ծառերս բանական ձայնիւ կուխօսին:

Ինձ թուում է որ այս՝ տաղաւորի վերջի տունն է, որի սկիզբն է էջ 150
„Անուն ու խօսուն ծառքդ ի բազինս զարմանակերտ,
Այսօր օթեւանս կայաւ ազգայից մեծին Հրաշակերտ եւն.“:

3. Էջ 221—232. *Տարբերութիւններ* *ա*) «Ողբս Աղեքսանդրինն ասաց Հիւանդութեան իւրում ըրանեալ գեղով. Առաջ վեշտապաՀոս (Հաս) տուգանաց տապանակիս տառապանաց տուայտեալ մարմնոյս.... էջ 223ի վերջը կայ «Գրիգորիսի» Էջ 224 «Ազդեցէք ի տուն Պարսից ու ասէք Հօրն իմ Դարեհի դուստրն քո եղուկ դարձաւ և լալոյ եղև արժանի...» *բ*) «Եթէ որպէս ողբքս ասաց տառապեալ մայրն Աղեքսանդրու Ողոմպիայ: Լացէք զիս մայրք մանկեղանացիք միամօր զաւակաց զմիամօրս առաւել քան զծամուղ, և զդեղաշէն զուստրն Ցեփթայի...» *գ*) «Թէ որպիսի ողբս յօրինէր որ դուստրն էր Դարեհի Հռոքսանէ կինն աշխարհակալին Աղեքսանդրի: Ջնջեցաւ կապ Հիերոյս և թշուառուհոյս անմահից չունք մարդ եղեալ լքին...:» *դ*) «Եւ թէ նախարարքն և զօրքն որպիսի կական բարձեալ լան զթագաւորն իւրեանց: Եկայք ի միասին թագաւորք և իշխանք...» *ե*) «Եթէ ամենայն կեանք փարուց յաղթութեան և արիութեան նաև զվախճանըն Աղեքսանդրու նշանօք առ տէրն մեր զոր վերաբերեմք մարգարէութեամբ Ալէնիւաղ Աստուած բանն Հայրական...» *զ*) «Եթէ որպիսի բանս խրատու խօսեցեալ Հանճարեղն Աղեքսանդրէ: Բարեաց գործոց և քաջապէս....:»

1. ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 233. Եւ արդ զայս այսպէս Համեմատեալ միոյ գտանեմք յումանց զի զպատճառն գերագոյն պատմեցուք: Այլ յընթեռնելով զսա յիշման արժանի լիցի ի ձէնչ *Խաչատուր Կեսարացիս*, զի ի յարմարումն սակաւ բանիցս յուսով աշխատեցայ. Նաև զՀեթանոսական գրեալքն անմիաբան են և անվայելուչ ի վերայ շաղկապաբայիւք որակացեալ և ի ներքոյ լուսնոսի կարծեօք և խաբէութեամբ որպէս և առ գրասիրաւն Պողոմէոսի անպատուեցաւ: Իսկ զայս պատմութիւնս աշխարհակալին Աղեքսանդրու զոր գրեցի իմով անարժան *Յարութիւն Դաւթեանի* ձեռամբս օրինագրեալ աղընթեր տաՀեալով երկու օրինակս. բայց ի տեղիս տեղիս բառ և բան անՀամեմատք էին որ և որչափ իմ կարն էր նուաստագոյն ուղղելով գրեցի ուսմունքս, բառք և բանք զորս վասն պղպղութեան գրողացն չէ Հասկացայ այնպէս գրեցի սուտ ըստ պէս ըստ Համեմատ օրինակացն և ոչ աւելի կամ պակաս. սակս օգտի ինձ նուաստիս և այլ Համբակաց, որք կամին օգտիլ 'ի *Աղեքսանդրէ*: Զի թէպէտ էր 'ի Հին օրինակն, այլ անյարմար և շաղփաղփ. վասնորոյ որչափ յայտնի է 'ի սմայ ընթերցի ընտրողօրէն զի 'ի յընթերցանելն իմացին Հեռափկութք ու քարտուղարք

և ապա գիտացեն զիմ աշխատանս 'ի ումս զոր լիապէս վաստակեցի։ Տէր մի յիշեր զմեղս... Ան։

2. էջ 218 Զկենդանակերպս երկոտասան Ճէին պատկեաց գիր և քան

Ի քսանէ զերկուսն հան
Գտցես զԹիւ գրքոյս լըման
Մաղթեմ զեղբայրդ գերապանծ
Որ մեծագին ծանեմ զայս գանձ
Անախտ սիրով գաղափարեալ
ԱնԹերիէ և յաւելուած։

## 2.

## ԳԱՆՁԱՐԱՆ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 19,5×13 *սմ.*—ԿԱԶՄ *տախտակեայ, հին կաշեկազմ:*—ՎԻՃԱԿ *ընդհանրապէս լաւ. վերջի Թերթի վարի ծայրը մաշուած:*—ՆԻՒԹ *Թուղթ հաստ եւ հարթ:*—ԹԵՐԹ 368:—ՏՈՂ 17—19:—ԳԻՐ *բոլորագիր:*—ՎԵՐՆԱԳԻՐՆԵՐԸ *եւ* ՍԿԶԲՆԱԳԻՐՆԵՐԸ *կարմիր:* — ԽՈՐԱՆԱԶԱՐԴ *էջ* 1:—ԹՈՒԱԿԱՆ ՋԾԴ=1505: ԳՐԻՉ *Մխիթար:* — ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ *էջ* 732—736, 661: — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *էջ* 1 *ներքեւ կայ* «№ 194». *եւ էջ* 736 *մեզ ծանօԹ «Ներ. հոգ. դպրանոցի» կնքադրոշմը:—Էջերի ներքեւ նշանակուած են այն անունները, որոնց նուիրուած են գանձերը: էջ* 38-*ից յետոյ Թերթ է պակաս:*

### Մատենանս է

Գանձ եմ չափով և գովելի,
Բանեալ ձայն և ախորժելի.
Ի Գրիգորէ յառաջ եկի
Գծեալ մատամբ ի քարտիզի
Զոր վերծանիմ յեկեղեցի
Բանից գասուց պաշ(տ)աւնէի
Ի տաւնս սուրբ յիշատակի
Էին ծնօղի մաւր Աննայի՝

1. էջ 1—9. Գանձ Յովակ(իմայ) և և Աննայի։ Գոյին անեղիս գոյքն...»

ա. էջ 9—10. «Այսօր լռիւ....» (ձայնանիշներով)

2. էջ 10—17. Նիկողայոս (Նիկողոսի հայրապետին)։ Գաւազան ծաղկեալ...»

ա. էջ 17—18. «Տաղ։ Որ ի յեւԹեանց...» ձայնանիշներով, որպէս են բոլոր գանձերից վերջն եկող տաղերը։

3. էջ 19—23. «Թադէոսի Բարդուղիմէոսի։ Գերարփի պայծառ...»

ա. էջ 23—24. Բարդողիմէոսին։ Բանըն որ ի հաւրէ...»

բ. էջ 24—25. և Սատանիոսի։ Սուրբ և սրբարար...»

4. էջ 26—31. Սուրբ Յակոբայ. (Մեծատառ գիմագրով)։ «Մեծահամբաւ անուն գովելի...»

ա. էջ 31—34. «Տաղ ի ՄաԹէոս վրդապետ(է)։ Մեծի հանդիսիսի...»

5. էջ. 34—38 «Գ. Իգնատիոսի հպ.։ Գոհաբանական ձայն...» վերջը պակասում է։

6. էջ 39—45. «Դաւթի և Յակոբայ» Սկիզբը պակաս է։

ա. էջ 45—47. «Տաղ Յովհաննէս վրդպտ(ի)։ Յիսուս լոյս ծագեաց...»

7. էջ 47—54. «Սրբն. Ստ. Նախ.(Մեծատառ գիմագիր)։ Մեծ և հզօր անմահ...»

ա. էջ 54—56. «Տաղ ի տր. Ներսէսէ կԹղկ.։ Ի Խաչին անկեալ որԹոյն...»

բ. էջ 56—58. «Յորդորակ է։ Ի գաւաղանէն Յեսեայ...»

8. էջ 59—71. «Գանձ սր. առաքելոց Պետրոս և Պօղոսի։ ՄխիԹր վրդ.։ (Մեծատառ գիմագրով)։ Սր. երրորդուԹիւնն, ստեղծող զօրուԹիւն...»

ա. էջ 71—73 «Տաղն է։ Այսօր ցընծացէ...»

9. էջ 73—79. «Գանձ Առաքելոցն բժիշ։ Խորհրդազգաց քո մարդեղուԹեանդ...»

ա. էջ 79—82. «Տաղ ի տր. Ներսէսէ։ Առաքեալք Աստուածորդոյն...»

10. էջ 82—88 «Գանձ. Պաղատման Գերանձնա...

11. էջ 88—99. Գանձիս գրեցայ ես
պիտանի
Բանեալ բանիւ ուրախալի
Ի Գրիգորէ գարշաղտեղի

Գրրեալ որդոց Զեբիդի
Որդւոց բուէրն Քրիստոսի
Ռամից փրկչին Տեառն Յիսուսի.

Գրքի մէջ եւ այլ անկեր գանձերի սկըզբում կան, տաղաչափութիւններ որոնց սկզբնատառերը կազմում են «Գրիգոր» անունը:

«Որդւոցն Որոտման։ Գեղապանծ լուսով...»

ա. էջ 99—101. «Տաղ ի տէր Ներսէսէ կաթողիկոսէ։ Որդիքն որոտման, որք ի վերուստ...»

բ. էջ 101—109. «Յորդորակն է։ Նոր լոյս յարփենոյն...»

12. էջ 102—112 «Գանձ։ Բարսեղի Կեսարացւոյ ի Խչ. վարդապետէ։ Խաչաբարձ, արփի պանծալի...»

ա. էջ 109—110. «Տաղ. Խաչատուր վարդապետէ։ Խոնարհիմք հոգով..»

բ. էջ 110—112. «Յորդորակն է. Խաչատուր վարդապետէ։ Վանիչ ներհակին...»

13. էջ 112—119. «Գանձ. Ճրագալուցի Ծն.։ Խընդութեան ձայն...»

ա. էջ 119—122. «Տէր Ներսէսի. Յորդորակ։ Այսօր երեւի...»

14. էջ 122—129. «Գանձ Ճրագալուցին. Յայտնութեան. ասացեալ Տէր Մխիթարայ։ Տարփումն ըղձալիան, տուչոր անձկական...»

ա. էջ 129—132. «Մեղեդի. անպաշտաւ։ Նոր ծաղիկ բղխէ այսօր...»

15. էջ 132—137. «Գանձ Ծննդեան տեառն։ Թագըդ պանծալի...»

ա. էջ 137—140. «Տաղ ի Սըրկայ Հըրձւիմք այսօր մեք...»

16. էջ 140—145. «Գանձ երկրորդ աւուր։ Մաքուր և անբիծ, սր. Աստուածածին...»

ա. էջ 145—147. «Տաղ ի տէր Ներսէսէ։ Տէր փառաց անճառ ծնեալ...»

բ. էջ 147—149. «Տաղ անուշ։ Աստուածածին մայր լուսոյ...»

17. էջ 149—153. «Բարոզ. երրորդ աւուրն. Յովաննու ծործորեցւոյ։ Յամենայն ժամ աւրհնեմք զաւրհնեալ փրկիչդ...»

18. էջ 153—155. «Տաղ ի Սրկէ Կոստանդէ։ Քրիստոս բանդ Հօր...»

ա. էջ 155—156. «Յորդորակ է Ով զարմանալի խորհուրդ, այս մեծ յայտնեալ...»

19. էջ 156—161. «Հինգ աւուր. Գանձ ի Խաչատուրէ։ Ինքն խորան Աստուածոյ բանին...»

ա. էջ 161—164. «Ի Սրկէ Կոստանդեայ Կայր կայծ ի յայրին...» Ամէն չորս տան հետ միասին(ին՞)։ Կրկնեալ առ նոսա կրթական մօրք...»

20. էջ 164—168. «Գանձ վեց աւուր ծննդեան Յանեղական, լուսոյն խոնարհեալ, յերկնից իջեալ...»

ա. 168—169. «Մեղեդի Սարկացոյն Պարագրի անպարագրելի...»

բ. էջ 169—173. «Տաղ ի նոյն Սարկացոյ։ Աւետիս մեծ խորհրդոյ...»

21. էջ 173-179. «Գանձ ութն (աւուրն)։ Խորան փառաց, Աստուածային բանին...»

ա. էջ 179—183. «Տաղ ի Սարկացոյ Աչքն ծով ի ծով ծիծաղ...»

Սոյն տաղ տպանուած է «Գրիգորէ յայտ անսպառն»

22. էջ 183—189 «Գանձ ութ աւուրն է։ Գովումն ըղձալին, գովեստ քաղցրագին...»

ա. էջ 189-190 «Յորդորակ. Տէր Ներսէսէ։ Սանդղոց մանկանց...»

23. էջ 190 194 «Գանձ. Յովհաննու Մեծապայծառ փառօք պանծալի, այսօր ցընծայ սբ. եկեղեցիս...»

ա. էջ 194—198 «Մեղեդի Սրկէ Կոստանդէ։ Ի գասըս հրեշտակաց...»

24. էջ 198—206 «Գանձ. (մի) Պետրոս հայրապետեան և Արիստակէսի Վերաւրհնեալ, գովեալ, վերնոցն սարոխալ...»

25. էջ 206—220 «Գանձ Սբ. Ճգնաւորացն։ Բարձրեալ աշխարհ բան հօր գիմաւոր. բաղձեալ հրաշոսըր...»

ա. էջ 218—220 «Տաղ Ճգնաւորացն։ Անտոն, Անտոն, սուտ անապատի, հաւրանց, լերանց, այրերանց...»

26. էջ 220—233 «Գանձ. Սբ Թագաւորացս Համապայծառ. Հօր սահման և բան. հոգւոյդ խնկական...»

27. էջ 233 - 246 «Գանձ. Հայրապետացն սրբոց։ Վերինէ քո(ւ)մն, վայելչականին...»

28. էջ 246—253 «Գանձ. Վաչնայ,

սաս։ Գծացեալ քոյին, արքայդ երկնային...»

29. էջ 253—259. «Գանձ. Սբ. Կիրակոս և մօրն։ Գերապայծառ որդիք երկնային...»

30. էջ 259—263. «Գանձ Տեառընդառաջին։ Միամնական որ. երրորդութիւն, բարեբանեալ...»

ա. էջ 263—267. «Տաղ Տեառընդառաջին։ Մանկալ տաճարն...»

բ. էջ 267—270. «Տաղ երեկուն սաս։ Քրիստոս փառաց թագաւորն...»

31. էջ 270—277. «Գանձ. Նրն. (Ոտանաւոր «Ի Գրիգորէ նուաստ ոգւոյ գծեալ բարտէզ թուխ գեղով...»)։ Գոյից կատարեալ...»

32 էջ 277—282 «Գանձ, սրբոյն Սարգսի և Մարտիրոսի։ Մեծապայծառ փառօք զարդարեալ...»

ա. էջ 282—283։ «Մեղեդի անդուշ։ Ի քէն աղէրսիւ հայցեմք...»

բ. էջ 283—284. «Յորդորակ. Զօրական զօրեղ փառօք...» (ոտանաւոր).

33 էջ 284—289. «Ի Գրիգորէ յառաջ եկի

Գանձս գրեցայ որ. Աղամի...»

«Գանձ, որ. Աղամի. Գեղապանծ լուսով, գեղազարդանչ գունով...»

34. էջ 289—296. «Գանձ Ոսկեանց և Սուքիասեանց։ Գանձ սիրոյ քոյին...»

ա. էջ 296—298. «Տաղ է։ Նրջանիկ հոգեհրաշ երանելին որ. Սուքիաս...»

35. էջ 298—312 «Գանձ. Թարգմանչացն Բարձրեալ, անքննելի. բնութեամբ լուսաւորեալ...»

36. էջ 312—321 «Գանձ. Ղեւոնդեանց և Վարդանանց։ Խրամատեալ, կանոն օրինի, հօր հաւանեալ...»

(էջ 320 այլ ձեռով մի գրութիւն)։

37. էջ 321—335 «Գանձ, որ. Հայր. Գ(ա)ժըլ։ Աստուած կենդանի, անիմանալի, անհասանելի...»

ա. էջ 333—335 «Տաղ. ի Ներսէսէ։ Խոստովանիմք Աստուած զհայր, անծին անեղ և անսկիզբն...»

38. էջ 335—348 «Նորին տեառն Մխիթարայ Այրիվանեցւոյ ասացեալ գանձ աղուհացիցն, կիրակէիցն (բուն բարեկենդանոյն)։ «Երգս յաւերժական, երգեմք բանական երիցդ միարան. ի նման անման...»։—

39. էջ 348—352 Գանձ չափաւորեալ

սակաւիկ

Ի Գրիգորէ ոգենուաստիկ

Գրեալ եղէ բանս աղքատիկ...»։

«Գանձ Թէոդոսի։ Գոհաբանեաց տէր որ. հոգի. նոր գրախտացուցիր զեկեղեցի...»

ա. էջ 352—353 «Մեղեդի. սաղ։ Խաղաղարարն որ թագաւոր, քո զինուորացն հօգևոր...»

40. էջ 354—358 «Գանձ յանառակորդ. Մկրտիչ (°)։ Մեծ և ահեղ, խորհուրդ տիրական...»

ա. էջ 358—359 «Տաղ ի տէր Ներսէսէ։ Արդ քեզ մեղայ, տէրդ երկնային, հայրդ գթով, որ. մածին...»

41. էջ 359—367. «Յովհաննու Գանձ. զոսկիեղբն. Չորրորդ կիրակէի, մեծ և Ղչ։ Մեծապայծառ խորհուրդ սոսկական...»

42. էջ 367—373 «Գանձ քառասնից։ Մեծ և հզօր, անմահից արքայ Յիսուս Քրիստոս աւրհնեալ յարակայ...»

ա. էջ 373—374 «Տաղ Քառասնից։ Քրիստոս փառաց թագաւոր. փառաւորեալդ ի զուարթնոց...»

43. էջ 374—379 «Գանձ երրորդ կիրակէի։ Մեծ և ահեղ խորհուրդ անքննին, որ գթացար յանդուգն սատաջին...»

44. էջ 379—387 «Գանձ Լուսաւորչին Գրիգորի։ Մեծ և հզօր, անմահից արքայ. Յիսուս Քրիստոս աւրհնեալ յարակայ...»

ա. էջ 387—389 «Մեղեդի։ Գրիգորիս սաարքնի հսկող...»

45. էջ 389—397 «Վեցերորդ կիրակի (աղուհացիցն)։ Այսօր զխորհ քո անձառելին, զոր մարգարէքն գուշակեցին...»

46 էջ 397—401 «Գանձ եմ աշորմ

և պիտանի

Բամբալ բանին անսխական

Ի Գրիգորէ մըստաւական

Գըրեալ զորկայ յաւետարան...»

«Գանձն Ղազարու։ Գոչումն ըղձական. գովասանական, գոհաբանական...»

ա. էջ 404—406 «Մեղեդի Ստեփաննոս վարդապետ։ Սըրբոց հրեշտակաց զարմանս հրաշից...»

47. էջ 406 412 «Գանձ, Արմաւե-

նեաց (Ծաղկազարդին)։ Համագոյական հօր սահման և բան...»

ա. էջ 412—414 «Մեղեդի ի տէր Ներսէսէ։ Տիրական տաւնիս այսօր եկայք ցընծացուք...»

բ. էջ 413—414 «Տաղ անոյշ։ Ներսէսէ։ Առա երրայեցւոց մանկունք զերգս քրոբէից առեալ...»

48. էջ 414—419 «Գանձ, երեկուն ասա։ Ի տաւնս տօնից. ի փառս հրաշից...»

49. էջ 419—430 «Գանձ. Ասաց երկու շաբաթ։ Գերագոյն էից. գերահրաշ գոյից, գերիմաստ վեհից...»

50. էջ 430—438 «Գանձ. Ասաց երեքշաբթի։ Գործ արարչական, գերահրաշական. գըթով գոյացան...»

ա. էջ 437—438 «Տաղ է անոյշ։ Քեզ ով տէր Յիսուս ձայնեմ...»

51. էջ 438—447 Գանձ, Ասաց Չորեքշաբթի։ Մեծ և անճառ, խորհուրդն ահագին, որ հայր ծածկեալ...»

ա. էջ 444—447 «Տաղ ի Ներսէսէ։ Որ կոչեցիր ազգմամբ ձայնին ըղ նախապետս բարւոյ ազգին...»

52. էջ 447—453 «Ասաց Հինգշաբթի։ Ոտնալուային։ Գանձըս ոտնալուին սաս Ջահեղ զանքենին, զխորհուրդս խորին...»

53. էջ 453—458 «Ասաց Հինգշաբթի, առաւօտին։ Որք որ փափուքին. ուսել զայն մարմին...»

ա. էջ 458—459 «Տաղ ասա։ Փառաց թագաւորն այն որ նստի ընդ հօր...»

54. էջ 459—465 «Գանձ, ի Մատթէոսէ, ասաց Ուրբաթի։ Ի յանմարմնական յանձանց բանական...»

ա. էջ 465 -471 «Տաղ ասաց Ուրբաթին։ Չարչարեցան զօրացն, երկնաւորաց խըմբից...»

բ. էջ 466 - 471 «Առաւօտու հատորն է, ցերեկի սաս։ Որ կատարեալ. մարգարէացեալ զԴաւիթն որ ասեալ...»

55. էջ 471—474 «Տաղ ի տէր Ներսէսէ։ Աստուածածին սրբուհին, ամենօրհնեալ տիրուհին...»

56. էջ 474—481 «Գանձ, Թաղման, շաբաթ աւուր։ Խորհուրդ հանգստեան. եօթներորդին ըստ գրեցելոյ...»

ա. էջ 481—483 «Տաղ գեղեցկայարմար Այսաւր է շաբաթ և լուսթիւն հանգիստ...»

57. էջ 483—488 «Գանձ, Ասաց զատկին. կիրակի։ Մարդասիրութեամբ, որդիդ միածին...»

ա. 488—489 «Մեղեդի ի տէր Ներսէսէ։ Նոր թիւ աւետեաց բարբառ նորաշուրջ ձայնիւ...»

59. էջ 489—497 «Երկուշաբթի. Ի տէր Մխիթար վարդապետ(է՞)։ Տէր տէրունական, տըւող տիրական...»

ա. էջ 497—498 «Մեղեդի, անոյշ Նարկ։ Նա ձայն զարիւծոյն ասեմ, որ գոչէր ի բառաթևքին...»

բ. էջ 499—500 «Յորդորակ է։ Այսօր աւետիս, ձեզ նշխեցելոցդ...»

60. էջ 500—506 «Գանձ. յարութեան, Երրորդ աւագն։ Արդ լուսաւորեա, արդ փառաւորեա...։»

ա. 506 - 507 «Մեղեդի անոյշ, յարութեան։ Հաւուն, հաւուն արդընացեալ, գիտելով զհետմանսս...»

բ. 507—509 «Տաղ անոյշ։ Յարուցեալ. յերրորդ աւուր. առաւօտուն ձայնեաց հրեշտակն...»

61. էջ 509—517 «Գանձ, յարութեան Խչստր. (դ. յարութեան)։ Խորհուրդ հրաւիրման, կամաց արարչի, հօրդ երկնաւորի...»

62. էջ 517—522 «Գանձ. յարութեան (հինգերորդ աւուր)։ Մեծապայծառ ձայնիւ ցնծալի...»

63. էջ 522—527 «Գանձ. յարութեան, Ս՛կըրտիչ ասաց։ ...» ու ահեղ, խորհուրդ սոսկալի, այսօր ցուցաւ...»

ա. էջ 527 - 529 «Տաղ անոյշ ասա։ Նկեալ Մարիամ. Մագդաղենին, յայն յառաւօտին, միաշաբաթին...»

64. էջ 529—536 «Գթութեամբ Աստուծոյ որդոյն

Բանից գոյից ստեղծող լուսոյն
Ի Գրիգորէ մեղացելոյն
Գանձս գրեցայ նոր կիրակոյն...»

«Գանձ նոր կիրակոյն։ Գաղտնի խորհըրդին. գուշակեալ ի հին գունդ մարգարէին...»

ա. էջ 536—541 «Տաղ է, անոյշ ասա։ Այսօր նոր արև հարեալ...»

65. էջ 541—548 «Գանձ եմ անարժ և պիտանի
Բամեալ գըրչաւ ի շարադրի
Ի յաղօթողի կարօտ ելի
Գինիս Համեղ և գովելի... ևն
Նոյն Գրիգորի տաղերն են։
«Գանձ, կիրակէի յարութեան ասա։ Գերակայ, գոյին գոյից Համայնին, գոլ պատճառ էին...»

66. էջ 548—572 «Գանձըս գրեցի,
կիրակ մտիս
Բամաւեանեաց սբ. գիշերի
Ի Գրիգորէ մեղապարտէ...»
«Գանձ Հասարակ։ Գերամբարձ Աստուած, գովեալդ ի զօրաց, գնդից Հրեշտակաց...»

67. էջ 572—578. «Գանձ, Համբարձման Յիսուսի։ Մեծապայծառ տօնիս, աՀագին եկեղեցիք սուրբ պայծառացին...»

68. էջ 578—583. «Գանձ. Մեծահրաշին ասա։ Միակդ աՀաւոր, տէր և զաւրաւոր, Հաւր քոյ մեղաւոր...»

69. էջ 583—591. «Գանձ, Հոգւոյ գալստեան։ Վեր աւրՀնեալ, գովեալ և փառաւորեալ, Աստուած գաւանեալ...»

70. էջ 591—595. «Կանոն երկրորդ աւուրն։ Մեծ և Հըզօր Հոգի Աստուծոյ, անտես մըտաց, անՀաս խորՀրդոց...»

71. էջ 595—599 «Կանոն երրորդ աւուր։ Մեծապայծառ լոյսն արտափայլեալ, Հոգին Աստուած առ մեզ խոնարՀեալ...»

72. էջ 599—610 «Սրբոց Հռիփսիմեանց։ Վայելչականաց, վայելման փառաց, վերնապար կառաց...»

73. էջ 610—616 «Գանձ, Շողակաթին եկեղեցոյ։ Տաճար երկնային, տուն Քրիստոսային, տեղի անմաՀին...»

ա. էջ 616 «Տաղ էջմիածնին։ Սուրբ է տաճար...»

74. էջ 616—621 «Գանձ, սուրբ մանկանց ի Բեթղեհէմի։ Խանդաղակաթ, սըրտիւ անձկալի, ձեզ տաւնեսցուք...»

ա. էջ 621—623 «Տաղ։ Արթունք, զուարթունք, բանին բանաւոր ծնունդք...»

75. էջ 623—630 «Թոռանց և որդւոց Լուսաւորչին։ Նոր թագ պետական, նոր գաՀան նըման, նոր քեզ Հարսնարան...»

76. էջ 630—641 «Գանձ, մարգարէից։ ԽորՀուրդ անքննին...»

77. էջ 641—645 «Գանձ Կաթողիկոսին։ ...՞ և առեր մարմին. զմարդիկս երկրային...»

ա. էջ 645—647 «Տաղ ի Գրիգորէ։ Եկայք ողբասցուք, եղբարք, զշարութիւն ազգի Նետողացն...»

78. էջ 647—651 «Գանձ Տապանակին։ Մաքուր տաճար, սուրբ տէրունական, աստուածընկալ լուսեղէն խորան...»

ա. էջ 651—652 «Տաղ եկեղեցւոյ։ Մայր Հաւատոյ սուրբ Հարսնարան...»

79. էջ 652—657 «Գանձ Վարդավառի։ Մեծ և աՀեղ խորՀուրդ յայտնեալ բարձրեալ Աստուած...

ա. էջ 657—659 «Տաղ ի Ներսէս։ Տէր փառաց, այսօր յայտնեաց ի Թաբոր զփառս, ուրախացան տեսլեամբ...

80. էջ 659—670 «Վարդավառին, ի Ներսէս վարդապետէ։ Նախախնամող Աստուած յայտնեցար...

81. էջ 670—678 «Գանձ փոխման Աստուածածնին։ Մեծապայծառ Հրաշակերպ վեՀ տեսլեամբն աՀագին սուառնացեալ...

82. էջ 678—683 «Նաւակատեաց եկեղեցւոյ։ Մեծապայծառ փայլմամբ, իբր ըզքրոց գեղազարդեալ...

ա. էջ 683—684 «Մեղեդի եկեղեցւոյ։ Քրիստոս եկեալ բաՀանայապետն սուրբ, ի քեզ մտանէ...»

83. էջ 684—690 «Գանձ Սուրբ Խաչին։ Թըկուր- աւէ։ Ցեզեմական դրախտին փափկութեան...

84. էջ 690—703 «Գանձ Վարագայ Սուրբ Խաչին, ի Ներսէս վարդապետէ։ Նշան, աւրՀնեալ և փառաւորեալ...

ա. 703—705 «Տաղ Վարագայ Սուրբ Խաչին, ասա անոյշ։ Ամփոփեալ զնշան խաչին, ի Վասպուրական երկրին...

85. էջ 705—711 «Գանձ, Գէորգեայ զօրավարին Խաչատուր վարդապետէ։ Խընդա Հրաւէր, մանկունք սիոնի...»

86. էջ 711—717 «Խաչ Գիւտին։ Խաչի քո Քրիստոս երկիրպագանեմք...

87. էջ 717—722 Գանձ Կուսանացն։ Իսկզբան էիդ, բանիդ ի լուսիդ...

88. էջ 722—727 «Գանձ Մարտիրոսաց։ Մեծապայծառ փառօք զարդարեալ,

եկեղեցիք պայծառազգեցեալ...»

89. էջ 727—734 «Գանձ Հրեշտակապետացն, Գաբրիէլի և Միքայէլի։ Մեծ և աՀեղ խորհուրդ Հրաշական...»

ա. էջ 734—735 *Տաղ ի Ներսեսէ*։ Զօրք երկնային զուարթնոց, դասք Հրեշտակաց անմարմնոյ...»

90. էջ 735—744 «Գանձ Ձեռնադրութեան։ Գըթայ 'ի մեզ, տէր ամենակալ, և լոյս բնութեանս...»

91. էջ 744—749 «Գանձ Մարտիրոսաց։ Մեծապայծառ փառօք զարդարեալ, եկեղեցի պայծառազգեցեալ...

92. էջ 749—752 «Գանձ ապաշխարութեան։ Մեղայ տէր մեղայ, պարտաւորեցայ, մեղաւոր գըտայ...

1. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 752—736. Փառք ամենասուրբ երրորդութեան Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Որ եա կարողութիւն մեղամած և տկար ոգւոյ *Մխիթար գրչի*. Հասանիլ յաւարտ սորայ։ Յամին ՉՀԴ թուականիս մերում, որ գրեցաւ ի խնդրոյ պատուական *տանուտիրոջն* Մկրտչի, որ ստացաւ զլուսազարդ տառս ի յիշատակ բարի իւր և ծնողաց իւրոց, Հօրն՝ Մարտիրոս բրուտին և մօրն՝ Թուխթակին. և եղբօր Կիրակոսին և քուերցն՝ Գուհար ապաշխարողին և Մարգրտին և իւր ազգայոցն. Սարգսին և Բէկուն և Շամամին։ Քրիստոս Աստուած յորժամ գաս ի դատաստան, քաղցր ձայնիւ կոչեա զՄկրտիչն, և զծնողսն իւր և զաւակս իւր, զՄարտիրոս և զԹուրվանդայ. և տէր Աստուած ողորմի Մխիթարէն և Հօր Խնկայ և Թակուհոյ, և կենակցին իւրոյ Շնոհորին և զաւակին իւրոյ Սաղաթին, և Թումային, և եղբօր Խաչկայ տէր Աստուած Յիսուս Քրիստոս տայ զիւր արքայութիւն նոցա. լսել տայ զերանաւէտ ձայն նոցա, ամէն։ Դարձեալ կողկողագին պաղատանօք աղաչեմ զամենեսեանդ, յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զիս զբազմամեղս զատարկս ի բարեաց գործոց, Մխիթար Գրիչ, և զՀայրն իմ զՅոհաննէս քահանայ, և զմայրն իմ զՄարթայ։ Եւ զեղբայրն իմ զԳրիգոր քահանայ. և զաւակս իւր զԿարապետ սարկաւագն և զՀայրիկոյ սարկաւագն և զՀաթուշէկն և լի բերանով Աստուած ողորմի ասացէք. սոցա, ամէն եղիցի։ Նա դարձեալ կրկին մաղթանօք, աղաչեմք, ձեռս Համբառնալով ասասջիք. Քրիստոս Աստուած, յորժամ գաս Հայրենի փառօք քո, քաղցր բարբառով կոչեա ի յարքայութեան քում զՄխիթար Գրիչն, և զաւակս իւր զՅովանէս սարկաւագն և զՍտեփանոս սարկաւագն, որ փոխեցաւ առ Աստուած, և զՄկրտիչն և և զԿարապետն, և զՍարգիս և զՅոհաննէս և զԱստնէթն. և զկողակից իւր զՇայրբերման, և զՀօրեղբայրն իմ զՍտեփանոս քահանայ և զաւակս իւր, զԳրիգոր քահանայ, և զՄկրտիչ քահանայ և զմիւս Հօրեղբայրն իմ զԱռաքել քահանայ և զԹումայ քահանայ, զՅովհաննէս և զԿարապետն զամենայն արեան մերձաւորքս մեր, և զմեծ պապն զԱստուածատուր քահանայ և զԹումայ քահանայ, և զԱսոմ քահանայ. զվարպետն մեր և զամենայն արեան մերձաւորքս մեր ամէն, եղիցի։

Ես *Մկրտիչս* ետու զԱստուածային պայծառ գանձարանս *Մխիթար* քահանայիս և իւր որդոցն ի *Բռնաշէնայ*, ժամանեալ կենաց յիշատակ ինձ և ծնողաց իմոց, Հօրն Մարտիրոսին և մօրն Թուխթանկին, և եղբօր Կիրակոսին և քուերց Գուհարին, և Մարգրտին և քեռուն Մխիթարին, և ամենայն արեան մերձաւորացն, կենդանեաց. Հանգուցելոցն, ամէն, եղիցի։ Արդ՝ զամենեսեանդ աղաչեմ ես Մկրտիչ զմեծն, զփոքր, զայր և զկին, և որ յանգգնի գողանալով կամ ծախելով կամ գրաւ դնելով կամ յանօրինաց մատնելով, նա զանէծքն Կայենին և զմատն զՅուդային և զխաչաՀանողացն առցէ ամէն, եղիցի, եղիցի։

2. էջ 736. (Նօտրագիր յետին գրչի ձեռօք) *Ցեսայեայ* անարժանս յիշեցէք ի Քրիստոս, ով մանկունք սուրբ եկեղեցւոյ Նաայեան *Տաթեւացի* մեղօք մեռեալ գաղբալի, գործով թափուր և եղկելի. գրեցաւ այս նաւարս թվին ՌՀ (1070+551)=1621.

## 3

## ՄԱՇՏՈՑ

**ՄՆԾՈՒԹԻՒՆ** 18×15,5 *սմ։*—**ԿԱԶՄ** *տախտակեայ հին կաշեկազմ։* - **ՎԻՃԱԿ** *վատ, մեւացած, շատ տեղ անընթեռնլի։* —**ՆԻՒԹ** *թուղթ ալինդ, հաստ եւ հարթ.* —**ԹԵՐԹ** 98։ —**ԴԱՏԱՐԿ** *էջ* 2։ —**ՏՈՂ** 18—19։ —**ԳԻՐ** *անվարժ բոլորագիր։*— **ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐՆԵՐ** *եւ* **ՍԿԶԲՆԱԳԻՐՆԵՐ** *կարմիր։*—**ԽՈՐԱՆԱԶԱՐԴ** *էջ* 3. *թանարով խզբզած. գծերի մէջ նոտրագիր այլ ձեռքով «Զաքարի(ա)յ վա(ր)դ(ա)պետ թվին* **ՌՃԻԸ**։—**ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ** *մի քանի հատ, անշուք։*—**ԹՈՒԱԿԱՆ ՌՃԻԵ** =1676։—**ԳՐԻՉ** *Ծուլոյենց Յակոբ։*—**ՏԵՂ** *Տրպխիզ։* **ՅՈՒՇԱՏԱԿԱՐԱՆ** *էջ* 19... 3։ **ՅԵՂԽՈՒԹԻՒՆ** *կազմի մէջքի թերթի վրայ գրըւած է «Զաքարիայ վրդպտ». էջ* 1 *վրացերէն. էջ* 196 *վրացերէն հայոց տառերով։ Էջ* 194 *մի, էջ* 2 *չորս կնքադրոշմ «Ն. հոգ. դպրոցի» մատենադարանի. եւ մի այլ աւելի մեծ անծանօթ կնքադրոշմ։ Էջ* 8 «290 *համար»։*

**Մ ա տ ե ա ն ս  է  Մ ա շ տ ո ց**

1. էջ 3—22. Կանոն Մկրտութեան. կնունքի։
2. էջ 22—34. Կ. հարսանեաց. պսակ։
3. էջ 34—39. Կ. հաղորդ. տալոյ։
4. էջ 40—60. Թաղումն։
5. էջ 61—69. Կ. բ. աւուրն Այգելաց։
6. էջ 69—84. Կ. Տղայթաղքին
7. էջ 84—88 Կ. այգոյն. Տղաթաղ այգելոյ։
8. էջ 88—95. Կ. հոգեհանգիստ տանելոյ (էջ 94 օրհնութիւն աղի)։
9. էջ 95—103. Կանոն Ննջեցելոց։
10. էջ 103—112. Կ. տնական։
11. էջ 112—133. Կ. ջուր աւրհնելոյ։
12. էջ 133—137. Կ. Խաչալուայ տանելոյ։
13. էջ 138—161. Կ. Խաչ աւրհնելոյ. խաչաւրհնէնք։
14. էջ 162—181. Կ. ոտնալուայի։
15. էջ 181—190. Կ. քարոզ պապատուիրանին. «Զոր զեկուցանէ քահանան ժողովրդեանն նախ քան զսկիզբն խորհրդեանն»։
16. էջ 190—192. (Վերջը պակաս). «Գիրք Հռոմայ մեծ եկեղեցւոյն և խրատ և քարոզ աստուածային պատուիրանացն։ Այս է հրաման Աստուծոյ... ևն
17. էջ 193—195. (Սկիզբը պակաս, թերթ է դուրս ընկած) Ցերեկ քան զերեկ էի մարմնով վա՜ն աական | այսօր հանեն զիս տանէս իմ յօթեան... ևն.

**ՅՈՒՇԱՏԱԿԱՐԱՆ** էջ 195.

Ես մեղապարտ *Ծուլոյենց Յակոբս* գրեցի խմայրաքաղաքն *Տրպխիզ*, ի դուռն *Ողաւներու սբ. կիրակէին թվին* **ՌՃԻԵ** մարտ ամսոյ ԺԴ։ Շահնազարեանն որ գոնմիշ էլաւ։

## 4.

## ԱՂՕԹԱԳԻՐՔ

**ՄՆԾՈՒԹԻՒՆ** 18×10.7 *սմ։*—**ԿԱԶՄ** *թղթակազմ, խամ՝ լաթով պատած։*—**ՎԻՃԱԿ** *լաւ։*—**ՆԻՒԹ** *թուղթ, կապոյտ, ալինդ եւ անհարթ. էջ* 33—44 *կապտաւուն։*—**ԹԵՐԹ** 78։—**ԴԱՏԱՐԿ** *մի թերթ էջ* 12-*ից յետոյ, որն եւ առանց համարի է։*—**ՏՈՂ** 20։—**ԳԻՐ** *Նոտրագիր միասին* 13.5×8 *սմ։*—**ԼՈՒՍԱՆՑՔՈՒՄ** *տեղտեղ պակասն յաւելցրած. եւ աղօթքների աղբիւրները նշանակուած։*—**ԹՈՒԱԿԱՆ** *ԺԹ՞ դար։*—**ԳՐԻՉ**

Մինաս Սաղաթըէլեան Կամսարական։ —ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ տեղ է ծառայում էջ 1—12 «Աղերսանքը», որ բացադրում է գրքիս յօրինելու պատճառը։— ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ Առաջին կողքի ներսի կողմի տպագրուած տոմսի վրայ կայ «Աղէքսանդր Թայիրեան Ղազարեան»։

**Մատեանս է Աղօթագիրք**

«Գիրք աղօթից՝ ժողովեալ ի սրբոց մատենից Աստուածայնոց և սահմանեալ յաղագս քրիստոնեայ եղբարց ի յամենայն վշտակիր՝ ապերջանիկ և նուաստագունեալ Մինասայ Սաղաթըէլեան Կամսարականի որ և մէկէք կոչեցելոյ Արշարունեաց (Նախնեացն մերոց ժառանգութեան և սեպհական) գաւառի որպարտեան երկրին Երեւանու ի Հայաստան աշխարհի։

1. էջ 1—12. «Աղերսանք։ Գիրք աղօթից՝ ժողովեալ...։ Քանզի յայտնի իսկ է...», որ հեղինակը բացադրում է իւրև գրքիս յառաջադրանի մէջ մատեանս յօրինելու պատճառը։

2. էջ 12—158. «Անուն հօր...։ Օրհնեալ տէր մեր և փրկիչ... Հայր մեր... Տէր եթէ զշուրթունս... Են աղօթքներ նախերկից, Սաղմոսից, հին կտակարանից առահաստրակ։

## 5.

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 21,5×15 սմ։—ԿԱԶՄ, թղթեայ կաշեպատ. կազմի երկու կողքի դրսի երեսները դժգոյն երփներանգ թղթով ծածկուած։—ՎԻՃԱԿ լաւ եւ մաքուր։—ՆԻՒԹ թուղթ, բարակ, սպիտ եւ հարթ։—ԹԵՐԹ 52։—ԴԱՍՏԱՐԿ էջ I. II. 2. 5 մի մասը, 6—8. 105—106։—ՏՈՂ 36։—ԳԻՐ մանր նոտրագիր. բացի էջ 3—5 եւ 9 երկսիւն, խորագրաչիբը 17×4.7 սմ.։—ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐՆԵՐ, ՍԿԶԲՆԱԳԻՐՆԵՐ կարմիր։—ԹՈՒԱԿԱՆ ՌՄԿԹ=1820։—ԳՐԻՉ նոտար Սարգիս կօշկակար Փօղոսեան—ՏԵՂ Կարին—ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 1 գրչի եւ 104 բ. սփնակ։—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ էջ 1 եւ 106 «Ներսեսեան հոգեւոր դպրանոցի» մատենադարանի կնքադրոշմը. էջ I. «Մեկնութիւն եկեղեցւոյ № 96». էջ 1 մի քանի տողի վրայ վարից թուղթ է կպցրած։

**Մատեանս է**

Կարճառօտ մեկնութիւն կաթուղիկէ եկեղեցւոյն արտաքանեալ յաստուածաշունչ գրոց...։ Աշխատութեամբ և ջանիւք Կոստանդնուպօլսոյ դպրի միոյ ի դիտապետութեան իմաստնափառ և սրբազան Աղէքսանդր կաթուղիկոսին. ծախիւք և տիեզերական Եպիսկոպոսապետին ամենայն Հայոց ի թուին Փրկչին 1707 և ի Հայոց ՌՃԾԶ. ի Փարէզ քաղաքն Ֆրանկաց և հայոց։

1. էջ. 3—5 Հեղինակի յառաջաբանը «Երանի խաղաղարարաց զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին Աւէ կենդանի. Փրկիչն մեր Քրիստոս։—«Անհնարին աղէտք և անհընարին...»

2. էջ 9—39. «Այժմ եկեսցուք ի մեկնութիւն կաթուղիկէ եկեղեցւոյն։ Եկեղեցի է Հոռոմոց բարբառ և թարգմանի ժողովուրդ. տաճկերէն ճեմայէթ և ի մէջ ուսուցանողի չ նշանակութիւնս ունի նախ և առաջին նշանակէ...»

3. էջ 39—40 «Համառօտ Նիկիոյ ժողովոյն այս է Համառօտ իմն Աստուած...։»

4. էջ 40—46 «Համառօտ Կ. Պօլսոյ ժողովոյն այս է Համառօտ իմն Աստուած...։» Սրանց հետ շարունակում է հեղինակը իւր դիտողութիւնները հանգանակների մասին։

Հեղինակը բացադրում է եկեղեցու խորհրդութիւնը փոխադրած անուններով՝ չուզում բարբարոս լինել և ուզում է որքեզ ինչ փրկութեան հնարքը... անուանելի գաղթազգութեանց։ Ճշմարիտ ասելու թէ որ ինձ թէ լուրջ եւ զգերկ՝ թէ ննջեմ և թէ յառնեմ, թէ նստեմ եւ թէ շրջեմ, հանապազ աչքերիս եւ առաջի ձայն մի հնչէ յականջս իմ անդադար թէ՝ բարձէք

գրարենս գայթագղութեան ի ճանապարհս ու-
խտորաց իմոց:... Եւ այն բարձ է անգիտութիւն ճշմարիտ նշանակութեան կաթուղիկէ եկեղե-
ցւոյ":

Ապա ընթերցողներին յայտնում է, "նախ եւ առաջ մեկոյ հոգեմ զՏէառնածն, եւ զայս մեկնութիւնս տարի, ոչ վասն հաճելոյ Երիպղսճակաց, այլ վասն... եւ վասն յայտնելոյ ճշմարտութիւն ի պէտս խաղաղութեան Եկեղեցեաց սուրբ եկեղեցւոյ" եւ վերջն աւելացնում է "խոստովան լինեմ անկեղծ սրտիւ առաջի Աստուծոյ եւ մարդկան, որ ես զայն մեկնութիւն գնեմ ներքոյ դատողութեան Հայրապետին իմոյ Կաթուղիկոսին Էջմիածնայ, եւ պատրիարքին իմոյ Կ. Պոլսոյ..."

5. էջ 46 «Պատասխանի առ քանի մի հարցմունս Կոստանդնուպօլսեցի եղբարց, ի վերայ առաջագրի մեկնութեան կաթուղիկէ եկեղեցւոյն։ Ընդհանրական։ Յուղարկելի է օրինակ մի այս վերջիշեալ մեկնութեանս ի Կոստանդնուպօլիս. և քանի մի եղբարք ի համշիրակաց իմոց տարեալ են ի վերայ նորա զքանի մի հարցմունս։ Որոց արժան է այժմ պատասխանել։

ա. 46 – 47 Հարցմունք ա. «Եթէ չէայ մեա՛ որ երկաբնակաց եկեղեցիքն բ. բնութիւն ասեն ի Քրիստոս, որպէս ուսուցանէ մեկնութիւն քո, ապա վասն էր հայրապետք նզովեցին զերկաբնակսն»։ Ապա եռևւում է պատասխանն ինչպէս և հետևեալ հարցմունքներին։

բ. 47 – 51. Հարցմունք երկրորդ։ (Լուսանցքում) Մեք ասաք զբաղում վարդապետս Լատինացւոց, որ ունէին զաղանդ հերձուածող երկաբնակաց։ Ապա վասն էր ուղղափառ ասեն զեկեղեցին Լատինացւոց։

գ. 61 – 64 Հարցմունք երրորդ «Լատինացւոց եկեղեցին ոչ հարկաւոր համարէ ժողովրդականաց իւրոց հաղորդութեան արեան Քրիստոսի, ուրեմն որպէս ասես եկեղեցին նոցա ուղղափառ, և ոչ հերձուածող։

դ. 54 Հարցում չորրորդ «Տէրն մեր Յիսուս Քրիստոս, և ճշմարտութեան հոգին սուրբ հրամայեցին հաղորդել զամենայն հաւատացեալս ի խորհրդական մարմնոյ և յարենէն Քրիստոսի, ապա Լատինացւոց եկեղեցին որպէս կարէ լինել ժողովուրդ Քրիստոսի, մինչ ոչ հնազանդի աստուածային հրամանիս»

ե. 55—70 Հարցմունք հինգերորդ. «Լատինացւոց եկեղեցին իբրև զուրբս պատուէ զՆեռն, և զՓլորիանոսն, և զԹովմաս Ագուինացին, որոց գրեանքն լի են մոլորութեամբ ի վերայ հաւատոյն Քրիստոսի. ուրեմն որպէս կարէ եկեղեցին նոցա ուղղափառ լինել։

զ. 70 — 80 Հարցմունք վեցերորդ «Իսկ թէ այդպէս է, ուրեմն վասն էր եկեղեցին մեր ուրացող և անօրէն անուանէ զքաղկեդոնի ժողովն ի մէջ Ով հրաշալեացն։

Այս հարցման պատասխանի շարունակութիւնն է կազմում իսկապէս էջ 81—87 «Իբաս վերատեսչին թուղթ գրեալ առ Մարաս պարսիկն, յետ առաջաբանութեանն։ Սկիզբն է։ «Իսկ զամենայն որ ինչ յառաջմանէ...»

6. էջ 88—100 «Նոր ապացոյց անյաղթելի վասն մերոյ բնութեան Քրիստոսի գրեալ ի Դէորգէ, Աստուծոյ անյաղթելի վարդապետէ Կոստանդնուպօլսեցւոյ, ի փառս Աստուծոյ, ի հաստատութիւն ճշմարտութեան» սկսւում է «Անօթն ընտրութեան ու վարդապետն հեթանոսաց...»

7. էջ 101—104. «Վասն մեկնչաց աստուածային գրոց ի մերոց վարդապետաց, թէ ով ոք զինչ է արարեալ։ Որք են սոքա» (Հետաքրքիր է)։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ. 104 «Ընծայեցաւ մեկնութեան գրքոյկս առ վայելման ճգնաւորեաց ասն հոգեւորի Նորընծայ Յակոբայ վարդապետի և ձեռնասուն աշակերտի Տեառն Յովհաննու սրբազան արքեպիսկոպոսի և սրբոյ մենաստանին Աստուածածնի Կարմիր կոչեցելոյ՝ ծայրագոյն վերատեսչին ի Մովսէս մանկավարժէ և յաշակերտէ նորին ձեռնասնոյ Սարգիս նոտարէ, սակս վայելողի սորին Նարգենիս յիշեալ Յակոբ վարդապետին, մաղթեսցուք առ բարձրեալն Աստուած զի բարեխօսութեամբ մօր իւրոյ անարատի և միշտ կուսի ծաղկեցուսցէ զգաւազան վարդապետական իշխանութեան ի միսիթարութիւն մեզ՝ և համայն մերայնէից։ Եւ իւրոյ ճգնողական երջանիկ վարուքն հետևելով առ այս ցանկալի բանիս և մտանելով 'ի պարտէզ սորին՝ հաւաքելով զփունջս ծաղկանց հոտաւէտաց՝ սրփ-

ռեսցէ ի բիմս և ի միոս ժողովրդականացս արամազնեից. որովք բերկրեալ լսօղին առ. նողքն և պաշօղքն փառաւորեսցեն անդադար զամենասուրբ գերրորդութիւն յաւիտեանս յաւիտենից ամէն։ ՌՄՀԵ յուլիս իը.=1826։

Նուաստ ծառայ Մովսէս Կիրակոսեան գործավար Կարմիր վանից։ Նուաստ ծառայ Սարգիս կոչեցեալ Պօղոսեան.

(Անշուշտ նոյն Սարգիսն է, որը վերևնոտար է կոչում։)

## 6.

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ 21×15 սմ — ԿԱԶՄ տախտակեայ, հին կաշեկազմ, մի կաշեայ կապելիքով:—ՎԻՃԱԿ լաւ: —ՆԻՒԹ Թուղթ բարակ եւ հարթ:—ԹԵՐԹ 579:—ԴԱՏԱՐԿ էջ 1—4. 1161—1162: էջ 475-ի վրայ սխալմամբ գրուած է 479:—ՏՈՂ 25:—ԳԻՐ Նոտրագիր երկսիւն, խորանչիւրը 15×4,5 սմ.—ԽՈՐԱԳԻՐՆԵՐ, ՎԵՐՆԱԳԻՐՆԵՐ եւ ՍԿԶԲՆԱԳԻՐՆԵՐ կարմրալ եւ զարդագիրներ, թռչնագիրներ, կենդանագիրներ, դիմագիրներ եւն:—Կան բազմաթիւ մեծ ու փոքր կարմիր ԽՈՐԱՆԱԶԱՐԴՆԵՐ եւ ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՆԵՐ։—ԹՈՒԱԿԱՆ 1207=1758: —ՏԵՂ Հիլալէ քաղաք:—ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 3. 4:—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ էջ 3 եւ 1162 «Ներս. հոգ. դպրանոցի» մատենադարանի կնքադրոշմը. վերջում աւետարանի մագաղաթեայ մի թերթ միջին երկաթագրով: Կազմի մէջքին կպցրած թերթիկի վրայ գրուած է «Մեկնութիւն Փերթումեան Պետրոս վրդպտի № 193:»

### Մատեանս է Մեկնութիւն

1. էջ 5—20 «Առաջաբան Պօղոսի առաքելոյ, նախակարգեալ ի գլուխ գրոց։ Ընդ ուսումնասէր և փոյթ ընդ քոյոյ սիրոյդ զարմացեալ...»

2. էջ 20—49 «Վկայութիւնք Պօղոսի առաքելոյն Առ Ներոնի. կայսերբ Հռոմայեցւոց վկայեաց...»

3. էջ 53—70 «Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսի և սուրբ հօրն Եփրեմի Խուրին Ասորւոյ. Համառօտ մեկնութիւն թըղթոց առաքելոյն Պաւղոսի Դ․երժ․ներրորդի հաւաքեալ ի մի ստուգաբանական վարդապետացն մերոց։ Արդ այսպէս իմանալի է մեզ վասն զի աշակերտք փրկչին մերոյ...»

### Ա. ՈՍԿԵԲԵՐԱՆ

4. էջ 71—114 «Պաւղոս ծառայ Քրիստոսի, կոչեցեալ առաքեալ որոշեալ...»

5. էջ 114—147 «Ը. թերցուած Ն. գլ. Ե. (այսուհետև նշանակուած է նոր գրչով)։ Այսուհետև արդարացեալ ի հաւատոց անտի...»

* Ընթ. էջ 121—127 գլ. Զ։ էջ 127—134 գլ. Է։ էջ 134—147 գլ. Ը։

6. էջ 147—168 «Ընթերցուածն Գ. գլ. Թ.։ Ճշմարտութեամբ ասեմք ի Քրիստոս և ոչ ստեմ, վկայէ ինձ...»

* էջ 156—160 գլ. Ժ։ էջ 160—168 գլ. ԺԱ։

7. էջ 168—189 «Ընթերցուածն չորս Գլ. ԺԲ։ Աղաչեմ զձեզ եղբարքն, գթութեամբն Աստուծոյ...»

* գլ. ԺԳ. էջ 176—182։ Գլ. ԺԳ. էջ 182—189։

8. էջ 189—205 «Ընթերցուած Ե. գլ. ԺԵ. Պարտէ մեզ, որ կարողքս եմք զտկարութիւն տկարացն բառնալ...»

9 էջ 205—213 «Առ Կորընթացիս իբրև եհաս աւետարանն ի ձեռն Պօղոսի և ընկալան զհոգին...»

*) Ընթերցուածների տակ նշանակեցինք այն գլուխները, որոնք կարմիր թանաքով են միւս գլուխների նման, բայց խորանազարդով չեն որոշուած։

10. էջ 213—254 Կորընթացւ. գլ. ա: Պաւղոս կոչեցեալ առաքեալ Յիսուսի Քրիստոսի...»

* Գլ. բ. էջ 226—231: Գլ. գ. 231 236: Գլ. դ. էջ 236—243: Գլ. ե. էջ 243—247: Գլ. զ. էջ 247—254:

11. էջ 255—264 «Ընթերցուած Բ. գլ. է: Այլ վասն որոց գրեցէք առ իս,...»

12. էջ 264—305 «Ընթերցուածն երրորդ. Գլ. ը: Այլ վասն զոհի կռոց գիտեմք...»

* Գլ. թ. էջ 269—280: Գլ. ժ. էջ 280—292: Գլ. ժա. էջ. 293—305:

13. էջ 305—326 «Ընթերցուած Դ. գլ. ժբ. Այլ վասն հոգեւորացն, եղբարք, ոչ կամիմ եթէ տգէտք իցէք...»

* գլ. ժգ. էջ 315—316. գլ. ժդ. էջ 316—326:

14. էջ 326—358 «Ընթերցուած Ե. գլ. ժե: Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարան իմ, զոր աւետարանեցի ձեզ...»

* գլ. ժզ. էջ 352—358:

15. էջ 1130—1136 «Յովհաննու Ոսկեբերանի պատճառք թղթոյն Փիլիմոնի: Նախ կարեւոր համարիմ...»

16. էջ 1136—1159 «Պաւղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի և Տիմոթէոս եղբայր...»

## Բ. ԵՓՐԵՄ

17 Պատճառք երկրորդ թղթոյն Կորընթացւոց սուրբ հօրն Եփրեմի: էջ 359—365:

ա. էջ 365—403 «Առ Կորընթացիս երկրորդ ընթերցուածս: Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաւքն Աստուծոյ քանզի յառաջնում թղթի...

բ. էջ 403—427 «Ընթերցուածս Բ: Այսուհետեւ ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս...»

գ. էջ 427—439 «Ընթերցուած Գ: Ցուցանեմք ձեզ եղբարք զշնորհսն Աստուծոյ, են...»

դ. էջ 439—474 «Ընթերցուած Դ: Այլ ես ինքն Պօղոս աղաչեմ զձեզ...»

էջ 474-ից յետոյ գրուած է էջ 479, փոխանակ 475:

18. էջ 479—491 «Որ հաւրն Եփրեմի պատճառ երրորդ թղթոյն: Կորընթացիքն յետ մեծարանելոյն...»

19. էջ 491—496 Որ հաւրն Եփրեմի պատճառ թղթոյն Գաղատացւոց: Գաղատ(աց)իքն աշակերտեցան ի Պօղոսէ...»

20. էջ 496—526 «Տունք ժթ. Ընթերցուած Ա: Առ Գաղատացիս: Պաւղոս առաքեալ ոչ ի մարդկանէ...»

21. էջ 526—558 «Ընթերցուած Բ: Ըստ մարդկութեանս ասեմ եղբարք...»

22. էջ 558—562 «Որ հաւրն Եփրեմի պատճառք թղթոյն Եփեսացւոց: (Ա)շակերտեալ էին աւետարանչէ անտի...»

23. էջ 562—624 «Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաւքն Աստուծոյ սրբոց...»

24. էջ 625—630 «Եփրեմի պատճառք թղթոյն Փիլիպեցւոց: Հալածումն մեծ...»

25. էջ 631—665 «Տունք թ: Պաւղոս և Տիմոթէոս ծառայք Յիսուսի Քրիստոսի...»

26. էջ 665—685 «Այլ խորհուրդ ընթերցուածս, երկու է: Այսուհետեւ եղբարք իմ ուրախ լերուք...»

27. էջ 685—690 «Սորայն Եփրեմի պատճառք թղթոյն Կողոսացւոց: Կողոսացիքն աշակերտեալ էին...»

28. էջ 690—734 «Տունք ժթ: Պաւղոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամաւքն Աստուծոյ: Պարտ է նախ զպատճառ թղթիս ասել...»

29. էջ 735—739 «Որ հաւրն Եփրեմի պատճառք Թեսաղոնիկեցւոց առաջին թղթին: Պօղոս իբրեւ հալածեցաւ...»

30. էջ 739—789 «Առ Թեսաղոնիկեցիս ա.: Պաւղոս և Սեղուիանոս և Տիմոթէոս, հայեաց դու և տես...»

31. էջ 789—795 «Սորայն Եփրեմի պատճառ թղթոյն Թեսաղենիկեցւոյ: Իբրեւ ընկալան Թեսաղոնիկեցիքն, զկնի արար զթուղթն առաջին,...»

32. էջ 795—823 «ա. Պաւղոս և Սեղուիանոս...»

33. էջ 823—851 «Գլուխք թղթոյն Եբրայեցւոց: Եբրայեցւոց թուղթս թուի թէ չիցէ Պաւղոսի...»

34. էջ 852—1006 «Բազում մա-

սամբք և բազում աւրհնականք, կանխաւ խաւսեցաւ Աստուած ընդ հարսն մեր...»

35. էջ 1006—1012 «Որ հօրն Նեփրեմի պատճառք ա. Թղթոյն Տեմոթէեայ։ Առաքեալ զՏիմոթէոս...»

36. էջ 1012—1062 «Յունք իւր։ Պաւղոս ծառայ Յիսուսի Քրիստոսի ըստ հրամանի փրկչին մերոյ։ Մեծ է պատիւ առաքելոյ...»

37. էջ 1062—1066 «Որ հաւրն Նեփրեմի պատճառ երկրորդ թղթոյն Տիմոթեայ։ Պաւղոս ծանեաւ հոգւովն, որ էր...»

38. էջ 1066—1104 «Առ Տիմոթէոս թուղթ Բ. ընթր". ա. Պաւղոս ծառայ Յիսուսի Քրիստոսի կամաւքն Աստուծոյ ըստ աւետեաց...»

39. էջ 1105—1109 «Սորրոյն Նեփրեմի պատճառ Տիտոսի թղթոյն։ Պաւղոս եթող զՏիտոս ի Կրիտէ...

40. էջ 1109—1129 «Առ Տիտոս ընթր. ա. Պաւղոս ծառայ Յիսուսի Քրիստոսի և առաքեալ Յիսուս Քրիստոսի. ըստ հաւատոց ընտրոց...»

1. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 3. Որ. մինիշս գրով յուսահօգի Աղէքսանդրի պարոն Ռափայէլին և Ստեփանին, եղունն յիշատակ Պետրոս վարդապետին։ Ընթերցողք ասէք Աստուած ողորմի յիշատակ եղողաց 1207 թվին. ի Հիլայէ քաղաք։

2. էջ 4. Այս մինիշ գիրքս գրով Բերթուսի որդի Պետրոս վարդապետի Պետրոս աստուածաբան վարդապետին։

Պետրոս վարդապետ Բերթումեան այս եպիսկոպոս, Լուսավորեանցն է, որ Աստուածաբանութեան ունի թիւ 1, ինչպէս եւ յաջորդ մեկնութեան թիւ 7-ի եւ այլ մեկնաբանութեանց հեղինակն է։

3. էջ 4. (անվարժ ձեռքով) «Եւ ի վայելումն մահանուի Յովհաննեսի Անանեան Մագրեցւոյ:

7

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԱՑ ԱՒԵՏԱՐԱՆԻ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 23×16 սմ.։—ԿԱԶՄ. խաւարարտ կաշեկազմ։—ՎԻՃԱԿ լաւ—ՆԻՒԹ թուղթ բարակ եւ հարթ։—ԹԵՐԹ 111, ԴԱՏԱՐԿ սկզբից էջ I—VI. VIII. 194—196. 204—214։—ՏՈՂ 25։—ԳԻՐ նոտրագիր.—ԽՈՐԱԳԻՐ ՎԵՐՆԱԳԻՐՆԵՐ եւ ՍԿԶԲՆԱԳԻՐՆԵՐ կարմիր։—ԶԱՐԴ էջ 11. զեղեցիկ եւ թագաձեւ ԽՈՐԱՆԱԶԱՐԴԻ տեղ։—ԼՈՒՍԱՆՑՔՈՒՄ նշանակուած են վկայութեանց աղբիւրները.—ԹՈՒԱԿԱՆ ՌՄԿԱ=1812։—ԳՐԻՉ Անտոն աբեղայ—ՏԵՂ Երուսաղէմ։—ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ VII. 9—10. 187. 188—190. 191—193.—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ կազմի եւ կողքի ներսի կողմում կպցրած տպագրուած թերթերի վրայ կայ «Աղէքսանդր Ղազարեան Թամիրեանց». էջ. I. կայ «№ 975».

### Մ ա տ ե ա ն ս է

Գիրք մեկնութեան առակաց սրբոյ Աւետարանին

Յոյժ գեղեցիկ մեկնութիւն և շնորհալի վարդապետութիւն շարադրեալ Նախջուանցի Աղամալեան Պետրոս արքեպիսկոպոսէ սրբոյ Էջմիածնի Աթոռանէ։ Ի փառս մեծին Աստուծոյ...»

ա. էջ 1—9 «Բան ու բարեմիտ ընթերցողս յողոդս առաջիկայ առակացս Կանխաւորեալս և հոգեհրաշ նախադասող բանին...» Վերջաբանում էջ 8 ասում է

«Զի ոչ ինքնակամ փութացայ յայս, նաեւ ամենեւին իսկ ոչ ունէաք զխորհուրդ ձեռնարկելոյ ի սոյն, բաւական համարելով զանուսթիւն բարուոյապետացն որք առաջ քան զմեզ։ Սակայն մօրս մերոյ հաւատոյ մեծի աթոռոյս Էջմիածնի բաղձ բարտուղար եւ գրագիր յաջականցի Տէր Երեմիա աստուած իմաստ վարդապետն, սիրահարեալն ի գեղ առակացս Քրիստոսի, աղերս մատուցեալ խնդրեաց ՚ի մէնջ ի մի ժողովել զամենայն առակն աւետարանական, համառօտ բացատրութեամբ, ի յուսումն իւր և փափաքողաց...»

բ. էջ 9—10. «Բանանաւոր գրքոյս շինողի ի վերայ անուան իւրոյ։ Յորդորակ ա-

ռակաւոր բանիս Քրիստոսի։

Պարտէ մարդոյ գիտել զիմաստ և զՀանճար

Որով անճար պաՀու յինքեան գտցէ զճար։

Եւ ընդունել զզարձուածս բանից իմաստնաբար ևն։

Տունէրի կարմիր սկզբնագիրները կազմում են Հեղինակի, „Պետրոսի վարդապետի", անունը։

2. էջ 11—18. «Ցաղագս թէ որքան Հարկաւոր է Հաշտութիւն եղբայրական։ Առակ. Մատթէոսի 5. 23. բնաբան։ Մինչ մատուցանիցես զպատարագդ Քրիստոսի ի վերայ սեղանոյ...»

3. էջ 18—22. Ցաղագս անսակաւորեալ Հաւատոյ։ Առակ 2։ Մատթէոս. գլխ. 7. Համար. 21։ Փրկիչն աշխարՀի Յիսուս մեղրածորան բերանովն...»

4. էջ 23—26. «Ցաղագս թէ որքան չար է խստասրտութիւնն Առակ 12. Մատ. գլ. 11. Համար 16։ «Եւ երկնային իմաստութիւն Յիսուս, որ նման իւր ոչ ոք...»

5. էջ 26—33. «Ցաղագս առ ակին սերմանաՀանին։ Առակ դ. Մատ։ Երկնային մշակն յետ որոյ ստացաւ զբանական...»

6. էջ 33—40. «Ցաղագս սկզբան ի կատարածի մարդոյն։ Առակ 5. Մաթ.։ «Նզական վարդապետն տիեզերաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս...»

7. էջ 40—42. «Ցաղագս գործունէական խոկման արքայութեանն։ Առակ 6. Մատթէոսի 13. 31.։ «Առակարան երկրորդ Սողոմոն գերազանցն...»

8. էջ 42—45. «Ցաղագս անծողական զօրութեան սրբոյ աւետարանին։ Առակ 7. Մատթէ. 13. 13։ «Տէրն մեր զածողական զօրութիւն սրբոյ Աւետարանին..»

9. էջ 45—49. «Ցաղագս մեծութեանց արքայութեան երկնից։ Առակ։ 8. Մատթէ. 13. 44։ «Սքանչելի խորՀրդական Տէրն մեր Յիսուս Քրիստոս որ...»

10. էջ 49-53. «Ցաղագս գեղեցիկ արքայութեան երկնից Առակ։ 9 Մատթ. 13. 45։ «Գեղեցիկն յորդիս մարդկանց Յիսուս կամենալով սիրաՀարս...»

11. էջ 53—55. «Ցաղագս ամենազօրութեանց արքայութեան երկնից։ Առակ 10. Մատթ. 13. 47։ «Տէրն մեր ցուցանել կամելով մեզ ամենակալ...»

12. էջ 55—63. «Ցաղագս թէ որքան Հարկաւոր է թողուլն զանցանս եղբօրն։ Առակ 11 Մատթ. 18. 23։ «Ոչ ոք կարէ զարքայութիւն ժառանգել եթէ...»

13. էջ 63—70. «Ցաղագս առաւել արժէ բոպէական գործն սիրով, քան տարեկան թարց սիրոյ։ Առակ 12. Մատթ. 20. 1. «Տէրն մեր առ ի ցուցանել թէ որքան արդիւնաւոր է...»

14. էջ 70—72. «Ցաղագս թէ Աստուած յամենայն Հասարակաց խնդրէ զպտուղ Առակ 13. Մատթ. 21. 19. «Եւ տեսեալ զթզենի մի ի վերայ ճանապարՀին...»

15. էջ 72—75. «Ցաղագս թէ անՀաւատարիմ կորուսանէ զայն, զոր ունի. Առակ 14. Մատթ.» 21. 33։ «Տէրն մեր զանՀաւատարմութիւնն մշակաց յայգւոյն...»

16. էջ 76—81. «Ցաղագս թէ որքան չար է յամառել ՚ի կոչ երկնային Հարսանեացն։ Առակ 15. Մատթ.» 22. 2. «Տէրն մեր զմեծ վնաս և զանմտութիւն Հրէից և անՀաւատից...»

17. էջ 81—83. «Ցաղագս միւս անգամ գալստեան Տեառն և վասն յարութեան մեռելոց։ Առակ. 16. Մատթ.» 24. 31. «Եւ առաքեսցէ զՀրեշտակս իւր փողով մեծաւ...»

18. էջ 83—91. «Ցաղագս գալստեանն Քրիստոսի. Առակ 17. Մատթ. 25. 1. «Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց...»

19. էջ 92—100. «Ցաղագս մարդկային անկման աղետից և նորին կանգմանն. Առակ 18. Ղուկաս։ «Այր մի իջանէր յԵրուսաղէմէ յԵրիքով անկաւ ի ձեռս...»

20. էջ 100—105 «Ցաղագս թէ յարատև աղօթքն առնուն, զոր խնդրեն։ Առակ 19. Ղուկաս 11. 5. «Եւ ասէ ցնոսա, ո՞վ է ՚ի ձէնջ մարդ, որոյ իցէ բարեկամ...»

21. էջ 106—111. «Ցաղագս թէ ագաՀաց սիրան ոչ յագի. Առակ. 20. Ղուկ. 12. 16։ «Տէրն մեր տեսանելով զատուրկ յարուցն ագաՀաց...»

22. էջ 111—112. «Ցաղագս թէ զապառնի գալոյն և զգործոյն վերջն մտածել և ապա ձեռնամուխ լինել։ Առակ» 21. Ղուկ. 14. 28։ «Ո՞վ ոք ՚ի ձէնջ որ

կամեցի շինել զաշտարակ և ոչ նախ...»

23. էջ 112—114. «Յաղագս հոգևոր պատերազմի որ ընդ անմարմնոց։ Առակ. 22. Ղուկ. 14. 31։ «Կամ ո՞ր թագաւոր եր-թեալ տայցէ պատերազմ ընդ...»

24. էջ 114—118. «Յաղագս գիւտի մոլորեալ ոչխարին։ Առակ. 23. Ղուկ. 15. 4։ «Ո՞վ ոք իցէ ի ձէնջ մարդ որոյ իցէ հարիւր ոչխար...»

25. էջ 118—133. «Յաղագս վասն անառակ որդւոյն։ Առակ. 24. Ղուկ. 15. 11։ «Առն միոջ էին երկու որդիք։ Նկա-րագրապէս...»

26. էջ 133—140. Յաղագս մեծատան և անտեսին։ Առակ. 25. Ղուկաս. 16. 1։ «Այր մի էր մեծատուն, որոյ էր տըն-տես և եղև...»

27. էջ 140—149. «Յաղագս ագա-հաց։ Առակ. 26. Ղուկաս. 16. 19։ «Այր ոմն էր մեծատուն և հաւուն նմա անդր...»

28. էջ 149—158. «Յաղագս զզօ-րութենէ յարատև աղօթից։ Առակ 27. Ղուկասու 18. 1։ «Ասաց և առակ մի նո-ցա առ այն՝ թէ պարտ է յամենայն ժամ...»

29. էջ 153—156. «Յաղագս զկե(ր)պ աղօթիցն ուսանելոյ։ Առակ. 28. Ղուկաս 18. 10։ «Արք երկու ելին ի տաճարն կալ յաղօթս մինն...»

30. էջ 156—161. «Յաղագս երկրպա-գութեան Աստուծոյ։ «Առակ. 29 Ղուկ. 13. 6։ «Թզենի մի էր ունելով յայգւոջ իւ-րում և եկն...»

31. էջ 162—173. «Յաղագս արքա-յութեան տեառն մերոյ։ Առակ. 30. Ղու-կաս. 19. 12։ «Այր ոմն ազնուական գնաց աշխարհ հեռի առնուլ...»

32. էջ 173—175. «Անիւաւոր(՞) առ առակսն»։ Մի քանի տուն ոտանաւորներ։

33. էջ 175—183. «Քարոզ ի բանն այն՝ որ ասէ Սիրաք։ Լաւ է երթալ ի տուն սգւոյ՝ քան ի տուն ուրախութեան։ Յաղագս ննջեցելոց հարց (լուսանցքում)։ Երթալ ի տուն սգոյ... զի՞նչ օգուտ ունի...»

34. էջ 183—185. «Յաղագս արքա-յանի երկիւղին Գլ. 32։ Աստուծոյ և տեառն մերոյ...»

35. էջ 186—187. «Յանկ (երեսուն երկու) գլխոյ», ապա մի ոտանաւոր «Ով որ. Գրիգորիոս, հայր մեր քաղցրագին. և»։

1. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 188—192։ Արդ ի յաւարտումն փոքրաքանակ գրքոյս՝ նախ մեծաւ չնորհակալութեամբ և երկրա-մերձ արտասուալի դիմօք փառաւորեմ զա-հաւոր Ամենասուրբ Երրորդութիւն համա-գոյ, որոյ կարող և հզօր աջողութեամբն հասի յաւարտումն սորին, որ է պտղաւէտ աւետարանական առակացն Քրիստոսի. մեկ-նութիւն փրկաւէտ համառօտեալ...։

Երկրպագաբար մաքրեալ մօք գիտա-ւորութեամբ՝ լիալիր տալ զողորմին քրտնա-ջան չարաչրողի և հաւաքողի աշխատողի ի սմին Տեառն Պետրոսի հեզահոգի և Բա-նիբուն՝ հոգեշահ գիտնական վարդապե-տի. և ներկայ անձանձրոյթ համեղ դասա-սացի, և գչիջեալ ճրագունն լուսաւո-րողի անթերապէս, և պարունն փափաքո-ղաց բաւական. զովացուցանող եմեր Սրբոյ Ա-թոռոյս Միածնաէջի և իմոյս իսկ հոգեկցի՝ և ցանկալւոյ դասատարակի, որ և յուսամ ի տէր աշխատանմամբ սորին. զոր և քանի մի համառօտ բարելի սեղանոց հոգևոր կե-րակրոց և խորտկաց նախապատրաստու ճաշակել մանկանց մօրս լուսոյ Հայաստա-նեայցս եկեղեցւոյ։

2. էջ 193—195 ՎԱՍՆ ՏԱՌԱՊԵ-ԼՈՑՍ ԱՆՑԻՆ ՅԻՇԱՏԱԿԵՑԻՑ.

Ու արդ ուրեմն ամենայն Սուրբ Գիրք վկայեն թէ՝ մարդկայինս հոգի պատկեր Աստուծոյ գոլով առ ի աստուածայինն ցանկայ հանապազ։ Բայց մարմինս այս նիւ-թական, որ ի չորից տարերաց բաղկացեալ է՝ առ ի բնութեանց տարերաց հեռանի, որ-պէս քաջին քննողաց յայտ է...։ Յաղագս որոյ այն սակս և մերն փոխարկելով ցան-կացողս մեզ 'ի տեսութիւն սրբոց տեղեացն տէրունականաց, այսինքն է ի հրաշալիս սրբոյ քաղաքին Երուսաղեմի, որ և ՌՄԾԸ թուա-կանի հայկազնեանս սեռի, բաղում բաղձա-նօք և փափագելեաւ 'ի սարկաւագական աստիճանի ելեալ 'ի յերկրէն Թիֆլիզոյ ա-պաւինեցաք յայն բնակից Քրիստոսի։ Եւ ուղի անկեալ գիմեցաք զցանկալին մեր 'ի ՌՄԾԹ թուին և ի մարտ ամսոյ ԺԵ-ին օրն կիրա-կի, որ էր անտեսին, աշխատանօք բազմաւ

Հասաք ի ս. քաղաքան Երուսաղէմ։ Եւ զկնի կատարմանց ուխտից և երկրպագութեանց սրբոց տեղեաց տէրունականաց, կայանս առաք 'ի վանսն Սրբոց Յակովբեանց երջանիկ առաքելոցն Քրիստոսի առ 'ի միաբանութեան. և յետ ընթացից ամանակաց հոլովելոց ըստ սովորութեանց իւրեանց անցելոյ ամի միոյ և ի հասանելոյ 'ի ատեն այն, որ կոչի կաթուղիկէ յեկեղեցւոյ, ըստ սովորութեան Ս. Աթոռոյս որ ձեռնադրէին սարկաւագունս ընտրեալս 'ի աստիճան քահանայութեան, այսինքն կուսակրօն աբեղայութեան, որ և նուաստութիւնս մեր գոլով սարկաւագ 'ի երկրէն իմմէ՝ հրաւիրեցին և զմեզ 'ի սարկաւագութենէ ի յաբեղայութ[իւ]ն, ըստ ընտրողութեան սրբազան եպիսկոպոսաց Աթոռոյս և համահաճութեամբ գերերջանիկ Թէոդորոս սրբազան Պատրիարքի տեղւոյս, որ է փոխանորդ աթոռոյս երջանիկ և արդար անուան առաքելոյն Յակոբայ. ուրեմն և մեր նուաստութիւնն զիջեալ զկամս նոցին հնազանդեցաք, ըստ հրամանաց սրբազնութեանց նոցունց յանձնառու եղաք զլուծս աբեղայութեան ի պարանոցի մերում 'ի թուականս հայոց ՌՄԿ. և 'ի յունիս ամսոյ Դ-ին։

Արդ՝ չինչ երկարեմ զբանս ապարդիւնս՝ այլ զհեղինակ գրքոյս յայտնեսցուք, որ է այսպէս, Անտոն անուամբ սեւակիրս տեսանելով զայս գիրքս չքնաղ, որ է մեկնութիւն առակաց սրբոյ Աւետարանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի ձեռն կարգակից եղբօրն իմոյ Ջուղայեցի Գրիգոր սրբակրօն և համեստափայլ վարդապետի, ցանկացայ ստանալ զնա, որ և փափագմամբ մերում թելադրութեամբ և յորդորմամբ սոյն հեզահոգի եղբօրս սկսեցի գրել. ըստ կարեաց իմոց աւարտ հասուցի. ուրեմն երեսս անկեալ խնդրեմ հանդիպողքդ... Եւ ամէն։

*** ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ 1. *Յիշատակարանի*, որը՝ սխալմամբ տեղափոխուած է։

Նաև ի վերջ բանիս տալ ծողորմին քաջ *քարտուղարի Սրբոյ Գանիս Մատթէոս նորաքողքոջ գիտնական վարդապետի* յատուկ եղբօրս իմ ըստ հոգւոյ, մերում շահեցողի, և սորին բուն օրինակն պարգևողի, զոր ըղձիւ ընկալեալ և գըրմամբ յաւարտ հասուցաք համառօտութեամբ շնորհիւ Տեառն ի յաղքատ ծերութեանս. որ մաղթեմք, որոյ և յիշատակն օրհնութեամբ մնասցէ ընդ իմում *Կարապետ* նուաստիկ մեղապարտ *վարդապետիս Տիգրանակերտցւոյ*, որ երբեմն անդ դէտ և նարդենիս ծառայ Սրբոյ Խըման տեղւոյն և ներկայ Սրբազան վեհին Տեառն *Սիմէոնի* հեղարուն և սրբազնակատար *կաթողիկոսի* և ծայրագոյն քահանայապետի ամենից հայոց և իմում խեղական հոգևոր ծնողիս ընդ հոգւոյն Աստուծոյ տնօրինման. որ և կամ այժմ յուսացեալ 'ի Տէր աղքատութեամբ իմով՝ ակն ունելով այցելութեան, և սովամախթարեալ. ի 1218 արամեանս և յունվարի 24 աւարտումն։ Արդ զկնի նուաստութեան մեր օգտողքդ տացէք զողորմին...։

Հուսկ ապա յիշեսջիք զվերատին օրինակող սորին 'ի գաւառէն *Թիֆլիզոյ* և 'ի *Շինող* կոչեցեալ *գիւղէն*. անարժան և մեղսամած *Անտոն աբեղայս*, և զծնողս իմ զԱռաքելն և զԹամար. և զայլ ամենայն արիւնակիցս ընտանիսն իմ. զկենդանիս և զհանգուցեալսն 'ի Տէր։

Եւ առաւն ի բարիս Աստուածն համայնից յիշողացդ և մեզ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի Ամէն։ (Այս չորս տող ոտանաւոր)։

***36. էջ 199—205 (մասայանք յիշել իւր տեղում հետեւեալը)։ «Քարոզ առ այն թէ բանն մարմին եղեւ։ Համբուրեսցէ զիս ի համբուրից բերանոյ իւրոյ. Վարդապետք ասեն թէ...»

## 8

# ԿԵՐԱԿՈՒՐ ՔԱՀԱՆԱՅԻՑ

**ՄԵԾՈՒԹԻՒՆ** 20,5×16,7 *սմ:*—**ԿԱԶՄ** *խաւաքարտ, սեւ լաթով պատած:*—**ՎԻՃԱԿ** *լաւ:*—**ՆԻՒԹ** *թուղթ պինդ եւ հարթ:*—**ԹԵՐԹ** 41։—**ԴԱՏԱՐԿ** *սկզբից երկու եւ վերջից երեք թերթ:*—**ՏՈՂ** 31։—**ԳԻՐ** *նոտրագիր երկսիւն. խորանաչափը* 15,7×6։—**ԽՈՐԱՆԱԶԱՐԴ** *մատիտով էջ* 5։—**ԹՈՒԱԿԱՆ** 1828։—**ԳՐԻՉ** *Մովսէս գրիչ Կիրակոսեան:*—**ՏԵՂ.** *Կարմիր վանք:*—**ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ** *սկզբի ա. թերթի ա. էջ. եւ էջ* 72։—**ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ** *էջ* 1, *եւ վերջին թերթի բ. երեսում «Ներս. հոգեւոր դպրանոցի» կնքադրոշմը:*

### Մատեանս է Կերակուր քահանայից

Թարգմանեալ յառաջագոյն ի լատին լեզուէ ի հայ բարբառ, ի ձեռն Վարդանայ ուրումն կրօնաւորի: Եւ ապա հրամանաւ տեառն տեառն Ստեփաննոսի առաքելաշաւիղ արքեպիսկոպոսի Զմիւռնիոյ նոր շարագրեալ ըստ հայկաբանութեան կարգի, յաւելմամբ... ի Միրզայեան Տէր-Յովհան Վանանդեցի վարժապետ քահանայէ. Զմիւռնիոյ սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն 1822։ Ի 16 յուլիսի։

1. էջ 3. Հեղինակի Տ. Տ. Ստեփաննոս արքեպիսկոպոսին գրած «Ուղերձ նուիրանաց»։

2. էջ 5—59. «Յաղագս պատույ քահանայից» առանձին գլուխ, որին յետեւում է տասներեքը գլուխ։

3. էջ 59—70. «Յաղագս թերութեանց, որք հանդիպին ի մատուցման սրբոյ պատարագին» չորս պրակ։

4. էջ 70—72. «Առ ազդեցութիւն հեղինակիս առանց ինչ յաւելման։ Վա՜հ, ով թշուառ....։

Այս գիրքը պատկանում է Ս. Էջմիածնում մի հայրապետութեան տեառն տեառն Ը: Յովհաննու Կարբեցւոյ որբախնամատար կաթուղիկոսի ամենայն Հայոց, եւ այսպէս Աղէքսանդրի Ներսեսեան եւ Վաղարշապատի առաջնոյ, որոյ եւ բարձրագոյն հրամանաւ տպագրեցաւ յամի տեառն 1841 ի թուին Հայոց ՌՄՂ ի 4 դեկտեմբ. ի տպարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին Միրզոյ, որ յատուկ... գեղապաշտ ... սուրբ Էջմիածնին» Գ. Զար. Հայկ. մատենադարանութիւն:

1. **ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ** էջ 1. Եւ այժմ նորոգ օրինակեալ ի ձեռն նորին ինքեան տէր Յովհաննու Վանանդեցւոյ. ի բարեաւ վայելումն հռչակաւոր ամբողջին Աշտարակի Կարապետի արդիւնաւոր նուիրակի տեառն Մկրտիչ քաջաբարոյ վարդապետի, ի յիշատակ հիմնաւոր մտերմութեան որում տէր տացէ հատուցումն ամօք վայելել—1824 յապր". 23։ Ի դպրատանն Զմիւռնիոյ։

Եւ արդէն վերստին օրինակեցաւ ի նոյնոյ բնագրէ ես ձեռամբ Կարնեցի երբեմն մանկ. վարժ., երբեմն և գործակալ Հրաշալի Կարմիր վանից և երբեմ (կամ և այժմ բոլորովին) թափառական և տառանդական լեալ, այսի (նորոգ) Մովսէս գրչիս Կիրակոսեան. ի վայելս իմոյ անձին և յաւէտ պիտոյից, որք զճշմարտութիւնն սիրեն։ 1827. դեկտ". 28. ի Կարնոյ մերձ սուրբ Աստուածածնի Հրաշալի Կարմիր վանքն։

Մովսէս գրչի մասին համեմատիր թ. 5-ի յիշատակարանը:

2. էջ I. 1827. Դեկտ. 28։ ժամ 11 երրորդ երեկոյեան սկսեցի և աւարտեցի 1828 Յունվարի 3։ Ի վեցերորդ ժամ... կէսն հինգ որ լինի և պակաս

## 9.

## ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

**ՄԵԾՈՒԹԻՒՆ** 15×10,5 *սմ:*—**ԿԱԶՄ** *տախտակեայ, հին կաշեկազմ:*—**ՎԻՃԱԿ** *միջակ. էջ* 136 *թանաք թափած:*—**ՆԻՒԹ** *թուղթ պինդ եւ անհարթ:*—**ԹԵՐԹ** 119։ —**ԴԱՏԱՐԿ** *էջ* 114—122։—**ՏՈՂ** 15։—**ԳԻՐ** *անվարժ նոտրագիր:*—**ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ, ՍԿԶԲՆԱԳԻՐ,** *կարմրատառ:*—**ԹՈՒԱԿԱՆ** *ժը՞ դար:*—**ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ** *էջ* 1 «№ 200» *մի քանի տող ջնջուած գիր. էջ* 3 *մատիտով «աստեղաբաշխութիւն». էջ* 5 *եւ* 238 *«Ներ. հոգ. դպրանոցի» մատենադարանի կնքադրոշմը:*

**Մ ա տ ե ա ն ս է Ա ս տ ղ ա բ ա շ խ ո ւ թ ի ւ ն**

1. *էջ* 5—113 «Վասն աստեղաբաշխութեան և զրանին և գնացից աստեղաց ընդ միմեանս և հայեցուածոց։

2. *էջ* 123—192. «Ցաղագս երկնից շարժման ի նուաստ Յովհաննէս Երզնկացոյ շարագրեալ իմաստնոց բանից. ի խնդրոյ բարեպաշտ և գեղազարդ պատանուն Վաղթանկայ. և նորգեան ի խնդրոյ իշխանին Պաղտասարադայի Գէորգեան մանուկ իմաստասիրի, զոր տէրն բացէ զմիտս նորա. ամէն։ Արարչագործ Աստուած իմաստութեամբ...»

3. *էջ* 192—193. «Դուռն վեց հազարեկին, զոր արարեալ է Անանիայ Շիրակացին. օգնեա հոգիդ Աստուած և հասոյ յուսարտ բանիցս Գիտելի է կերպիւ իմն համարողութիւն, որ ասի զ.ռեակ...»։

## 10.

## ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՒՂԻԿԷՈՒԹԵԱՆ

**ՄԵԾՈՒԹԻՒՆ** 17,2×10,5 *սմ։*—**ԿԱԶՄ** *տախտակեայ, հին կաշեկազմ. կողքերի ներսի երեսները լաթով պատած։* **ՎԻՃԱԿ** *վատ. թերթերը տժգոյն, ծայրերը սեւացած։*—**ՆԻՒԹ** *թուղթ պինդ եւ անհարթ։* - **ԹԵՐԹ** 108։ - **ԴԱՏԱՐԿ** *էջ* 208—213։—**ՏՈՂ** 15։—**ԳԻՐ** *նոտրագիր միասին* 12,5×7,3 *սմ։—Անշուք կարմիր* **ՎԵՐՆԱԳԻՐՆԵՐ** *եւ* **ՍԿԶԲՆԱԳԻՐՆԵՐ**։—*Մի տգեղ* **ԽՈՐԱՆԱԶԱՐԴ**։—**ԹՈՒԱԿԱՆ** *ԺԸ. դար։*—**ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ** *էջ* 207. —**ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ** *կազմի վրայ գրուած է «քրիստոնէական վարդապետութիւն»։ էջ* 1. *եւ* 216. *«Ներս. հոգեւ. դպրանոցի» մատենադարանի կնքադրոշմը։ Էջ* 1. *կայ* «291 *համար». էջ* 208—213 *դուշով սեւացած. էջ* 214—216 *անվարժ ձեռքով գրչախաղեր։*

**Մ ա տ ե ա ն ս է**

*ճշմարիտ նշանակութիւն կաթուղիկէութեան ի հայրապետութեան* ամենայն հայոց Տեառն Ղազարու ճշմարտասէր կաթուղիկոսին։

1. *էջ* 2—3. «Առաջաբանութիւն գրքուս։ Որովհետեւ պատրի Կղեմէս զերիս մեծամեծ հատորս գրեալ է ընդէմ Հայոց, ապա և մեք պարտեմք պատասխանել նմա։ Քանզի մեծ բանն նորա այս է, մեք Հայքս ունեմք հնազանդ կաթուղիկէ եկեղեցւոյ, վասն այսորիկ և մեք կամեցաք մեկնել ի մէջ այս գրքիս, թէ զանազան նշանակութիւն առնել եւ ցուցանել կաթուղիկէ, որ մեք Հայքս քան զամենեսեան առաւել հնազանդ հետեւողք եմք կաթուղիկէ եկեղեցւոյ։

2. *էջ* 3—6. Գրքիս բովանդակութեան գլուխների ցանկը։

3. 7—36. «Ա. Նշանակութիւն կաթուղիկէութեան Կաթուղիկէ է Հռոմոց բարբառ...»

4. *էջ* 36—116. «Բ. և ճշմարիտ (կա-

թուղիկէութեան) նշանակութիւն։ Երկրորդ և ճշմարիտ և մանաւանդ...»

5. 116—140. «Յաղագս համարակ հերձուածողութեան. (երկարնակաց) գուցէ հարցանիցէ ոք...»

6. 140—152. «Յաղագս մոլորեցուցչաց կարգաւորաց մերոց։ Իսկ զի՞նչ ասասցուք...»

7. 153—158. «Ա. Նշան (հերձուածողաց նոցա գաւնազգեստ կեղծաւորութեան նոցա)։ Քանզի նախ և առաջ...»

8. 158—162. «Բ. Նշան իմաստութեան նոցա։ Հերձուածողաց...»

9. 163—165. «Գ. Նշան հակաճառութեան։ Երրորդ նշան հերձուածողաց, զոր նախագուշակեալ...»

10. 165—167. Դ. Նշան առաքելանուամբ որջորջելն նոցա։ Չորրորդ նշան հերձուածողաց...»

> Վերնագրերի վերաբերեալ փակագծերի մէջ եղած բառերը եւ հետեւեալ 11—16 ամբողջ վերնագիրները ցանկից են առնուած:

11. 167—169. «Ե. Նշան իգական քաղցրախօսութիւն նոցա։ Հինգերորդ նշան հերձուածողաց, զոր...»

12. 169—171. «Զ. Նշան իգասիրութեան։ Վեցերորդ նշան, զոր նախագուշակեալք են...»

13. 171—177. «Է. Նշան առասպելախօսութեան նոցա։ Եօթներորդ նշան հերձուածողաց, զոր նախագուշակեալ է...»

14. 177—197. «Ը. Նշանն մոացածին հաւատոց քարոզութեան։ Ութերորդ նշան հերձուածողաց զոր նախագուշակեալ է Առաքեալ...»

15. 197—200. «Թ. Նշանն նոցա երկպառակութեան և հերձուածն է։ Իննե-րորդ նշանն հերցուածողաց զոր նախագուշակեալն են առաքեալն...»

16. 200—207. «Ժ. Նշանն ի ժողովոց համարակ աղօթից կատարելն է։ Տասներորդ և վերջին նշան հերձուածողաց զոր...»

> Այս տամնուշորս գլխով վերջանում է: Բայց ըստ ցանկի էջ 4—6 պէտք է լինէին եւ հետեւեալ գլուխները:

17. ԺԱ. Միամտաց գայթակղութեանն։

18. ԺԲ. Թշնամութիւն խաչին Քրիստոսի։

19. ԺԳ. Քրիստոսի Աստուածութեան թշնամութիւն։

20. ԺԴ. Հայհոյութեան հոգւոյն սրբոյ։

21. ԺԵ. Նշանն հայհոյութիւնն սրբոցն։

22. ԺԶ. Նշանն թշնամութեան թագաւորացն։

23. ԺԷ. Գայլարնութիւն սրտմտութեան նոցա։

24. ԺԸ. Նշան սուտակապաշտութիւն նոցա։

25. ԺԹ. Լուծանողութեան Յիսուսի։

26. Ի. Վերջինն հերցուած հաստատութեան նոցա։

27. Առաջին խրատ առ միամիտ մոլորեալս վասն չարագործ կարգաւորաց մերոց։

28. Երկրորդ խրատ առ նոսս, վասն հերձուածող կարգաւորաց ազգին մերոյ։

29. Աղօթք չարագրողի գրքուս առ Քրիստոս վասն դարձման՝ երկաղաւանաց ազգին իւրոյ։

1. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 207. (խիստ անվարժ ձեռքով)։ Յիշատակ է այս գիրն տէր Գէորգի ՌՄԽԹ—1800.

## 11.

## ԳԻՐՔ ՎԿԱՅՈՒԹԵԱՆՑ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 16,5×10 սմ—ԿԱԶՄ տախտակեայ, հին կաշեկազմ՝ ներսի կողքերը լաթով պատած՝ Կաշեայ փականքով—ՎԻՃԱԿ վատ, շատ տեղ դեղնած, սեւացած եւ անընթեռնլի, թերթեր են պակաս—ՆԻՒԹ, հարթ թուղթ.—ԹԵՐԹ 297.—ՏՈՂ 23.—ԳԻՐ նոտրագիր միասին 11×6 սմ—ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ եւ ՍԿԶԲՆԱԳԻՐ կարմրատառ.—ԽՈՐԱՆԱԶԱՐԴ էջ 1. երփնագոյն.—ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ էջ 110.—

ԹՈՒՂԹԸ ԺԷ *դարից ու առաջ*։—ԳԻՐՔ *Աղէքսանդրի*։—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *կազմի մէջքին «գիրք վկայութեան» էջ* 3 *եւ* 594 *«Ներս. Շնորհ. դպրանոցի» կնքադրոշմը. էջ* 456 *եւ* 592 *ութանկիւնի կնքադրոշմ, ուր կարդացւում է «Քի ծո (Քրիս. ծառայ) Յ ո վ հ ա ն ն է ս»*։

Մ ա տ ե ա ն ս է

*Վկայութիւնք* պիտանիք և հարկաւորք յաղագս *առիպատրաստ գոլոյ ի ձեռս խնդրողաց* բանի պէտս (*անվերծանելի բառ*) և թէ ի պէտս վիճարան(ողաց՞) ...՞ ի պէտս գիտութեան (*բառ անվերծանելի*) յաստուածայնոցն... (աշխատութեամբ ումեմն *Աղէքսանդրի*»

1. էջ 1—52. Վկայութիւններ հին և նոր կտակարանից, որ են ըստ կարգի. Ա. յերկրորդ օրինաց։ Բ. Ղևտականք։ Գ. Դ. Ե. (անընթեռնլի)։ Զ. Եզրաս և Է. Մակաբայեցւոց։ Ը. Յոբ։ Թ. Սիրաք։ Ժ. Սողոմոն։ ԺԱ. Եկլեսիաստէս որ է Ժողովող։ ԺԲ. Եսայի։ ԺԳ. Երեմիայ։ ԺԴ. Միքիայ։ ԺԵ. Դանիէլ։ ԺԶ. Յովէլ։ ԺԷ. Աբդիու։ ԺԸ. Սոփոնիայ։ ԺԹ. Թուղթ Պօղոսի առ Հռովմայեցիս։ Ի. Թուղթ առաջին կորնթացոց։ ԻԱ. երկրորդ Կորնթացոց։ ԻԲ. Գաղատացւոց։ ԻԳ. Եփեսացւոց։ ԻԴ. Փիլիպեցւոց։ ԻԵ. Կողոսացւոց։ ԻԶ. Թեսաղոնիկեցւոց։ ԻԷ. Երկրորդ Թեսաղոնիկեցւոց։ ԻԸ. Առ Տիմոթէոս առաջին։ ԻԹ. Առ Տիմոթէոս երկրորդ։ Լ. Տիտոս։ ԼԱ. Եբրայեցւոց։ ԼԲ. Յայտնութիւն և տեսիլ Յովհաննու աւետարանչի։

2. էջ 52—109. Վկայութիւնք 'ի գրոց սրբոյն *Դիոնէսիոսի*. Իսկ այն, որ մերձ բանին հանդէպ լուսանցքին բենն է, նշանակէ թէ բանս այս 'ի բնաբանէն է, իսկ մնն, այսինքն թէ ի մեկնչէն—Հայրենաւանդ լուսափայլութիւն... ևն։

*ա*. էջ 98—109. Ուինչ է յիմացականացն ամենայնի ընդ գերունակութեան պատճառն։—Եւ գործեալ ի վեր եղանելով...

3. էջ 110—122. «Յաղագս գրոց ժողովեալ 'ի բանից սրբոյն *Գրիգոր Աստուածաբանի*։ Զինչ է իմաստ...»

4. էջ 122—126. «Սրբոյն *Գրիգորի Լուսաւորչի* ասացեալ Եւ արդ տէր բարերար... ևն։

5. էջ 126—160. «Վկայութիւնք *Սրբոյն Կիւրղի* եպիսկոպոսապետին Աղէքսանդրի ի պարապմանց գրոց։ Քրիստոսիդ անուն ոչ սահմանի զօրութիւն... ևն։»

6. էջ 160—162. «Մեծին *Աթանասի* է բանս 'ի պարապմանց գրոց։ Խոստովանիմք զնա որդի Աստուծոյ... ևն»

7. էջ 162—163. *ա*. «*Գրիգոր Սքանչելագործն* ասէ։ Որ ոք ասէ այլ ոք... ևն»

8. էջ 163 . *բ*. *Բարսղի Կեսարացւոյ* ասացեալ Թէ ոք ի վերայ մարդոյն... ևն»

9. էջ 163—201. «*Ծաղկաքաղ* համառօտեալ ի բանից Սրբոյն *Յովհաննու Ոսկեբերանի* յաւետարանական մեկնութեանէ, որ Ը. գլխոյն Յոհաննու Յորժամ վասն...»

10. էջ 201—249. «*Խրատք* Սրբոյն *Եւագրեայ*, անմարմնոյն ի մարմնի որ զարդ և մերն անապատի կոչի։ Ագեշանք և զգուշականք։—Յիշման տեսան մերոյ մեալ իմեք...ևն։

11. էջ 249—250. «*Ամբրոսիոս* ասէ։ Որ անարժանութեամբ առնու զՔրիստոս... ևն։»

12. էջ 250—258. «*Օգոստինոս* Աշխարհս այս է պանդխտութիւն... ևն։»

13. էջ 258—260. *Հերոնիմոսի* ասացեալ փ։—Միշտ գործեա ինչ բարի... ևն»

14. էջ 260—265. «*Գրիգորի* ասացեալ։—Ով ոք իցէ ի հաւատացելոյն... ևն։»

15. էջ 265—268. «*Բեռնարտոսի* ասացեալ փ։ Առաքինութիւն աշխատութիւն խնդրի...»

16. էջ 268—270. «*Սենեքայի* ասացեալ փ։ Սկիզբն փրկութեան է ճանաչումն... ևն։»

17. էջ 270 . *ա*. «*Թուլիոսի* ասացեալ փ։ Հեշտութիւն չիքուցանէ... ևն»

18. էջ 270 . *բ*. «*Եզիդորոսի* ասացեալ փ։ Որ գաւհերեցութեան ցանկայ... ևն»

19. էջ 271—306. «*Հատաքակ վարդապետաց* ասացեալ, *զորոց անուանքն ոչ գտայ*։ Մեծ են գործք աստուածայինն... ևն։»

20. էջ 306—335. «Յերանելւոյն *Սարգսի շնորհալից վարդապետի* բանից ժողովեալ 'ի կաթուղիկէից մեկնութիւնէ։ Առնել է Քրիստոսի... ևն»

21. էջ 325—420. «Ի մեկնութիւնէ

Սրբոյ պատարագին Տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ արքեպիսկոպոսին Տարսոնի Կիլիկեցւոյ։ Ասէ սուրբն Նիբեմ ի ճառ... ևն։

22. էջ 420—424. «Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին է բանս քանզի տէրունական... ևն։»

23. էջ 424—428. «Նորին տեառն Ներսէսի Լամբրոնացւոյ քանզի նշխարհ պատարագին մատուցեալ... ևն։»

24. էջ 429—489. «Եւ սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ Հարցմանց գրոց ժողովեալ աշխատասիրութեամբ հայոց Աղեքսանդրի Թշուառ ոգւոյ։ Զինչ է ծայրագոյն միաւորութիւն բանին... ևն։»

25. էջ 489—592. «Յալբերթ գրոց ժողովեալ ի նոյն Աղէքսանդրէ բանի ծառայէ» (տես գրքիս վերնագիրը)

26. էջ 592—594. (պակաս) «Համ-մատութիւն հնոյն առ նորս արարեալ սըրբոյն վանականայ վարդապետի։ Երկինք=եկեղեցի։ Արեգակ աչն=Աւետարանն Լուսին=Օրէնք։ Արուսեակ=Յովհաննէս Մկրտիչ։ Ընդհանուր աստեղք=Բոլոր քրիստոնեայք են։ ՅԿԵ օր տարւոյ=Զօղուածքս Երկոտասան ամիսք=Երկոտասան անդամքս է. օր շաբաթու=Է զգայութիւնքս Դրախտն=Եկեղեցի։ Ծառ կենաց=Խաչն։ Գիտութեան պտուղ=Քացախ և լեղին։ Ադամ=Քրիստոս ևն—Զորս գիրքն=Աւետարանիչքն...։ Աբէլ=Նախավկայն... Մաթուսաղայ=Սիմէոն ծերունին ևն Տապանն չորեք կուսի=Կաւէն դ. տըռանաց։ Պատուհանին բացումն=Կողին բացումն ի խաչին։ Ագռաւն չդարձաւ=Սատանայ անկաւ ի դժոխս։ Աղաւնոյն արձակումն=Հոգոյն աւանդումն ևն ևն։

## 12.

## ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 13×11 սմ։ — ԿԱԶՄ տախտակեայ, հին կաշեկազմ. կաշեայ կապերիքի մնացորդ։ — ՎԻՃԱԿ ընդհանրապէս լաւ. ժամանակից մաշուած։ — ՆԻՒԹ Թուղթ հարթ։ — ԹԵՐԹ 301։ — ԴԱՏԱՐԿ էջ I—XII. 478, 562—563, 570—589։ 517 քառակուսի տողած։ — ՏՈՂ 20—22։ — ԳԻՐ նոտրագիր, իսկ էջ 244—320 բոլորագիր։ — ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ, ՍԿԶԲՆԱԳԻՐ կարմիր. գլուխների սկզբնատառերը Թռչնագիր։ — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ մի քանի հատ սիրուն. լուսանցքում տեղ-տեղ յաւելուածներ։ — ԹՈՒԱԿԱՆ ՌՀԵ=1626։ — ԳՐԻՉ Եսայեայ եպիսկոպոս։ — ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 27, 203, 204, 379, 528։ — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ Կազմի մէջքին գրուած է «քառագիրք» նոյնն եւ էջ III, ուր եւ կայ «287 համար». էջ 567—569 վրացերէն. էջ 1 եւ 569, 570 «Ներ. հոգ. դպրանոցի» մատենադարանի կնքադրոշմը. էջ 575 երեք մեծ տառ. 577 գրչով նկարած Թռչուն։

Մատենան է ժողովածոյ

### Ա. ԲԱՌԱՐԱՆ

1. էջ 1—14 «Բանք որ ինչ ի խորանէն, և այլոց անյայտից։ Անկուած=հանած։ Աւսափակ։ Ապաստումն և ապաւանդակ սարրատ խորանին..., և այլն։

2. էջ 15—27 «Ներթնդ. գլուխ գրոցս. որ կոչի բառգիրք. զոր այժմ մեկնէ զմնացուածն։ Առանցեալ=խնլագարեալ։ Առիղ=անխոնարհելի, անշիջելի։ Աստուածարեալ=տեսանել հանդերձեալն։ Առակ=տես և կարող են ևն։

3. էջ 29—102 «Առաւած բառ է Հայոց լեզուէ պարզ և յստակ արարիչ։ Ալգոստոս=աշխարհակալ։ Անգղնին=անըրբնին։ Աքաղաղ=խուրօզ։ Արագիլ=լակլակ են են...

4. էջ 103—110 «Աւետեաց երկիրն, Երուսաղեմ է...»։ Զանազան հին և նոր թէ Հայոց և թէ օտար աշխարհագրական անուններ։

5. էջ.՞. 192—201 (սկիզբը պակաս)։ Բառեր։ Բաղմարեր, բարբարոս, աստեղնոգի։ Գերունդյն...»

### Բ. ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

6. էջ 111—117 «Յառաջաբանութիւն մեկնութեանց Պորփիւրի՝ Հանդերձեալք հանդերձ...»

7. էջ 117—119 «Ստորոգութիւնք Արիստոտէլի՝ Գոյացութիւն, որակ, քանակ...»

8. էջ 120—122 «Վերլուծականէն ի գրոցն Արիստոտէլի՝ Ասէ իմաստասէրս...»

9. էջ 122—124 «Ի սահմանաց գրոց որ կոչի Լօիքա Որք միանգամ իմաստասիրութեան տենչան...»

10. էջ 124—136 «Ի բանից Պղատոնի յէակաց գրոց՝ Գիտելի է ըստ կանոնաց իմաստասիրաց...»

11. էջ 385—397 «Արիստոտելի յաղագս առաքինութեան առ Աղէքսանդր թագաւոր՝ Գովելի են գեղեցիկքն...»

12. էջ 447—452 «Դաւթի Ածի անյաղթ փիլիսոփայի ընդդէմ առարկութեանցն չորից Պիւռոնի իմաստակի. և սահմանք և տրամադրութիւնք իմաստասիրութեան՝ Ամենայն չար տանջելի...»

13. էջ 456—477 «Խաղաղ իմաստասէրի Տուսացոյ առացեալ վասն բանական հոգւոյ գիտութեան, թէ որպէս կամ զինչ է սահման նորա՝ Գիտութիւն լիցի ձեզ, որ Աստուած...»

### Գ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

14. էջ 127—153 «Քերականութիւն է հմտութիւն, որք ի քերթողաց...»

15. 153—158 «Մեկնութիւն բառից քերականին՝ Վերածնութիւն=ընթերցողութիւն՝ Ներկուռ=ընդ կուռ, կ. կոխ՝ կ. կերթ, կ. վարժ...» ևն։

16. էջ 158—160 «Մովսէսի Խորենացւոյ բան իմաստութեան՝ ՅԱստուծոյ խորհրդով, և իմաստութեամբ հաստատեցաւ մարդկայինս...»

17. էջ 160—191 «Սահմանք իմաստասիրին Դաւթայ. սահմանք իմաստասիրական, իբր հարցմամբ՝ Զինչ Աստուած՝ Աստուած վսեմական և ինքնաբուն...»

### Դ. ՊԱՏՄԱԿԱՆ

18. էջ 28 «Առաջնորդք Հռոմայ աթոռոյն Առաջին Պետրոս... Լ. Սեղբեստրոս մինչև ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր...»

19. էջ 202—204 «Հայրապետք Հայոց կարգաւ՝ Տէր Սր. Գրիգոր ա. կաթողիկոս և լուսաւորիչ Հայոց ամս Լ.. են մինչև Տէր Թորոս ամս Ը. թվ. ՊԼԷ=1388։

20. էջ 205 Առաջնորդք Երուսաղէմայ կարգաւ՝ Երուսաղեմայ ա. եպիսկոպոս Յակոբոս... ԼԹ. Հերմոն. մինչև ի սուրբն Գ. Լուսաւորիչն մեր։

### Ե. ԿՐՕՆԱԿԱՆ

21. էջ 206—273 «Գրիգորի աշակերտի եռամեծին Յովհաննու Որոտնեցւոյ. տեսութիւն ի բան մարգարէին որ ասէ. «Հոգի Տեառն 'ի վերայ իմ վասն՝ Տեառնողն վեհ երևակ տեսութեամբ...»

22. էջ 273—320 Յովհաննու Որոտնեցւոյ հաւաքեալ 'ի բանից իմաստասիրաց՝ «Իսկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են...»

23. էջ 331 «Եփրեմի Խորին Ասորւոյ ասացեալ՝ Տաւնք տարեկանք...

24. էջ 332—334 Կարգաւորութիւն աւրհնութիւնարեր ցուցակի, որ ունի յինքեան զժամանակի իւրաքանչիւր կարգեալ կանոնացդ զանեղին, թէ ո՞վ որ կամ յորժա՞մ գաւառէ՝ զհայրապետաց ժամանակն նշանակեցից թէ ո՞վ երեր 'ի Հայոց աշխարս և որոց հրամանաւ կարգեալ ճառեցին «Յեա ԺԺԱ. ամ սրբոյն Գրիգորի եղև թարգմանութիւն...»

25. էջ 334—351 Սրբոյն Գ. Հայոց Լուսաւորչի ի բան հաւատոյ. և Նորին նմանեացն բան առաջին «Եկեղեցական հարց Դիոնէսիոսի Աթենացւոյ, Եփրեմի Խորին Ասորւոյ, Հիպողիտէս Բոստրացւոյ, Գրիգորի Աքանչելագործի, Գր. Նիւսացւոյ, Դամասու Հռոմա, Կիւրղի Երուսաղէմացւ, Գր. Աստուածաբանի և Յովհաննու Ոսկեբերանի գըրուածքներից հատուածներ...

26. Թէ որպէս կարասցուք պատասխանի տանել այնոցիկ, որ երկու ներգործութիւնս առնեն ի վերայ Տեառն մե-

րդ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի

27. էջ 356—383. ա. էջ 356 *Ստեփաննոսի Սիւնեցոյ եպիսկոպոսի* տիեզերալոյս և իմաստուն վարդապետի. Առ Հերմոփկոսաց. Զքննութեանս զանազանութիւն, սքանչելին ի բնաւս Գրիգորիոս...»

բ. էջ 362. Գլուխ երկ. Եթէ բնութիւն անմարմին առանց ենթակայի գոյութիւն ունի՞, թէ ոչ. Գիտել պարտ է նախ եթէ ի քանիս բաժանի բնութիւնն...»

գ. էջ 365 Գլուխ երր. Յորժամ խնդրի ի մէնջ թէ բ. բնութիւնք զոր ասեն անձնաւորք են և դիմաւորք, եթէ անանձն և անդէմ. Գայ մյուսհետև ախոյեան չարութեան..."

դ. էջ 379 «Ի Հաւատոյ արմատոյն է դրուակս Հաւատամք ի մի Աստուած, որ բազում աստուածս ասեն...»

ե. էջ 382 «Սահմանք Հաւատոյ որ ի Նիկիայ ժողովեցան սուրբ եպիսկոպոսք. յժը. Խոստովանիմք զՏէր մեր Յիսուս Քրիստոս..»

28. էջ 384 «Այլ բան *Վարդան վարդապետի*. Զինչ է Ճրագալուցին լուծանելն...»

29. էջ 398—404. ա. «*Դաւանութիւն բաղկեդոնիկացոց*, զոր ինքեանք Աթանասի ասեն, է ինչ որ ուղիղ է և է ինչ որ թիւր. Որ ոք կամիցի փրկիլ...»

բ. էջ 400—404 «*Տամար Ղեւոնի* առաջին չինոզի իւր տանն Բանն մարմին եղև...»

գ. էջ 404 «Դաւանութիւն Քաղկեդոնացւոց տես և զգոյշ լեր. Գիտելի է զի են ամանք...»

30. էջ 409—411 «Վասն խորհրդոց պատարագին ասացած *Վարդան վարդապետի*. Նշխար կազմի հին կտակօք սաղմոսին...»

31. ա. էջ 412—438. Վասն խնդրոյն որ եղև ի մէջ քրիստոնէից *վասն հոգոյն* Աստուծոյ թէ ի Հօրէ միայն պարտէ ասել, թէ ի Հօրէ և յորդւոյ. Ի Հռոմայեցոց ազգէն շարժեցաւ այս խնդիր...»

բ. էջ 416. «Խոստովանութիւն ճշմարիտ Հաւատոյ ուղղափառաց. Հաւատամք ի Հայր, և յորդի...»

գ. էջ 422. «Գրեալ և մեծ վարդապետն *վանականն*, թէ որպէս մարթէ խոստովանել և կամ ասել սուրբ Հոգին ի Հօրէ և յորդւոյ. Այս է վանական վարդապետին. Հոգով խօսել զՀոգոյն Հոգևորացն է գործ...»

դ. էջ 430. «Չորեքտասան ստորճան Հաւատոյ ի *Գրիգորէ*. Խոստովանիմք և Հաւատամք...»

ե. էջ 432. «Այլ դաւանութիւն չորեքտասան գլուխ Հաւատամ յամենասուրբ...»

32. էջ 439—446. «Ի Նուաստ ումեմէ ասացեալ և սուղ ինչ վասն երգեցողին Սողոմոնի. Պաճար գոլով ես յիմաստնոց...»

33. էջ 453—455. *Յովհան Քռնեցին* գրէ ընդէմ Հայոց այսպէս. Առաջին զՔրիստոս մի բնութիւն ասեն ըստ կարծեացն Դիոսկորոսի... ևն.

Ընդամէնը տասնը ու ինն առարկութիւններ: Վերջը գալիս է այս հետաքրքրրական հատուածը:

«*Յովհան Քռնեցին* մեծին Նսայեա աշակերտք էին. և *այսչափ վարդապետովս*, *դարձեր են 'ի Ֆռանկաց դաւանութիւն*. Մարգարէ վարդապետ ի գեղջէն Օծոպայ. Յակոբ վարդապետ ի գիւղաքաղաքէն Գառնոյ. Հայրապետ վարդապետ 'ի յՃոթն աղբիւր գեղջէ. Յովհաննէս վարդապետ 'ի Ծուանս գեղջէ. Սիմէոն վարդապետ ի Բասէն գաւառէ. Ներսէս վարդապետ 'ի Գաւառէն Տարօնոյ. Առաքել և Խորայէլ վարդապետք ի գաւառէն Արտազու. Գրիգոր վարդապետ 'ի յԱպրակունիս գեղջէ. Կոստանդին և Յովհաննէս վարդապետք 'ի յաշխարհէն Կիլիկոյ. Սիմէոն վարդապետ ի Խաչէն գաւառէ.

34. էջ 455. Տէր *Ներսէսի Հայոց կաթուղիկոսի հա՞րց*. Ընդէր առէ աւետարանիչն, թէ սկսաւ Յիսուս տրտմել և հոգալ... Պատասխանի. Նմանք ի հերձուածողացն...»

## Զ. ՏՕՄԱՐԱԿԱՆ

35. էջ 321—330. Զօհալն հով է և չոր, և իր հովութիւն աւելի է քան...»

Վերջը պակաս է, մեզ թւում է սկիզբը նոյնպէս:

36. էջ 480 – 502. Պատճէն տումարիս Հայոց։ Զկրկնակ տումարդ նոյնպէս արա...» Էջ 469 Աղիւսակ Հայոց ամիսների։

37. էջ 504 – 528. Պատճէն տումարին Համայեցոց։ Կրկնակ ամսոյս այսպէս արա...» Էջ 503 Աղիւսակ Համայեցւոց ամիսների։

38. էջ 529 – 558. «Մեկնութիւն տումարի, զոր արարեալ է Սամուէլի քահանայի ի խնդրոյ Սահփաննոսի իմաստասիրի, Հարց։ Զի՞նչ է տումար. պ. Տումար ասի...» Բովանդակը հարցուպատասխանով։

39. էջ 551 – 556. Անպէտք և անկապ գրուածքներ, նորագոյն գրչի, որոնցից յետոյ մի քանի երես վրացերէն։

1. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 528. Ով եղբարք՝ ի հայոց թվին. ՌՀ(Ե) երկիրն իշխեհացի ի քաղաքն Ոլով գրեցի սակաւ բանս, որ ցուցնէ զղարկն Գաւանգաց թէ ամենայն ամի քանի շաբաթ յառաջ տի լինի և կամ յորում ամի ի միասեղ լինի. թվական և գրով տարոյն գիտ զամենայն և յիշեա զՍերաստացի զաշխատողս և զանարժանս զծուղս ի տէր ամեն։

Սերաստացին, հաւանական է որ, նոյն Ցեսայեայն պիտի լինի, քանի որ այստեղ էլ զծող անուանում է իրեն ինչպէս և հետեւեալ յիշատակագրութեանց մէջ։

2. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 27, 204 և 379 «զՑեսայեայ զծաւղս յիշել աղաչեմ թվ. ՌՀԵ=1626։

3. էջ 203. Լուսանցքում հետեւեալ հետաքրքրական ծանօթութիւն ենք կարդում.

«Թվ. յ. Նանա սարկաւագ ասորի մեկնեաց զաւետարանն Յովհաննու ի խնդրոյ Հայոց իշխանին վկային Քրիստոսի Սմպատայ». որին անմիջապէս հետեւում է այս «և ջրագորն ի Հաղբատ շինեցաւ»

## 13.

## ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՄՆԾՈՒԹԻՒՆ 17×12,4 սմ։—ԿԱԶՄ տախտակեայ, հին կաշեկազմ, կաշեայ փականքով։—ՎԻՃԱԿ շատ գործածութիւնից աղտոտուած, մի քանի թերթեր ճղուած, միջից թերթեր կտրուած. վերջից պակաս։—ՆԻՒԹ թուղթ, պինդ եւ ողորկ։—ԹԵՐԹ 253։—ՏՈՂ 13։—ԳԻՐ միասին 13×8,5 սմ։—ԽՈՐԱԳԻՐ եւ ՎԵՐՆԱԳԻՐ կարմրատառ։—ՍԿԶԲՆԱԳԻՐ սեւատառ։—ԽՈՐԱՆԱԶԱՐԴ էջ 3, անշուք։—ԹՈՒԱԿԱՆ ԺԶ դարից առաջ։—ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 2։—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ կազմի վերայ գրուած է «գ ի ր ք խ ո ս տ ո վ ա ն ու թ ե ա ն» էջ 1. «№ 196», եւ էջ 2. մի քանի տող անվարժ ձեռքով գրուածքը էջ 1. եւ 506 «Ներ. Յոզ. ղըպ-ջանցի» մատենադարանի կնքադրոշմը։ Սկզբից մի վերջից երկու մագաղաթեայ թերթ աւետարանից միջին երկաթագրով։

Մ ա տ և ա ն ս է Գ ի ր ք խ ո ս տ ո-վ ա ն ո ւ թ ե ա ն։

1. էջ 3—40 «Պատմութիւն և խրատ պատուական և պիտանի, տեառն Աբրայ ասացեալ, վասն խոստովանելոյ զմեղս և տանուլ մեզ ապաշխարութեան։ Որք սուրբ հոգւոյն են ցանկացեալք...»

2. էջ 41—55 «Ի Մեհեկի Ի. Տաւն է ամենաժողով սքանչելի երևմանն փրկական և սուրբ խաչին Քրիստոսի 'ի լեառն Վարագ։ Փրկական և կենդանարար խաչին Քրիստոսի, որ երևեցաւ ի լեառն Վարագ, պատմութիւնն է այսպէս։ Կինկղաւգէս կայսերն Հոռմա... ևն»

3. էջ 55—76 Տեառն Զաքարիայի Հայոց կաթողիկոսի ասացեալ յաղագս արմաւենեացն և ի գալուստ Տեառն մերոյ Յիսուսաղէմ։ «Եւ յեղանելն նորա յերիքով...»

4. էջ 76—91 *Նիկիեմի* ասացեալ. յաղագս պահոց պնդութեան։ Ազգս և կարևոր և օգտակար...»

5. էջ 91—132 Նորին *Նիկիեմի* ասացեալ վասն ողորմութեան աղքատաց ամենայն։ Մի ոք աղայական բարուք և...»

6. էջ 132—175 Նորին *Նիկիեմի* ասացեալ յաղագս ընդունելի և անընդունելի աղաւթից։ Աստուածային զաւրութեամբն...»

7. էջ 175—197 Սրբոյն Յովհաննու *Ոսկեբերանի* Կոստանդինու Պաւլսի հայրապետի ասացեալ ի խաչն տէրունական։ Մի որ ամաւթ համարեսցի...»

8. էջ 197—226 «Սրբոյն Յովհաննու *Ոսկեբերանի*, Կոստանդինու Պաւլսի հայրապետի ասացեալ յաւետիս Աստուածամաւրն։ Դարձեալ խնդութեան...»

9. էջ 226—266 «Տեառն Յովհաննու *Ոսկեբերանի* ասացեալ Յաղագս ապաշխարութեան մեղաւորաց։ Տեսէք յառաջնումն...»

10. էջ 266—319 «Սրբոյն *Յակովբայ Սրճոյ հայրապետին* ասացեալ ի յաւուր մեծ ուրբաթին չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յիններորդ ժամու։ Յաւազակն որ հրաւիրեցաւ ի դրախտն և բերանն որ պահէր զճանապարհ ծառոյն կենաց։ Անծանաւթ ծնունդ ծոցոյ...»

11. էջ 319—... Երանելոյն *Աթանասի* արքեպիսկոպոսի Աղէքսանդրու. Հարցմունք վայելուչք և պատասխանիք Կիւրղի Երուսաղէմի հայրապետի, յաղագս մակացութեան հանճարից։ Հետևումն համարիմ ընդ Աստուծոյ...» (վերջից պակասում է)։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 2. (անփորձ նորագոյն ձեռքով) «Խիստ լաւ խրատ է։ Ես *Պետրոսս* կարդացի և իմացայ. ով հանդիպի կարդացման ողորմի ասէ... ևն։

## 14

## ԳՐԲՋԱՏՈՒՄԱՐ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 11,5×8 *սմ.*—ԿԱԶՄ *թղթեայ, հին կաշեկազմ։*—ՎԻՃԱԿ *միջակ մաքրութեամբ, վերջերը կեղտոտ, թերթերը դեղնած. մի թերթ սկզբում երղուած եւ դուրս հանուած։*—ՆԻՒԹ *թուղթ, պինդ եւ հարթ։*—ԹԵՐԹ 153։—ԴԱՏԱՐԿ *մի թերթ սկզբից մինը վերջից էջ* 1 *եւ* 180—187։—ՏՈՂ 16։—ԳԻՐ *նոտրագիր միասյուն* 7×4,7 *սմ. բոլորագիր սկսեալ էջ* 261—302։—ԽՈՐԱԳԻՐ, ԳԼԽԱԳԻՐ *եւ* ՍԿԶԲՆԱԳԻՐ *կարմրատառ։*—ԽՈՐԱՆԱԶԱՐԴ *էջ* 21, *կարմրաւուն։*—ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ *էջ* 21. *սիրամարգ։*—ԹՈՒԱԿԱՆ ՌՂԸ=1649։—ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ *էջ* 179։—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *կազմի վերայ գրուած է «պարզատումար»։ Էջ* 1. «289 *համար»։ Էջ* 1 *եւ* 302 *«Ներս. հոգեւոր դպրանոցի» մատենադարանի կնքադրոշմը։ Էջ* 21. *կնքադրոշմը երկու տեղ հակառակ դիրքով, որոնց վերայ կայ* 1822 *տարեթիւը. կնիքը բաժանուած է երկու մասի, որոնց իւրաքանչիւրն ունի փակագիր. ա. մասի փակագրի մէջ «Յովհաննէս Պարզեցի» է կարդացւում։*

Մատեան է Պարզատումար.

1. էջ 2—178 Բանալի տաւմարին գիրն դանի է և տանուտէրն ի վերևն խոյն է և կարմիր գրած տաղերն նահանջ է։

Մինչև էջ 178 նոյն է Հ. Յ. Տաշեանի կազմած Վիեննայի հայերէնական մատենադարանի ցուցակի Թ. 25-ի հետ։ Կայ և.

2. էջ 188—212 Տօմարական աղիւսակներ և

3. էջ 213—254 «*Ապրիլեան* ամսոյ այսպէս արա, կալ Յունվար ամիսն և երթ է, է որ մայ կրկնակ է։ Փետրվար ամսոյ կալ...»

4. էջ 255—259 «Յաղագս ընծայումն լուսնի. ասացեալ է մեծ իմաստնոյն *Անդրեասայ*։ Յորժամ լուսինն ի Մարտ ընծայի, և եղջիւրն ուղորդ. գուշակէ բազմութիւն ցորենոյ. և այլ հնդոց մրգոց. և խաղաղութիւն։ Եթէ եղջիւրն ի կախ գուշակէ բազմութիւն չորքոտանեաց և վտատակ մարդ-

կանչ...» Այսպէս և միւս 12 ամիսների վերաբերութեամբ մինչև փետրուար։

5. էջ 261—202 «Նաւասարդ տարեմուտ է Հայոց և Եգիպտոսս ամիս Հռոմայնի։ Գյակայ վանաց Սուրբ Կարապետին և գիւտ գլխուն Յովհաննու։ Վերադարձումն նշխարաց Սուրբ Կարապետին. և ամենայնիւ գլխոյ Նորին և Թագաւորին Արտաւազա. և տարեմտին։ (Այսպէս շարունակում է Հայոց և Հռոմայեցւոց բոլոր ամիսներում պատասխան իւրաքանչիւր օրուայ սրբերի տօները կարգով յիշելով)։

2. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ 179 (բոլորագիր).

Ես Աղէքսանս ցանկացի,
Ի գեղեցիկ և ցանկացի
Ըզբոլոր տումարս ի յինքն ունի
Տպաւորեալ 'ի իւր սրտի։

## 15.

## ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԾԱՅՐԱՔԱՂ

**ՄԵԾՈՒԹԻՒՆ** 14,5×9,6 *սմ* — **ԿԱԶՄ** *տախտակեայ կաշեկազմ, զարդերով. քայքայուած։* — **ՎԻՃԱԿ** *ընդհանրապէս վատ. եւ առհասարակ անընթեռնլի։* — **ՆԻՒԹ** *պինդ եւ անհարթ։* — **ԹԵՐԹ** 226։ — **ՏՈՂ** 18—23։ — **ԳԻՐ** *բոլորգիր միասին.* 6,7×11,5 *սմ. էջ* 437—451 *նոտրագիր. անվարժ գրչութիւն։* — **ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ, ՍԿԶԲՆԱԳԻՐ** *դժգոյն կարմիր։* — **ԹՈՒԱԿԱՆ** *ԺԸ՞ դար* — **ՅԵՂԵԿՈՒԹԻՒՆ** *էջ* 1 *եւ* 452 *«Ներսէս հոգեւոր դպրանոցի» կնքադրոշմը. էջ* 1 *եւ* 5 *գրուած է «համար 288»։ Կազմի մէջքի վերայ գրուած է «Մ ե կ ն ո ւ թ ի ւ ն հ ա մ ա ռ օ տ». բայց թերթելով գիրքը, յարմարագոյն գտանք այն վերնագիրը, որ կայ էջ* 452 *«Աստուածաբանութիւն ծայրաքաղ»։*

Մ ա տ ե ա ն ս է

*Մեկնութիւն համառօտ կամ Աստուածաբանութիւն ծայրաքաղ.*

Մեզ վերջին վերնագիրն աւելի ուղիղ է թւում։ Էջ 200 կարդացւում է այսպիսի վերնագիր զորօրինակ «Վասն դժոխոց». էջ 266 «Վասն չարաց, որ բարիս վայելեն» են եւ։

Այս ձեռագիրը ջնջուած, դժգոյն և այնքան խառն ի խուռն է և թերթերն անկարգ դասաւորուած, որ մեզ անհնարին եղաւ բովանդակութեան մասին մի որոշ բան յայտնել։

## 16.

## Ք Ա Ր Ո Զ Ա Գ Ի Ր Ք

**ՄԵԾՈՒԹԻՒՆ** 23,5×16 *սմ։* — **ԿԱԶՄ** *թղթեայ, դժգոյն թղթով ծածկուած, կազմի մէջքը կաշեայ։* — **ՎԻՃԱԿ** *կեղտոտ, սեւացած, միջից թերթեր կտրուած, վերջից պակաս. սկզբում եղել է ինչպէս* 336 *էջի ներքեւ գրուած է* **ԱՃՀԵ** =175 *թերթ։* — **ՆԻՒԹ** *թուղթ, համարակ [illegible] եւ անհարթ։* — **ԹԵՐԹ** 169։ — **ԴԱՏԱՐԿ** *սկզբից եւ վերջից մի մի թերթ եւ էջ* 6—8, 337—338։ — **ՏՈՂ** 25։ — **ԳԻՐ** *նոտրագիր երկսիւն, իւրաքանչիւրը* 17,5×5 *սմ։* — **ԽՈՐԱԳԻՐ** *եւ* **ՎԵՐՆԱԳԻՐ** *երփներանգ մեծատառ։* **ՍԿԶԲՆԱԳԻՐ** *կարմրատառ։* — **ԽՈՐԱՆԱԶԱՐԴ** *էջ* 9. *գեղեցիկ երփներանգ, բայց խունացած։* — **ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ** *մի քանի հատ անշուք։* — **ԹՈՒԱԿԱՆ** *ԺԸ՞ դար։* — **ՅԵՂԵԿՈՒԹԻՒՆ** *էջ* 1 *կայ «№=95». էջ* 3 *չորս տեղ, էջ* 336 *մի տեղ «Ներս. հոգ. դպրանոցի» կնքադրոշմը։*

## Մատեան է Քարոզգիրք

1. էջ 3—5. Ցանկ գլխակարգութեան։

*2. էջ 9—* «Քարոզ վասն աղօթից, որ ասէ, Երբ երկու ելին ի տաճարն։ Պարտ է գիտել զի...» Վերջը պակաս։

3. էջ *—24. «Քարոզ վեցերորդ կիրակէի որ, ասէ, Արթուն կացէք»։

Որ քարոզի սկիզբը պակաս է, հարցական նշանով որոշեցինք. իսկ վերնագրերը ցանկից առանք եւ փակագծի մէջ դնելով լրացուցինք:

4. էջ 24—33. «Քարոզ Սրբոյն Գ. Լուսաւորչին (վասն սրբոյն Գրիգորի Հ. Լուսաւորչին) Հայաստանեայց հայրապետին ի բանն, որ ասէ։ Բարեգութին և բարերարն...» Թերթ է կտրուած։

5. էջ *33—43. «Քարոզ վասն պաշտաման պատուհասի ի բանն Յովելեա մարգարէին, որ ասէ. Փող հարէք ի Սիոն. սրբեցէք պահս, քարոզեցէք պաղատանս, ժողովեցէք զծերս և զայլս։ Փոխանելով փափկական է մարգոյս բնութիւն...»

6. էջ 43—* «Քարոզ վասն ողորմութեան ի բանն աւետարանին, որ ասէ. Եղերուք գթած, որպէս և հայրն ձեր երկնաւոր գթած է։ Յորժամ որ տեսանէ...»

Էջ 25-ից յետոյ թերթեր են պակաս եւ ամբողջ գլուխներ որոնց վերնագրերը ցանկից առանք * որոշելով:

*7. էջ *53—57. «Քարոզ վասն մեծատանն և Ղազարու, որ ասէ, Այր մի էր մեծատուն և ագանէր։

*8. «Քարոզ ի բանն տեառն, որ ասէ. Եղերուք խորագէտ իբրև զօձ և միամիտ իբրև զա...»։

*9. «Քարոզ ի բան մարգարէին, որ ասէ. որպէս խմի և քարրի. գի»։

*10. «Քարոզ ի բան Սողոմոնի, որ ասէ. Որ զանձն իւր ի գործս իւր ոչ բժշկէ։

*11. «Քարոզ ի բանն Սողոմոնի, որ ասէ. Մահ և կեանք ի ձեռն լեզուի է և»։

*12. «Քարոզ ի բանն Յոհաննու, որ ասէ. Որ ատէ զեղբայր»։

*13. «Քարոզ ի բանն Յոբա, որ ասէ. Աղօթք իմ սուրբ են և ճշմարիտ առ»։

*14. «Քարոզ վասն ջրհեղեղին, որ ասէ. Նոյ էր ամաց Ոից և ջուր ջրհեղեղին եղև իվեր»։

*15. «Քարոզ ի բանն, որ ասէ. Աղաղակ Սոդոմացոց»։

*16. «Քարոզ վասն աշտարակին ի բանն, որ ասէ. Եկայք իջցուք և խառնակեսցուք»։

*17. «Քարոզ ի բանն, որ ասէ. Հայեցաւ Աստուած ի Հաբէլ և ի»։

*18. «Բանք իմաստասիրաց հոգևոր՝ և գեղջուկ բառով ասացեալք»։

*19. «Քարոզ վասն ելից ժողովրդեանն յեգիպտոսէ 'ի բանն, որ ասէ Տէր ցՄովսէս. Եկ առաքեսցից զքեզ առ փար»։

20. էջ 57—71 «Քարոզ ի բանն աւետարանի, որ ասէ. Մի տայք զսրբութիւն շանց և մի՛ արկանէք զմարգարիտ ձեր առաջի խոզի։ Առաջին սրբութիւն...»

21. էջ 71—89. «Քարոզ ի բանն, որ ասէ. Ան արիք գնասցուք։ Հրամայէ մարգարէն Միքիա...»

22. էջ 89—97. «Քարոզ ի բան յօրինացն Մովսէսի, որ ասէ, Պատուեա զհայր քո և զմայր զի քեզ բարի լինիցի յերկրի Եւ պարտ է եղբայրք գիտել...»

23. էջ 97—108. «Քարոզ ի բան Սողոմոնի, որ ասէ, Աւրհնեա անձն իմ զՏէր և։ Անձն զբանական հոգին իմանի...»

24. էջ 108—117. «Վասն խոստովանութեան բան խրատական հարկաւոր և յոյժ օգտակար։ Բայց նախ վասն խոստովանութեան...»

25. էջ 117—144. «Քարոզ ի բան Սողոմոնի, որ ասէ. Որ ողորմի աղքատին փոխ տայ Աստուծոյ Այսպէս հրամայեն վարդապետք...»

26. էջ 144—164. «Քարոզ ննջեցելոց վասն միխիթարութեան սրտի ողբացողաց ի վերայ մեռելոց. Վարդապետք ամենայն ասեն ..»

*27. «Քարոզ աւետեաց Աստուածածնին, որ ասէ, Եւ յամսեանն վեցերորդի»։

28. էջ* 165—170. «Քարոզ ծննդեան Յովհաննու ի բանն որ ասէ, Դու մանուկ մարգարէ բարձրի»։

29. էջ 170—176. «Նորի՞ն քարոզ Յոհաննու ի բանն, որ ասէ, Առաքեսցից զհրեշտակ իմ առաջի քո, որ պատրաստեսցէ զճանապարհս իմ առաջի քո։ Դիտելի է զի գիրք սուրբ...»

30. էջ 176—184. «Քարոզ վասն ծընընդեանն և մոգուցն ի բանն, որ ասէ. Ահա մոգք յարևելից եկին։ Ո՞ւր է որ ծնաւ ար։ Ի վերայ բանիս այս...»

31. էջ 184—198. «Քարոզ Տեառն ընդառաջին ի բանն, որ ասէ. Իբրև լցան աւուրք սրբութեան, ածին զմանուկ Յիսուս։ Լոյսն ի Հայրական ծոցոյ...»

32. էջ 198. «Նորին քարոզ վասն տեառն ընդառաջին ի բանն, որ ասէ. Իբրև ածին ծնաւղքն զմանուկն Յիսուս։ Զպատճառ աւուրս տօնի...» Համարեա ամբողջովին պակաս։

33. էջ 199—201. «Քարոզ վասն շաբաթապահոց այլ և վասն առաջաւորին ի բանն Յոհաննու։ Ահա երեք...»

34. էջ 201—211. Դարձեալ ի նոյն խորհուրդ քարոզ ի բան Յովնանու մարգարէի, որ ասէ. Ահա երեք աւուրք և այլ ևս ոչ իցէ Նինուէ։ Գիտելի է զի հնար է...»

35. էջ 211—224. «Քարոզ Գրիգորի վարդապետի ասացեալ վասն խոստովանութեան ի բանն Եսայեա մարգարէի, որ ասէ. Լուացարուք սրբեցարուք։ Զսրբութիւն և զմաքրութիւն աղտեղութեան...»

36. էջ 224—232. «Քարոզ ապաշխարութեան ի բանն, որ ասէ. Ապաշխարեցէք զի մերձեալ է արք։ Նախ տեսցուք թէ զի՞նչ է ապաշխարութիւն...»

37. էջ 232—246. «Քարոզ պահոց ի բանն աւետարանին, որ ասէ. Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ ի հոգւոյն, փորձեալ ի սատանայէ և պահեալ զխ. տիւ և զ։ Գրեալ է ի գիրս...»

38. էջ 247—266. «Քարոզ դարձեալ ի նոյն խորհուրդ, որ ասէ. Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ ի հոգւ։ Գրեալ Յուդիթ թէ Հոլոփեռնէս չար իշխանն...»

39. էջ 267—* «Քարոզ դարձեալ ի նոյն բանն, որ ասէ. Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ ի հոգւոյն փորձեալ ի սատանայէ։ Իմաստունքն թէ գող ոք առնէր...»

*40. էջ* — 307. Քարոզ մեծի սրբութեան խաչին խորհրդոյ ի բանն Յակովբա Նահապետին, որ ասէ. Իշաաւիղէ.

41. էջ 307—310* «Քարոզ մեծի շաբաթուն ի բանն, որ ասէր. Որպէս Յովնան էր ի փոր կէտին զերիս տիւս և զերիս գիշերս նոյնպէս և որդի մարդոյ ի սիրտ երկրի։ Գիտելի է զի...»

* 42. էջ 311*—312* «Դարձեալ քարոզ վասն մեծի շաբաթին ի բանն, որ ասէ. Եկն Մարիամ Մագթաղենացի և միւս Մա...»

* 43. էջ 313*—325. «Քարոզ վասն հաղորդութեան։

44. էջ 325—327. «Քարոզ վասն պատարագի խորհրդոյ ի բանն, որ ասէ. Առ Յիսուս հաց աւրհնեաց, եբեկ և ետ աշակերտացն և ասէ. կերայք ի սմանէ այս է մարմին իմ։ Գրեալ է թագաւորութիւն...»

45. էջ 327—331. «Քարոզ նշման Ս. Աստուածածնին ի բան մարգարէին Եսայեա, որ ասէ. Ահաւասիկ Տէր նստեալ ի վերայ թեթև ամպոց եկեսցէ յԵգիպտոս։ Ահաւասիկ իբրև ամպոյ ասէ...»

46. ԽԵ. էջ 331—336*. «Քարոզ ի բանն Աստուած, որ ասէ. Ես եմ հովիւ քաջ, հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց։ Ասեն վարդապետք...»

Վերջը պակաս. իսկ բուն ցանկի պիտի լինէին և հետևեալ գլուխները։

*47. ԽԶ. Այլ քարոզ դարձեալ ի նոյն բանն, որ ասէ։ Ես եմ հովիւ քաջ. հովիւ քաջ...»

*48. ԽԷ. Քարոզ ի բանն Տեառն, որ ասէ. Ամենայն ծառ, որ ոչ առնէ պտուղ բարի...»

*49. ԽԸ. «Քարոզ ի բանն Տեառն, որ ասէ. Զգոյշ լերուք ի սուտ մարգարէից անտի, որ...»

*50. ԽԹ. «Քարոզ ի բան Տեառն, որ ասէ. Ծառ բարի պտուղ բարի առնէ և ծառ չար...»

*51. Ծ. «Մեկնութիւն արարածոց. Այլ և գաւառաց և թագաւորաց...»

*52. ԾԱ. Մեկնութիւն ամարի.

*53. ԾԲ. Նախերգան քարոզաց։

## 17.

### ՎԱՐՔ Ս. Գ. ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

**ՄԵԾՈՒԹԻՒՆ** 23×18.5 *սմ.*—**ԿԱԶՄ** *Թղթեայ, նոր. մէջը կաշեպատ:*—**ՎԻՃԱԿ** *լաւ։*—**ՆԻՒԹ** *Թուղթ, պինդ եւ հարթ:*—**ԹԵՐԹ** 128։—**ԳՐԱՑԱՐԿ** *սկզբից մի, վերջից երկու թերթ:*—**ՏՈՂ.** 27—30:—**ԳԻՐ** *շաղագիր։*—**ԼՈՒՍԱՆՑՔՈՒՄ** *նշանակուած են գրուածքիս աղբիւրները:*—**ԹՈՒԱԿԱՆ** *«սկըսեալ* 1831 *մարտի* 1-*իցն եւ յապրիլի մէկն վերջացեալ»*—**ԳՐԻՉ** *«Աղէքսանդր Թայիրեանց»*—**ՏԵՂ** *Տփխիս»։*—**ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ** *Առաջին կողքի ներքին երեսում տպագրուած թերթերի վրայ կայ «Աղէքսանդր Ղազարեան Թահիրեանց», որի տակը* «1160»։

**Մ ա տ ե ա ն ս  է**

Պատմութիւն վարուց Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին...

«Աշխատութիւն Հայր Մատթէոս կրօնաւոր վարդապետի հաւանութեամբ սրբոյ Հօր իւրոյ Մխիթարայ վարդապետի...»

Տպագրուած է արդէն «յամի տեառն 1749... Ի Վենետիկ, ի տպարանի Անտոնի Պորթոլիի» Հ. Գ. Զար. Հայկ. մատենագրութիւն էջ 573։

## 18.

### ՍԱՂՄՈՍԻ ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՔԱՂՈՒԱԾՈՅՔ

**ՄԵԾՈՒԹԻՒՆ** 27×18 *սմ.*—**ԿԱԶՄ** *հին. տախտակեայ կաշեկազմ. կողքերի դրսի երեսներին խաչաձեւ զարդեր դրոշմուած։*—**ՎԻՃԱԿ** *ընդհանրապէս լաւ, տեղ տեղ քրքրուած, ծայրատուած. անվարժ ձեռքեր ներքեւներ խզզել են. վերանորոգուած է* 1627-*ին:*—**ՆԻՒԹ** *Թուղթ, հաստ եւ հարթ:*—**ԹԵՐԹ** 352։—**ԳՐԱՑԱՐԿ** *էջ* 704. *սկզբից եւ էջ* 4-*ից յետոյ թերթեր են պակաս:*—**ՏՈՂ.** 23—37։—**ԳԻՐ** *միջին բոլորագիր. էջ* 5—60 *մանր, անվարժ եւ տգեղ։*—**ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ** *եւ* **ՍԿԶԲՆԱԳԻՐ** *կարմրատառ:*—**ԽՈՐԱՆԱԶԱՐԴ** 7 *հատ, կարմիր. իւրաքանչիւր կանոնի սկզբում. միայն* Ա. *կանոնը չունի։*—**ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ** *կարմիր, իւրաքանչիւր գլխի սկզբում:*—**ԹՈՒԱԿԱՆ** ՊԾԴ = 1405։—**ԳՐԻՉ** *Գրիգոր:*—**ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ** *էջ* 699—700. 701—703. 138, 513, 530 *եւ* 704։—**ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ** *էջ* 10, 210, 318, 319, 416, 513 *փոքր եւ էջ* 417, 538 *մեծ նկարազարդումներ. վերջինիս վրայ պարզ կարդացւում է Ք. ծ. |Ղուկաս վարդապետ|* 1240=1791։ *Արդեօք աշակերտ Ղուկաս կ ա թ ո ւ ղ ի կ ո ս ը՞ էջ* 1 *երկու. էջ* 704 *մի նկարազարդ «Ներս. հոգեւ. ղալաանցի». էջ* 1 *վարը կայ «№—*180, *Սաղմոսաց մեկնութիւն»։*

**Մ ա տ ե ա ն ս  է  Ք ա ղ ո ւ ա ծ ո յ ք  Մ ե կ ն ո ւ թ ե ա ն  Ս ա ղ մ ո ս ա ց  Դ ա ւ թ ի։**

1. էջ 1—60. Նախերգանք, և ա. կանոն։ Սկզբում խնդրել և հետևեալ իւրաքանչիւր կանոնից առաջ 1–4 թերթ ցանկն է։ Սկիզբը պակաս է. էջ 5 սկսւում է։ «Նախ Փարաւոն կոչէին... և»

2. էջ 61—120 բ. կանոն։ Ի կատարած սաղմոս ի Դաւիթ։ Երկրորդ կանոն Որ է ութ և տասներորդ սաղմոս։ Պատճառք ունի զերեք օրէնս, զընական, զգրաւորն և զաւետարանն... և։

3. էջ 121—206 գ. կանոն սաղմոս ի Դաւիթ։ Երեսուն և վեց սաղմոս։ Պատճառ ունի զնախանձելիք ծերութեան Դաւթի։ Դէմքն առողջութիւն է մեղուցելոց...»

4. էջ 267—312 դ. կանոն։ «Ի կատարած վասն ժողովրդեանն, որ ի սրբոցն էին։ Ի ժամանակի զի հալածն զնա այլազգիքն ի Դէթ։ Յարձանագիր սաղմոս ի Դա-

ւթեա։ Ցիսուն և հինգ սաղմոս։ Պատճառ ունի զժողովուրդն ի սրբութեանց հեռացեալ...»

5. էջ 313—414 Ե. կանոն։ Սաղմոս Ցասաւ. ութանասներորդ երկրորդ սաղմոս։ Պատճառ ունի զգերւոյն։ Դէմքն յուզմունք խորհրդոց և կրից մարդկան...»

6. էջ 415—513 Զ. կանոն։ Աղօթք ի Մովսէս յայրն Աստուծոյ։ Վեցերորդ կանոնն է այս։ Աննարակս Անթարքն որ ղանազան կերպս և փոփոխմունս մեր ցուցանէ կարգ կանոնիսս։ Ասաց նախ բարի է Իսրայէլի Աստուած և ուղղոյն սրտիւ։ Այս էր որ ապաւէն եղև մեզ մարմնոյն...»

7. էջ 514—530 Է. կանոն։ Սկզբից թերթ է պակաս. իսկ շարունակութիւնն է էջ 517։ «Իսկ այլք կամաւ և գիտութեամբ մեղանչեն...»

8. էջ 531—698 Ը. կանոն։ «Աւրհնութիւնք աստիճանաց» Ցաղագս ութերորդ կանոնին, որ է ՃԺԹ սաղմոս։ Պատճառք ունի զգերւոյն ազատել։ Դէմք զրնութեանս փրկութիւն։ Կարգն Անդ ամբիծքն ի ճանապարհի...»

1. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 699—700. «Յիշատակարան։ Ընդ որոց վերջինս բանասիրաց և տրուպ խնդրողաց բանին, պիտակ անուն կոչեցեալ *Գրիգոր*, մեղաներկ անձամբ՝ և տխեղծ մտօք, վերստին հաւաքեցի *զպատուածոյս մեկնութեան սաղմոսացն Դաւթի*։ Ի նեղ և տարաբաղդեալ ժամանակիս, յորում *բռնակալն Թամուր*՝ թոյլտուութեամբ վերին խնամոցն. տիրեալ էր բազում աշխարհի և աւերեալ։ Եւ կործանեցաւ յայսմ ամի ՊԾԴ. Թուին։

Եւ պատճառ շարժողութեան վերստին քաղուածոյս՝ նախ՝ *Մեծին Վարդանայ* համառօտ և խորին *տեսութիւնն*, որ անյայտ էր միշտ. հոգացայ յայտնի և ընդարձակ ցուցանել։ Երկրորդ՝ զի առաջին քաղուածոյն կարի կարճ և պակաս թուէր։ Երրորդ՝ ի թախանձանաց ոմանց հարկեցեալ։ Մանաւանդ՝ որ տայ ամենայնի և յայտնէ ում և կամի։ Եւ է պիտանութիւն սորա. նախ ի մեկնիչն Վարդանա դասին ընթերցմանց, պայծառ տեսութեանց՝ այլ և ի բանս խրատու և քարոզութեանց և լուծումն խնդրոյ հարցողաց։ Նա և՝ ի վարժումն իմաստից մտաւոր սաղմոսաց։

Եւ բազում մեկնութիւն կրկին է գրեալ։ Որպէս ողորմութիւն և ճշմարտութիւն և հատուցումն և այլն։ Վասն կրկին պատճառի։ Նախ՝ որ էր յառաջին քաղուածոյն և յերկրորդս գրեցաւ։ Եւ դարձեալ զանդաղկոտ մտաց՝ յուլացեալ անձանց։ Եւ քառակին տեսութիւն ըստ հասակի տեսողաց։ Եւ ոչ ամենայն բանի, զի բոլորին մեկնութիւն յառաջինն գտցի, որպէս ասէ իմաստուն ստորոգիչն աշխարհի։

Արդ՝ եթէ գտցի ինչ 'ի սմա արժանի տեսութեան ձեր տեառն շնորհք և վարժասիրացն նախնի և պակասն՝ տկարութեան մերում ներեսցի։ Այլ և *վարժապետին* իմոյ *Յովհաննու Որոտնեցւոյ* յիշատակ բարի 'ի տէր արձանասցի։

Ընդ որում քաւութիւն բազմազան մեղաց մերոց և ծնողացն կրկին, արեան մերձաւորաց և աշակերտաց յեղբայրաւէր կամաց ձերոց մաղթեսցի։

Որ և գրել աղաչեմ զիմաստուն գաղափարաւղս սակաւս յիշատակի, որպէս և դուք գրեալ լիջիք ի գիրն անջնջելի։

Եւ Ձեզ յիշողացդ ի բարի և մեզ յուսողացս 'ի հողի։ Առ հասարակ Տէրն ողորմեսցի։ Ամէն եղիցի։

Յաջորդ տողերը թէպէտ եւ անմիջապէս, ըստ երեւոյթին, շարունակութիւն են վերի յիշատակարանի, բայց նախ կարմիր գլխատառով բաժանուած է, երկրորդ թէ թանաքը եւ թէ գրչութիւնը նոր է եւ նման յաջորդ, երկրորդ, յիշատակարանին. մանաւանդ որ միեւնոյն անունները եւ 2. յիշատակարանի վերջի տողերում յիշւում են։ Վերջապէս 1. յիշատակարանի վերջի բառերը «Ամէն։ Եղիցի», ինչպէս եւ յաջորդ տողի սկիզբը «Դարձեալ յիշեցէք» նոյն են ապացուցանում։

Դարձեալ յիշեցէք ի յերկնդանաց աղօթս ձեր հեզահոգի և բարեմիտ աստուածասէր, *մեղաւորս Գրիգոր* և ծնողքն իւր, հայրն իւր Մարգարէն, մայրն իւր Դամիկն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք։

2. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ էջ 701—703. *Զվերջին ստացողի սուրբ գրոյս* քաղուածք քաջ և արի բարունակեալ, տեր-

զերալիւր և աշխարհալուսի, ընորհաբաշխի և մարգարէի. ծգնազգեստ և առաքինի, որ է որդի հարազատ և նահատակի ի մեծ ազգէն պարթևացի, Լուսաւորչին Գրիգորի, Յակոբ ընտիր վարդապետի։ Արդ աշխատեաց երեք վանեաց սուրբ Վիրապին խոր կոչեցած՝ Հայոց աթոռ թագ պարծանաց և վանատանեաց. և ի Ուրծառափի վանեաց. Աստուածածնի և Սուրբ Յակոբ ընդ նմին գոված, և աշխատեաց այգեստանեայց, տանց և արմատ բուրաստանեաց. 'ի շինութիւն տանեաց, վախմաց, ժամանակաց, ի հոգևոր և մարմնաւոր առաքինեաց, կոչեաց զմեզ Գեղարգունեայս։ Յետ նորոգել զգիրքս ծերացած, որպէս սիոն նոր զարդարեաց։ Արդ աղաչեմ լսողքն եւ, յիշեսջիք ի մաքրափայլ աղօթս ձեր զբարունակեալ Յակոբ վարդապետն, որ յետ նորոգել զսա ի հալալ ինչից ի յիշատակ իւր հոգւոյն և իւր ծնողացն, հօրն Տէր Հմաւոնին, որ նահատակութեամբ փոխեցաւ 'ի Քրիստոս. և մօրն Աղիզ փաշին և հօր եղբայրն իւր պարոն Տէր Յակոբն և միւս եղբայրն Մելիք աղէն և պապն պարոն Վէլիճանն և եղբայրն Գրիգոր կաթողիկոսն և միւս եղբայրն Աղաճանն և մեծ պապն պարոն Միրզէն և եղբայրքն իմ Վէլիճանն, Յակոբճանն, որ են հանգուցեալ 'ի Քրիստոս. և միւս եղբայրն իմ հարազատ Դուլիճանն և որդին սորայ նորաբողբոջ է Արիճան սարկաւագն և միւս որդին, Զալապին և գուստրն իւր Աղիզ փաշէն, խանում աղէն, Դաստագուլն։ Դարձեալ յիշացէք զպարոն տէր Մանուէլ արքեպիսկոպոսն, որ է առաջնորդ ի սուրբ Վիրապին և հայրն իւր պարոն Միւրիմանն և մայրն իւր Խանփարուսրն և եղբայրն իւր . . . պարոն Էլպէկն, որ է հանգուցեալ ի Քրիստոս։ Դարձեալ յիշեցէք պարոն Թաճէյն և իւր հարսն Սուլթան զատէն. Դողալն, որ է հիւրընկալ. և մեք ետնեալ քան զամենայն հող և մոխիր և անպիտանք։

Աղաչեմ զձեզ. ով սուրբ հանդիպողք, յիշեցէք և զմեզ անյիշելի և զառածեալ սուտ անուամբս, զՑովհաննէս քահանայս, որ չեմ յիշելոյ և զանարժան Սիմէօնս, որ յանուանս ունիմ և ոչ գործս. եթէ միով ողորմեսցին արժան առնէք, Աստուած ձեզ ողորմեսցէ իւր միւս անգամ գալստեան. Ամէն։

Դարձեալ յիշեցէք զՄարգարէն և կողակիցն, Խիկարն, և որդիքն իւր Դաւիթն, Բաղդասարն, Մխիթարն և Մարգարի հայրն Զգաւհրապն, մայրն Թրաւանդէն, Խիկարի հայրն Հաղաւաղն և մայրն Մրաւաթն իշեցէք 'ի Քրիստոս։

Դարձեալ յիշեցէք Գրիգոր մահտասին, որ բազում երախտիք ունի ի վերայ Վիրապին և հայրն իւր Մարգարէն և մայրն իւր Ծամիկն և միւս մահտասին Ամիրաղիզն և եղբայրն իւր Թումայ կրօնաւորն յիշեսջիք ի Քրիստոս, ի թվականութեանս հայոց ՌՀԶ. էր բարով վայելէ։

3. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 530. Զմեղապարտ գծողս Յիվան .՟ յիշեայ ով սուրբ ընթերցողք. և Աստուած զձեզ յիշէ։

## 19.

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 26,3×21 սմ.—ԿԱԶՄ թղթեայ, մէջքը կաշեպատ:—ՎԻՃԱԿ լաւ:—ՆԻՒԹ թուղթ, բարակ եւ ողորկ:—ԹԵՐԹ 115։—ՏՈՂ 36—37։—ԳԻՐ շղագիր միասին 22,5×18 սմ.—ԹՈՒԱԿԱՆ ժԹ դար:—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ էջ III գրուած «Սրբոյն Նանայի Աստուծոյ վարդապետի մեկնութիւն Յովհաննու»: էջ IV. գրուած է «Ներսիսեան ուսումնարանի գրադարանին նուէր նոյն ուսումնարանի V դասատան աշակերտ Ա. Ազ էսեանից: 1892 ամի, 29 փետր. Թիֆլիզ»:

Մատեանս է Աստուծոյ Մեկնութիւն Յովհաննու։

1. էջ V—X «Կանխաբանութիւն։ Ոչինչ ըղձալի է քան...»

2. էջ 1—14 «Գլուխ Ա. Բնաբան. Ի սկզբանն էր բանն. Մեկնութիւն. Պարտ է մեզ ի սկզբան ճառիցս նկատել...»

3. էջ 14—19 «Գլ. Բ. Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ի Կանայ...»

4. էջ 19—31 «Գլ. Գ. Եւ էր այր մի ի փարիսեցւոցն Նիկոդիմոս անուն նորա իշխան Հրէից...»

5. էջ 31—42 «Գլ. Դ. Իսկ իբրեւ գիտաց Յիսուս եթէ լուան Փարիսեցիքն, եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ...»

6. էջ 42—55 «Գլ. Ե. Յետ այսորիկ տօն էր Հրէից. և ել Յիսուս յԵրուսաղէմ...»

7. էջ 55—72 «Գլ. Զ. Յետ այսորիկ գնաց Յիսուս յայնկոյս ծովուն Գալիլեացւոց...»

8. էջ 72—82 «Գլ. Է. Յետ այսորիկ շրջէր Յիսուս ի Գալիլեա...»

9. էջ 82—93 Գլ. Ը. Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա Յիսուս և ասէ. Ես եմ լոյս աշխարհի...

Ութերորդ գլուխը բաժանուած չէ, ինչպէս միւսները, այլ կցուած գ-ին, անշուշտ սխալմամբ. որին հետեւում թ. գլուխը. արդէն նկատելի կերպով բաժանուած եւ վերտառութեամբ է, ինչպէս միւսները։ Սակայն դիտելու արժանին այն է որ Ը. գլխի սկիզբը 1—14 տան մեկնութիւնը, այն է շնացող կնոջ պատմութիւնը, չկայ։ Այս մեկնութիւնը՝ ոչ թէ նախան գրել է եւ պատահմամբ կորած արտագրողների անզգուշութիւնից, այլ հաւանական է, որ նա երբեք չէ գրել. քանի որ ձեռագրներ կան, որոնց մէջ շնացող կնոջ պատմութիւնը չկայ։

Ի հաստատութիւն մեր կարծիքի այս առթիւ յառաջ ենք բերում 1867-ին Երուսաղէմի սուրբ Յակովբեանց վանքում նոր կատալոգանի էջ 306 Յովհաննու աւետարանի Ը. գլխի սկզբում շնացող կնոջ պատմութեան ներքեւ գրուած հետեւեալ ծանօթութիւնը։

«Ի հին երկաթագիր և ի բոլորագիր ձեռագիրս, որոց հետեւեցաք յառաջնում եւ երկրորդումն յայսմիկ տպագրութեան, է զի ոմանք խոպա զանց առնեն զպատմութիւն կնոջն շնացելոյ. սկսեալ ի 53 համարոյ նախընթաց գլխոյ մինչեւ ի 11 համարն. եւ ոմանք ի բոլորագիր օրինակաց ունին զնոյն ի փախճանն եղեալ, որպէս եւ մեք եդաք յառաջին տպագրութեանն. իսկ արդ հարկ եղեւ մեզ հետեւիլ հասարակ տպագիր աւետարանաց։

10. էջ 93—102 «Գլ. Թ. Եւ մինչդեռ անցանէր, ետես այր մի կոյր ի ծնէ...»

11. էջ 102—114 «Գլ. Ժ. Ամէն ամէն ասեմ ձեզ, որ ոչ մտանէ ընդ դուռն ի գաւիթ...»

12. էջ 114—127 «Գլ. ԺԱ. Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բեթանիա...»

13. էջ 127—143 «Գլ. ԺԲ. Իսկ Յիսուս վեց աւուրբք յառաջ քան զզատիկն եկն ի Բեթանիա...»

14. էջ 143—149 «Գլ. ԺԳ. Յառաջագոյն քան զտօնն զատկի, գիտաց Յիսուս եթէ հասեալ է ժամ նորա...»

15. էջ 149—158 «Գլ. ԺԴ. Մի խռովեսցին սիրտք ձեր, այլ հաւատայցէք յԱստուած և յիս հաւատացէք...»

16. էջ 158—104 «Գլ. ԺԵ. Ես եմ որթն ճշմարիտ, և Հայր իմ մշակ է...»

17. էջ 164—173 «Գլ. ԺԶ. Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի մի գայթակղեսջիք...»

18. էջ 173—180 «Գլ. ԺԷ. Զայս իբրեւ խօսեցաւ Յիսուս, համբարձ զաչս իւր յերկինս և ասէ...»

19 էջ 180—187 «Գլ. ԺԸ. Զայս իբրեւ ասաց Յիսուս, ել աշակերտօքն հանդերձ յայնկոյս ձորոյն Կեդրոնի...»

20. էջ 187—199 «Գլ. ԺԹ. Յայնժամ առեալ Պիղատոս զՅիսուս և գան եհար զնա...»

21. էջ 199—208 «Գլ. Ի. Եւ ի միաշաբաթուն Մարիամ Մագդաղենացի գայ առաւօտուն...»

22. էջ 208—216 «Գլ. ԻԱ. Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր...»

Նաեւ Այսու մասին տես մեր ցուցակի 12 ձեռագրի յիշատակագրութիւն 3. եւ համեմատիր Հայր Գ. Զարպհանալեանի Հայկ. թարգմ. էջ 610։

## 20.

### ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԱՌԱԿԱՑ ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆԻ·

ՄՆԾՈՒԹԻՒՆ 23×18,5 *սմ:*—ԿԱԶՄ *թղթակազմ.*—ՎԻՃԱԿ *վատ, գրերը ղժգոյն. կազմը խաղտուած.*—ՆԻՒԹ *թուղթ բարակ եւ հարթ.*—ԹԵՐԹ 43.—ԴԱՏԱՐԿ *մի թերթ սկզբից, էջ* 76 *եւ* 80—84.—ՏՈՂ 38.—ԳԻՐ *նոտրագիր երկսիւն, խորանչիւրը* 19,3×6,8 *սմ.*—ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ *եւ* ՍԿԶԲՆԱԳԻՐ *կարմիր.*—ԹՈՒԱԿԱՆ 1772 *մարտի* 12.—ԳՐԻՉ *Մանտեսի Ստեփան.*—ՏԵՂ *Պասրա.*—ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ *էջ* 79.—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *էջ* 1. *եւ* 84 *«Ներս. հոգեւ. դպրանոցի» կնքադրոշմը: Գրքի մէջքի վրայ գրուած է «Գ ի ր ք վ կ ա յ ո ւ թ ե ա ն» իսկ էջ* I. *«№* 127 *մատեան որ կոչի գ ր չ ե ա յ մ կ ն ո ւ թ ի ւ ն»*

Մատեանս է Մեկնութիւն Առակաց սուրբ Աւետարանի.

Բովանդակում է նոյն խնդր Թ. 7. այն տարբերութեամբ՝ որ առաջին երկու գլուխների տեղերը փոփոխուած են:

Պակաս է Թ. 7-ի մէջ էջ 172—245 գտնուածը. աւելի է միայն էջ 77—79 «Այս չէ շարագրեալ գրքոյս»

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. էջ 79. Սիրելի և ազնուական եղբօր պարոն Պօղոսի Բերթումեանի: Ցայտ լիցի ազնուութեան քում. զի զմեկնութիւն չորից գլխոց աւետարանին, զոր արարեալ է եղբօր քում Պետրոսի վարդապետի, գտեալ առ փոխանորդի լուսահոգի Յովսէփ վարդապետի որդոյ Էջմիածնոյ նուիրակի, ետու *Մանտեսի Ստեփանին* ընդ օրինակե՛լ զ՚ն և զօրինակն առաքեցի առ ազնուութիւնդ: Այս անուս արարեալ բարեպաշտութիւնդ զսխալանս գրչիս նե. աններգողի համարեալ զգրողն. յընթեռնուլն ձեր զայն. և ի շահելն ի նմանէ գտցուք և մեք մասնակից առաւելութեանն նորին. Զի մեռեալ մեր միանգամ յայդ պարտէզ ծաղկալից և փայլեալ յանուշահոտութենէ դորին. փափաքելի եղև մեզ հանապազ ի դոյն զմայլիլ ողջ լեր: Ամի Տեառն 1772: Ի մարտի 12:

Ի *Պասրա.* Նուաստ ծառայ Մահտեսի *Աստուածատուր Դաւթեան Թիֆլիզցի:*

## 21.

### ՏԵԼԵՄԱՔ

ՄՆԾՈՒԹԻՒՆ 32×19,5 *սմ:*—ԿԱԶՄ *խաւաքարտ, կաշեկազմ:*—ՎԻՃԱԿ *լաւ:*—ՆԻՒԹ *թուղթ կապոյտ:*—ԹԵՐԹ 268:—ԴԱՏԱՐԿ 5 *թերթ սկզբից, էջ* 53—56, 62—526:—ՏՈՂ 31—37:—ԳԻՐ *շղագիր:*—ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ և ՍԿԶԲՆԱԳԻՐ *սեւ գլխատառերով:*—ԹՈՒԱԿԱՆ *ԺԹ դար:*—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *սկզբի* 1. *թերթի ա. էջում գրուած է «№* 187. *գրչեայ Տելեմաք». Նոյն տեղում եւ վերջին թերթի բ. երեսում կայ «Ներս. հոգ. դպրանոց»ի մատենադարանի կնքադրոշմը:*

Մատեանս է Տելեմաքայ որդւոյն Ոդիսեայ

1. էջ 1—52 Տելեմաքի ա. և բ. գիրքը.

Մեզ յայտնի երկու հ. Մանուէլ Ջախջախեանի և հ. Եդուարդ Հիւրմիւզի գրա-

բառ թարգմանութիւնը չէ այս, այլ սակաւ ինչ նման է հայ ընթերցողներին անծանօթ Պարոն Խօճենցի թարգմանութեան։

Հ. Գ. Զար. Հայկական Մատենագրութեան մէջ յիշուած չլինելով, յառաջ ենք բերում ամբողջ վերնագիրը։

„Փոխադրեալ ի գաղղիացւոց եւ յիտալացւոց լեզուէ ի հայ բարբառ ջանիւ եւ աշխատասիրութեամբ Պարոն Մարգար Զաքարիայի Խօճենց Նորճուղեցւոյ։ Արտագրեալ զգուշութեամբ ի ձեռագրոյ թարգմանչին ի Թադդէոս վարդապետէ Կոստանդնուպօլսեցւոյ Մարուքեան։ Տպագրեալ ի վեհափառ հայրապետութեան Լուսանցնցուղ եւ քրիստոսակիր Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Տեառն Ղուկասու երիցս երանեալ սրբազնասուրբ կաթուղիկոսի ամենայն Հայոց։

Հրամանաւ՝ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի Ծայրագոյն Նուիրակի եւ Հիւսիսային կողմանս եղեալ ազգի Հայոց՝ առաքելաշաւիղ առաջնորդի, ամենահնեցի Ներկայարարողի Արղութեանց իշխանազնեայ Տեառն Յովսէփայ պատկառելի Սրբազան Արք եպիսկոպոսի, Հիմնադրի Նոր Նախիջեւանու եւ Գրիգորիուպօլու քաղաքացն։

Արդեամբ եւ ծախիւք բարեպաշտօն եւ մեծահաւատ Ջուղայեցի պայծառ իշխան Աղայ Յօհաննէսին Գերաքեան, բնակելոյն ի Հնդիկս, ի Սուրաթ։

Յամի Տեառն 1794, ի Հոկտեմբերի 10. իսկ ի թուին Հայոց ՌՄԽԳ։

Ի տպարանի նորին բարձր Սրբազնութեան, որ արփիանման պայծառացեալն է՝ զուարթառատ եւ արդիւնաւոր տրովք, ի Հնդիկս՝ ի զանազան քաղաքս բնակեալ բարեսէր մեծազնէից հասարակութիւնն։

Ընդ հովանեաւ երկնահանդէտ Սուրբ Խաչ վանիցն՝ որ ի Նորն Նախիջեւան։

2. էջ 57 «Արուեստ բանական կամ տրամաբանութիւն Փրանկիսկոսի Սոաւէի։ Փոխեաց ի հայս. Հայր Արսէն վարդապետ Անտոնեան Մխիթարեանց ի Վենետիկ ի տպարանի Մխիթարեանց 1825։ Յորմէ քաղեալ ընտրանաւ, զբառս և զբանս զոմանս յօգուտ գրասիրաց, 'ի Լօռու Մելիքեանց Գրիգոր քահանայէ, ի յիշատակ վայելողաց—1831 յամի ի Տփխիս»։ Կայ միմիայն «Յառաջաբանութենէ թարգմանչին» 16 տող։

3. էջ 57—61 Համառօտ պատմութիւն իմաստասիրութեան մանաւանդ ըստ մասին բանական արուեստի ընազանցութեան. և բարոյականի։ Աստ մինչև վերջ բոլոր թերթերը դատարկ։

22 և 22ա.

## ԲԱՌԱՐԱՆ ԱՆԳԼԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 41×16,5 սմ։—ԿԱԶՄ բարակ թղթեայ, կաշեպատ։—ՎԻՃԱԿ լաւ պահուած, կազմը սակաւ ինչ փչացած։—ՆԻՒԹ թուղթ։—ԹԵՐԹ 186. 22ի էջ 1—370 իսկ 22ա. 104. էջ 371—570։ —ԴԱՍԱՐԿ 22ի սկզբից 1, իսկ 22ա-ի սկզբից եւ վերջից երկերկու թերթ։—ՏՈՂ 40—65. բառերի դիմաց շատ տեղ համապատասխան բառերը պակաս են։ —ԳԻՐ լատիներէնը սովորական գրչութիւն, իսկ դիմացի հայերէնը նօտրագիր։—ԹՈՒԱԿԱՆ ժը՞ դար։—ՏԵՂ զուցէ Հնդկաստան։ — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ. 22ա. կողքի ներսի երեսին մի քանի բառեր, դիմացը հայերէն նշանակութիւնը. էջ 1. երեք, էջ 370, մի եւ 22 ա. էջ 371 եւ վերջի դատարկ թերթի երկրորդ երեսն ունեն «Ներս. Հոգ. դպրանոցի» մատենադարանի կնքադրոշմը։ Առաջին եւ երկրորդ հատորի սկզբի դատարկ թերթերի եւ երեսի վերայ մատիտով գրուած է «Բ ա ռ ա ր ա ն լ ա տ ի ն լ ե զ ո ւ ի»։

Մ ա տ ե ա ն ս է Ա ն գ լ ե ր է ն-Հ ա յ ե- ր է ն բ ա ռ ա ր ա ն.

I. 22 սկսում է էջ 1 Abbadon և վերջանում է էջ 370 quicksigled բառով. իսկ

II. 22 սկսւում է quicksilver և վերջանում էջ 570 Zootomy բառով։

## 23.

# ԲԱՆՔ ՈՍԿԻԱԿԱՆՔ

**ՄԵԾՈՒԹԻՒՆ** 34,5×22 *սմ.*—**ԿԱԶՄ** *խաւաքարտ, զոմաւոր թղթով պատած. մէջքը եւ կողքերի ծայրերը ունի կաշեայ կապերիք։*—**ՎԻՃԱԿ** *լաւ։*—**ՆԻՒԹ** *թուղթ, պինդ եւ հարթ։*—**ԹԵՐԹ** 126։—**ԴԱՏԱՐԿ** *էջ* 18—140. 142—146. 154—173. 178—188. 191—200. 216—233։—**ՏՈՂ** 52—67։—**ԳԻՐ** *տգեղ նոտրագիր, երկսիւն խորաքանչիւրը* 30×8,5 *սմ. բայց էջ* 201—215 *միասիւն։*—**ԹՈՒԱԿԱՆ** 1837, *մայիսի* 10։—**ԳՐԻՉ** *Գրիգոր քահանայ Լոռու-Մելիքեան։*—**ՏԵՂ** *Տփխիս։*—**ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ** *էջ* 5 *լուսանցքում։*—**ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ** *էջ* 3, 5 *եւ* 251 *«Մերս. հոգ. ղալանցի» կնքադրոշմը. ա. կողքի ներսի երեսին մի քանի տող գրուածք. վերջին թերթը կպած է կողքին։ էջ* 3 *այսպէս «*№ 182 *բ ա ն ք ո ս կ ի ա կ ա ն ք գ ր չ ե ա յ»։*

### Մ ա տ ե ա ն ս է.

*Բանք Ոսկիականք* քաղեալք ընտրանաւ ի հոգելից գրոց տարբեկան ատածից. *աշխատասիրութեամբ Գրիգոր քահանայի Լոռու-Մէլիքեանց* ի պէտս բանասէր եղբարց, և յաւէտ քարոզչաց սրբոյ եկեղեցւոյ։

1. էջ 5—17. և էջ 41 խրատներ ամիսների իւրաքանչիւր օրուան համար, Յունուարն ամբողջ. Փետրուարից մի մասը. և էջ 41 Յուլիսւ Հատ պակաս է։

2. էջ 103 Կերակուր քահանայից։

3. էջ 141 Արշալոյս լուսգրից լուսերի։

4. էջ 149—152 Բացայայտութիւն խրթին բառից պատմագրութեան սրբոյն Եղիշէի (և էջ 158 գովեստ մատենագրութեան սրբոյ Եղիշէի)։

Հետաքրքրութիւնների հարցասիրութեան գէթ մասամբ գոհացում տալու համար յառաջ ենք բերում առանձին կարեւորութիւն ունեցող բառերը։

*Ամփարղակալետ*, պետ ամրոցի, բերդապանց կամ աշտարակոց բերդապահ. ղալաբէգի, խուլէ տիղտարի ըստ տաճկաց։

*Բոզպայիղ*. է մինն ի հինգ աղանդոց մոգական կրօնից, որ 'ի հին բառարանի մերում գրի բոզպայիտ. և մեկնի մեղաց քաւարան։

*Գումարտակ*. ատա նշանակէ ակնակուռ քառամանեակ, ամփոփէն գերդանակը։

*Գրուան*. Պարսից բառ. նշանակէ յանցաւոր, մեղապարտ, վնասակար, ղարահաթլը։

*Դարիթիւ*. կաղմի ի պարսկական բառից թիւրէ, որ է օրէնք և թու, որ է ծածկեալ և յարկ և նշանակէ օրինատուն, որով իմանի յարկն՝ ուր իշխանն մոգպետաց ստվորէր դատել և վճռել զիրս կրօնի։

*Դենիմազդէն*. է բառ պարսկական, որ ըստ հին բառարանին մերում թարգմանի հաւատոյ հաւատ։

*Դերանդերձապետ*. նշանակէ փոխանորդն վերակացուի ապարանիցն արքունի Սարայ քէհեասը վէքիլի։

*Երան եւ տաներան*. են բառ պարսկական, որք ըստ հին բառարանին մերոյ թարգմանին մեծարոյ և պատուական։

*Զանդիկ*. ըստ հին բառարանին մերոյ թարգմանի ապաստաւոր և է անուն յատուկ իմն կրօնի հրապաշտ մոգուց և ըստ Եզնկայ մոգն և զանդիկն համակրօն են. բայց միայն մոգն առ երես կերպարանի առաքինի, այլ զանդիկն ամենայնիւ է զեղխ։

*Թրաւշ*. անարգ, անպիտան, երբեմն նշանակէ ուլունս, պուճուխ։

*Լաշկար*. զորք, ասկեր, երբեմն՝ ամուր տեղի և ատա ուր ասի անձանկ լաշկար՝ իմանի կիրճ, կամ նեղ անցք այսինքն է կապան։

*Խոնաստան*. ըստ Պարսից բանաւորեալ, օդոյ կամ հրապարակ, տանեան, ուր բազմի խանն կամ թագաւորն և արքունի գործակալք՝ յորոշել զխնդիր ինչ. դիւան։

*Խոնծանունք*. նշանակէ զարկեղս գանձուց. խազնէ. է բառ պարսից։

*Համանրէն*. է մինն 'ի հինգ աղանդոց

մոգական կրօնից. ըստ բառին միահաւատ. իսկ հին բառագիրքն մեր թարգմանէ, ամենահաւատ կամ բոլորից ուսուցիչ. յայսմ աղանդոյ էր երանելի մոգպետն, որ հաւատաց ի Քրիստոս և նահատակեցաւ։

*Համհարզ.* պարսկական բառ, նշանակէ համախոհ, միասիրտ, կամակից։

*Հարմատ.* ձևացեալ ի պարսկական բառէս՝ հիւմիւզդ, որ է անուն Լուսնթագ մոլորակին, զոր պաշտէին իբրև զԱստուած. յայս միտ առեալ ի հարմատայ, նշանակէ յառաջ եկեալ 'ի սերմանէ չաստուածոց կամ դիւցազնց. ևս է անուն քաղաքի, որ մերձ Ովկիանու, երբ ասի 'ի հարմատայ ցուցանի լինել ի քաղաքէն Հիւրմիւզդայ։

*Ղալիչ.* ըստ մեզ համագունդ, բայց երևի նշանակել սուր պատնէշ կամ մաթարիզ։

*Մովպետան մովպետ.* ըստ պարսից հնչի մուպէտան մուպէտ կամ մէվպէտան մէվպէտ. նշանակէ գիտնականն մոգուց, այսինքն մոգպետաց մոգպետ, կամ իշխանաց իշխան։

*Շախուռապետ.* համբարակապետ, վերակացուն արքունական ապարանից կամ շտեմարանապետն. ամբէր էմինի. կամ վէքիլ խարջ։

*Պաշնաւիկ.* է մինն ի հինգ աղանդոց մոգական կրօնից. որոց հեղինակն եղեալ է գիտնական ոմն պալհաւ. այսինքն Բուխարացի։

*Պարմայել.* հնարել, կազմել, յառաջ բերել։

*Պարսկաղէն.* է մինն 'ի հինգ աղանդոց մոգական կրօնի, որոյ հեղինակն եղեալ է ոմն 'ի գիտնականացն Պարսից։

*Պարտքաշ.* կամ ամպարտքաշ. է մինն 'ի հինգ աղանդոց մոգական կրօնից, այսինքն համակրօն, լուսամիտ։

*Ռատ.* Հայոց և Պարսից նշանակէ առատ, լիովին։

*Սաղար.* այսինքն է սալար. բառ պարսից, զօրագլուխ, սէրասկէր։

*Վատախտարակ առնել.* չարաչար խօսել կամ չփոթել. կամ դարանամուտ լինելով ընդ կրունկն դարձուցանել և չփոթել։

*Վզուրկ.* պարսից ըստ նոցա վէւզիւրք այսինքն մեծ, ուլու։

*Վռամ.* ըստ Պարսից պէհրամ, է անուն մոլորակին, որ 'ի մեզ կոչի Հրատ. ուստի Վռամականն նշանակէ զայն՝ որ վերաբերի առ Հրատն, որ իմանի կրակն ատրուշանաց, զոր վառէին հրապաշտք 'ի պատիւ Հրատին։

*Փազամ.* պարսից է. 'ի մեզ գրի փանդամ և մեկնի կողպատ երեսաց, սաւան, պիւրիւկ։

> Որքան յիշում ենք Եղիշէի ձեռագրերն ունին եւ մի այլ փոփոխակ, փոխանակ փանդամի՝ փաձամ, որ օխալ է:
>
> Փանդամը մի բարակ լաթի կտոր է, որ կապում էին քթի տակից, վերին շրթունքի վերայ, որպէս զի շունչը խմոր շաղախելուս եւ հունցելուս, վերջինիս չառնէր և չպղծէր. այսպէսով միայն հասկանալի է դառնում Եղիշէի խօսքը ,,հաց առանց փանդամի զանկցին'':

*Քամիզ.* օշնան խառն է, զոր այլ գիրք օձառ ասեն լուալեաց, չօղան խոտ։

*Քրիտիկար.* Պարսից. վաստակաւոր, գործունեայ, շահարար։

*Քրտիկար առնել.* Պարսից. մանաւորարար առեալ նշանակէ լուանալ զորբանն, զի այս բան, «քրտիկար չառնելով դժ տայք խարամանւոյն», այսինքն լուացուած ի փոր չառնելով դժ տայք խարամանւոյն, այսինքն դիւաց. ըստ հին բառարանին։

5. էջ 174 Թուղթ *Գիւտ* հայրապետի *առ Դաւիթ* անյաղթ։

6. էջ 175—176 Ոսկեբերանից, Շնորհալուց քաղուածք։

7. էջ 177 «Վասն գլուխ ասացեալ բառին ի Լատինացւոց՝ որրոյն Պետրոսի համօրէն առաքելոց և եկեղեցեաց քրիստոնէից, ջրուած ի *Միքայել վարդապետէ Սալլանթեանց*։

8. էջ 189—190 «Քաղուածք ի պատմագրութեանց չորից ինքնակալութեանց Աղամայ մինչև ջրհեղեղն...»

9. էջ 201 Ուղերձ *առ Ներսէս Ե.* Աշտարակեցի «Ասացեալ ի Նիկողայոսէ Տէր Աւետիսեան Պալուէ, ի փառաւոր հանդիսի նոր տարւոյ 1847 ամի ի մէկն յունուարի. Գոլով 12 ամաց ի Տփխիս»։

10. էջ 204—205 Ներբողեան յաւուր տօնի օծման Տեառն Ցովհաննիսի սրբազնա-

գոյն ի Տէր Սահակ գիտնական քահանայէ Սահառունեանց ծիր որոտոց աշխարհ համայն... Եւ ի 22 Նոյեմբ. 1839 ամի ի Ս. Էջմիածին։

11. էջ 206 Ի շնորհաւորութիւն Նոր Տարւոյ ազնուական Պետրոս ամիրայի և Պայազատի Նուսուֆեան, անզոյգ բարերարի մերոյ. որ ի *Թրեստ* քաղաք յԵւրոպիայ։ Ի Զմիւռնիայ 1837։ «Ոչ փայլեթոն մանուկ անվարժ ի հիւս անուղղ լուսացոյտ...» և այլն

12. էջ 207 «Ի *Թրեստ*։ Ազնուական աղայ Աբրահամ Առաքել Թպրոյենց անաղօտ պարծանք հայրենեացդ։ Ի կամարին գետ կարկաչուն, որ զկողիւք հայրենւոյս...։ Ն. Տ. Գրիգոր Տէր-Վարժապետեան։ (էջ 206 ոտանաւորն էլ թերևս սորանն է).

13. էջ 208—214 Ոտանաւորներ, և մի ճառ, ստորագրուած «Գրիգոր Տէր-Վարժապետեան 1834 ի 25 օգոստոսի ի Զմիւռնիա։

14. էջ 214—215 «Առ ամենապատիւ գիտնական պարոն Գրիգոր Վանանդեցի Տէր Յովհաննէսեան, և առ աշակերտակից նորուն Գրիգոր աղայ Կոստանեանց նուէր... ի Պօլսոյ Խաչատուր Միսաքեան Իւսկիւտարցի։ Հոկտ. 9, 1836։

15. էջ 215 «Տաղք ի վերայ մահուան տեառն Յովհաննու Վանանդեցւոյ բազմարգիւն վարդապետի Մեսրովբեան ուսումնարանիս. ասացեալ յաւուր հանգիսի վարձատրութեան աշակերտաց ի Հայրապետէ Թովմայեան։ Վեց տուն չորստողեան. 11 փետր. 1840. ի գործարանի ուսումնարանիս։

16. էջ 217—225 «Ի *Գրովմաիոսի* գրութեանց, ի ծանօթութեանց Գիլոն Բիբլիոս ի գիրս իւր, որ յաղագս վարձուց...»

17. էջ 226 «Ի Չարչարանս Քրիստոսի Տեառն երգ։ Ի գառն յեռնում յայն գիշերին... Եւն։ 13 տուն հինգտողեան։ Հրջանի տարւոյ կեանք մեր նմանակ... Եւն 1839 յօրացոյց, որ ի Կ. Պօլիս։

18. էջ 227—229 «Ընտիր ասացուածք։ Ակն կալ յայլմէ, զոր ինչ դու նմա առնես...»

19. էջ 230 ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՃԱՇՈՑԻ։ Նա գրեցաւ սուրբ գիրս (Յիշատակարան ճաշոցս) յերկրին Զագամայ (որ է ի Շամշադին) 'ի գեղջս՝ որ կոչի *Սուլթանացիք*, ընդ հովանեաւ 'ի դուռն խնկալից սուրբ Աստուածածնի 'ի տնուչութեան Հայոց հանուրց սեռի Տեառն *Նասալեայ* երիցն երանեալ երջանիկ *հայրապետի*, և քաջ հռետորի, յաթոռ սուրբ Գանձասարի. Նա 'ի վերատեսչութեան նահանգին վերին Զագամայ Ղարաղայու կամ Ղզղու ձորիս հեզահոգի արհի եպիսկոպոսի և շնորհազարդ *հայրապետին* տեառն *Դաւթի* յաթոռ սուրբ Գոշին Մխիթարայ 'Ի ժամանակս թագաւորին Պարսից Սուլթան Հուսէյինի ի Միրզայ շահին. Նա 'ի տէրութենէ Թուրգանլարու նահանգիս Ալի ղուլի խանին, և Շահրիար Աղաբարին, որդոյ Քալանթար Իսկանդարին, որդոյ Հախնազարին, որդոց Աղաբարայ Քեալանթարին. Նա մելիքութեան Թահիր բագին։

*Արտագրեցի* զայս յիշատակարան 'ի վերոյիշեալ յայսմաւուրէ. որ կայ այսօր 'ի տան Ղորղանի որդի հանգուցեալ տէր Գրիգորին, մականուանեալն ճանճ. Ի Տփխիս քաղաքն. *Գրիգոր քահանայ՝ Հօռու-Մելիքեան*։

20. էջ 230—232 Աշխարհագրական պատմական և այլ մանրմունր տեղեկութիւններ։

21. էջ 234—237 «Ընտիր ասացուածք։ Ամենայն նիւթոյ որ մարմին է ապականութիւն հետևի. Լամբրոն՝՝ յառեննաբանութեան... Եւն.

22. 238—250 «Գիտելիք, զուարճալիք. ոտանաւորներ և դէսից դէնից հաւաքած ծանօթութիւններ, լուրեր, տեղեկութիւններ։—Առհասարակ բովանդակ գրքի մէջ զետեղուած են ամեն տեսակ մանրմունր տեղեկութիւններ, մենք միայն գլխաւոր և կարևոր մասերը նշանակեցինք։

## 24.

## ԺԵՄԱՐԱՆ ՄՏԱՑ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 34×21 սմ:—ԿԱԶՄ նոր, խաւաքարտ, գունաւոր թղթով պատած, մէջքը եւ ծայրերը կաշեպատ. կողքերի ծայրերին կայ երկ-երկու թել, գիրքը կապելու համար:—ՎԻՃԱԿ լաւ:—ՆԻՒԹ թուղթ, պինդ եւ հարթ:—ԹԵՐԹ 144:—ՊԱՏԱՌԿ էջ 2—4, 14—54. 56—72, 77—96, 115—288:—ՏՈՂ 42—52:—ԳԻՐ նոտրագիր երկսիւն, իւրաքանչիւրը 30,5×8 սմ:—ԹՈՒԱԿԱՆ ԺԹ դար:—ԳՐԻՉ Գրիգոր քահանայ Լօռու-Մելիքեան:—ՏԵՂ Տփխիս—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ա կողքի ներսի կողմը թանաքով գրուած է «№ 181» էջ 1. երեք եւ 282 մի կնքադրոշմ «Ներս. հոգեւ. դպրանոցի»:—Գիրքը թուղթը, գիրը եւ արտաքին բոլոր հանգամանքները ցոյց են տալիս որ Լօռու Մելիքեան քահանայի գործն է. համեմատել ձեռագիր 23-ի հետ:

**Մատեանս է ժեմարան մտաց**

1. էջ 1 «Երաշացոյց լուսնի և բարի աւուրց: 1. Օրն բարի է, երաշն ի բարին կատարի: 2. Օրն չէ բարի, երաշն երեք օրն կատարի...» են:

2. էջ 5—13 Մեծն Կոստանդիանոսի պատմութիւնը մինչև 312 թուականը:

3. էջ 55 «Ամբ քո ոչ անցանեն Յօբացուցէ, 1837 ամի Վենետիկ: Կեցի զքաղցում ձմերուկս...» 21 տող:

4. էջ 73—76 Ի քրիստոնէական Յակոբ պատրիարգի: Այն է հաւատով բարի քրիստոնեայ, որ գործով լինի Քրիստոսի ծառայ:

5. էջ 97—114 «Քաղուած յաստուածաշնչմանութեան մատենէ Բերթումեան աստուածաբան արհի եպիսկոպոսի Աղամալեան հին Նախիջևանցւոյ, միաբանի սրբոյ աթոռոյն Էջմիածնի. յաւուրս Սիմէոնի կաթուղիկոսի երևանցւոյ»: Մնացեալն ամբողջովին դատարկ:

Բերթումեան Աստուածաշնչմանութիւն գիրքը տպագրուած է Կալկաթա 1827 ամի: Տես Հ. Գար. Զար. Մատենագիտութիւն:

## 25.

## ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԶԱՆԱԶԱՆ ՆԻՒԹՈՑ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 34×22 սմ:—ԿԱԶՄ նոր, խաւաքարտ, գունաւոր թղթով պատած, մէջքը եւ ծայրերը կաշեպատ:—ՎԻՃԱԿ լաւ, կողքերի եզերը մաշուած. էջ 10-ից յետոյ թերթեր են կտրուած:—ՆԻՒԹ թուղթ, կապոյտ, պինդ եւ անհարթ:—ԹԵՐԹ 92:—ՊԱՏԱՌԿ էջ 10, 132—150, 152, 155—158, 160—172, 176—183:—ՏՈՂ 37—65:—ԳԻՐ նոտրագիր:—ԹՈՒԱԿԱՆ 1843 ապրիլի 2:—ԳՐԻՉ Գրիգոր քահանայ Լօռու-Մելիքեան:—ՏԵՂ ի Տփխիս—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ա կողքի ներսի կողմը քաղուածքներ. էջ 1 երեք, էջ 182 մի կնքադրոշմ «Ներս. հոգեւ. դպրանոցի»: Մէջքի վրայ կցուած թերթիկի վրայ գրուած է «մեկնութիւն զանազան նիւթոց»:

**Մատեանս է ժողովածոյ**

1. էջ 1—9 Զանազան գրքերից ծանօթութիւններ, հատուածներ և ոտանաւորներ: Լօռու Մելիքեանց ցեղի մասին տեղեկութիւն էջ 2—3:

2. 2. էջ 9—10 Վարք նախնի իմաստասիրաց. համառօտ ի հայր Ցակոբոս վրդապետ ճէլալեան տպագրեալ ի Վենետիկ 1826.

3. էջ 60 Տպագրուած գրքերից քաղուածքներ. ոտանաւորներ օրացոյցներից. հին գասական հեղինակների մասին Ինճիճեանից: Մխիթար արքայի Մատթէոսի աւետարանի մեկնութիւնից: Շատ տեղ բազմաթիւ թերթեր դատարկ են թողնուած և ապա յանկարծ մի ծանօթութիւն, արտագրութիւն և այլն: Գիրքը մի քաղուածք է:

26

# ԴՈՒՈԼՋԱՆԵԱԴԻՐՔ

**ՄԵԾՈՒԹԻՒՆ** 33,5×22,5 *սմ:*—**ԿԱԶՄ** *խաւաքարտ կաշեկազմ. կողքերի դրսի երեսները զարդերով. իւրաքանչիւր կողքի ծայրին երեք մետաղեայ ճարմանդի մնացորդներ:*—**ՎԻՃԱԿ** *շատ լաւ պահուած. կտուցքը ծիրանագոյն:*—**ՆԻՒԹ** *թուղթ, պինդ եւ հարթ:*—**ԹԵՐԹ** 230:—**ԴԱՍԱՐԿ** *սկզբից երեք թերթ. վերջից* 212 *ա. եւ* 213—227. *մի մի էլ կազմի հետ. այլ եւ տարեթիւների հանդէպ ամբողջ բազմաթիւ էջեր:*—**ՏՈՂԵՐՆ** *սկսում են, բացի թթ* 208*ա*—212*բ, ոչ ըստ սովորականի վերեւից ներքեւ երկայնութեամբ, այլ լայնութեամբ, այնպէս որ երկու էջը մի է դառնում:*—**ԳԻՐ** *սերոյն նոտրագիր:*—**ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ և ՍԿԶԲՆԱԳԻՐ** *կարմիր: Մի քանի երփնագոյն վերնագրներ եւս ունին:*—**ԽՈՐԱՆԱԶԱՐԴ** *թթ* 5*ա մի հատ գեղեցիկ, երփնագոյն եւ ոսկեզօծ:*—**ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ** *թթ* 5*ա երփնագոյն եւ ոսկեզօծ:*—**ԹՈՒԱԿԱՆ** 1712. *բայց թթ* 208*բ*—212*բ* 1763:—**ԳՐԻՉ** *թթ* 1—208*ա (որի հեղինակն է Ա. Եւդոկիացին) անյայտ. բայց թթ* 208*բ*—212*բ Ղուկիանոս (որն եւ հեղինակ է թթ.* 210*բ*—212*բ, այսինքն Ղազար կաթողիկոսից մինչեւ Սիմէօնը. իսկ միջանկեալ ժամանակի, Աստուածատուրից մինչեւ Ղազար, Յակոբ Շամախեցին)*—**ՏԵՂ** *Ս. Էջմիածի՞ն:*—**ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ** *թթ* 4*բ,* 7*ա,* 92*բ,* 208*ա,* 211*ա:*—**ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ** *թթ* 4*բ,* 5*բ,* 7*բ,* 92*բ, եւ* 164*ա ունի մ'իւնոյն կնքադրոշմը «Քի+ծո | Յակոբ վարդապետ (փակագրով) ՌճԶԴ. ապա կաթողիկոս, որն եւ գրքիս տէրն է: Մատեանս ժապաւինեալ է. թթ* Iա, 227*բ մի մի զմուռի կնքադրոշմ' զինանշանով: թթ* IIա, 1*ա,* 224*բ,* 225*բ,* 226*բ «Ներս. հոգ. ղալթանցի» հին կնքադրոշմը, որ տարբերւում է միւս ձեռագրների մէջ եղածներից: Առաջին կողքի ներսի կողմը տպագրուած տոմսակի վրայ կայ «Աղէքսանդր Ղազարեան Թահիրեանց»:*

### Մատեան է

Գիրք պատմութեանց, որ կոչի Գաւազանագիրք, համահաւաքեցեալ ի հին գաւազանագրաց և ի վիպասանութեանց ի մի, բազմօք երկամբք: Յաւմանէ Աստուածաշխատասիրէ Եւդոկացւոյ: Ի Հայրապետութեան ամենայն Հայոց և Սրբոյ Էջմիածնի լուսանկար աթոռոյ տեառն Աստուածատրոյ: Յամի տեառն 1714 և ի Հայոց ՌՃԿ և Գ թուին:

1. Թթ 1ա. Մի տոմարաւոր չորս սիւնակի բաժանուած, հետեւեալ կերպով մի մի բառից.

| | | | |
|---|---|---|---|
| Ի սէր | սիրոյդ | տենչիւ | փարիմ |
| սիրոյդ | տենչմամբ | ես յոյժ | յարիմ |
| տենչիւ | ես յոյժ | սրտա | մարիմ |
| փարիմ | յարիմ | մարիմ | տապիմ |

Վեց տուն ես այս կերպ չորս տողեան. իսկ վերջին իններորդ տունն է թէպէտ դարձեալ չորս ամանակով, բայց երեք տողեան.

Թիւ փրկչական առ այս յայտնի որոյ գումարն ըստ որ դասի | զարբահամու զօրացն խմբի վեցեկս պատկեալ վերագրի | երկարելեան ի բաց բառնի ապա թիւն ուղեալ լինի |

2. Թթ. 2բ—1բ. «Ցանկ նորագիւտ պատմագրիս: Ծանիր ով ընթերցող այս ցանկիս մէջն որում տեղի որ թիւ առէ, այն թիւս է ի սկզբանէ արարածոց թիւն, որ եղծն է գաւազանացն յաջէ, որպէս զի դիւրաւ գտանիցես այս թւոյս զոր զորինչ խնդրես մինչև ի ծնունդն Քրիստոսի. այս թւովս տանի շարն ցանկիս. իսկ յետ ծննդեան Քրիստոսի կենարարին ամաւն տանի ցանգն մինչև հայոց թուականն: Իսկ յետ այնմ Հայոց թւով գացես մինչև ի ներկայն յորում եմ:

Վասն մեզաց Աղամա պատմութեան տես ի թիւն մէկ: Վասն ծննդեան Կայենի, տես ի թիւն հզ... են:

3. Թ. 3բ—4ա. Հրեշտակների իննը դա-

որ կամարների մէջ. տակը գրուած «Դրախտն Ադամա վտտանաւորս։

4. Թ. 4բ—4բ. կամարներ 1. «Հրեղէն կամար անշարժ» 2. «Կամար ջրեղէն կամ պիլօր և սա ևս անշարժ... ևն։ Այսպէս 17 հատ։

5. Թ. 5ա. «Ադամ ստեղծեալ ի դաշտն Քեբրոնի ի յագարակին որ կոչի այժմս սուրբ Սիոն։

6. Թ. 5բ. «Ըստ մեծին Արիստոտէլի իմաստասիրի, հարկէ ամենայն ընդհանրական յառաջանալ յիրում առանձնական...» Այս էջն ունի մի գեղեցիկ, երփներանգ և ոսկեզօծ խորան և թռչնագիր։

7. Թ. 6ա. Մի ծառ, որը հին և նոր կտակարանի բաժանումը ճիւղաւորութեամբ ներկայացնում է։

8. Թ. 6ա—7ա «Հեղինակի յառաջաբանը։

Քանզի զմտաւ իմով ածելով զճապաղութիւն աստուածային պատմութեանցս....

Արդ այսու պայմանաւ եղև հնար համեմատութեան ի դարեաց ի դար նկարեալ *զատազանքն* մինչև ի Քրիստոս, ի գիրքս այս որպէս տեսանի և *աղիսակքն* սկսանի ի նախահօրէն Ադամայ յետ արտաքսելոյն ի անուշակ կենացն. և տանի մինչ ի ջրհեղեղն նահապետաց թիւովքն միարան. մինչ ի Նոյի. Ռ. ամ. որ լինի յԱդամայ մինչ ի ջրհեղեղն ամք ՍՄԽԲ ըստ Աստուածաշնչին. և ըստ հ.նից թարգմանութեան համեմատ ի միասին և անմիաբան ի յայլ պատմագրացս. որպէս Ասորոց թարգմանն Ներ այլք պատմիչք, յԱդամայ ի ջրհեղեղն, ամ աւելի բերէ քան ըզ ՍՄԽԲ ամ. և ամ պակաս, զոր կարի սղալ գայր միջոցն և շաղփաղփ. նա և ոչ կարացի իմանալ զպատճառ անմիաբանութեան սոցա, թէ ընդէ՞ր ոչ համեմատին Աստուածաշնչին և հ. նից. վասն այն ոչ կարացի իշխել անմիաբան թըւոցն ձեռն արկանել և գրել աւել և պակաս թիւով, զոր բազում անգամ ամօրեայք պարապեալ ի հետ գրքիս բեղէմ թափ թղթովք համարելով զթիւքն անմիաբան թէ մինչ ի ջրհեղեղն, և անտի յաշտարակն անցանելով. մինչև Մովսէս և յելսն Եգիպտոսի. և անդուստ ի Սողոմոն և այլ առաջեալ մինչ ի Զօրաբաբէլ. և ի ծննդեան Քրիստոսի էր որ միաբանէին թիւքն. եւ էր որ ոչ ամ յառաջ և ամ յետ տանէր զդարագլուխ, թուականքն. վասն այն անճար մնացի զ.հ.նիցն ձեռնարկի և կրկին բեղէմով համարեալ յԱդամայ մինչ ի ծննդեան Քրիստոսի. գտի համեմատ զանմիաբանութիւքըն, որ այց արար ինձ իմանալի արեգակն ի բարձանց. փաղափափաք ըղձիս զոր ցանկայի ի տուէ և ի գիշերի. և խոկացի միշտ թէ որով կերպիւ կարիցեմ զայս տաժանելի պատմագիրքս հեշտօրէն և նորաշէն աղիւսակօք *հասուցանել մինչ ի մեր ժամանակս*. և այսպէս շնորհիւ տեառն զորգիտութիւնս ի բաց եսեալ համարձակեցայ յայս գործ և սկսայ յամի տեառն ՌՉԺԲ և հայոց ՌՃԿԱ=1712 յամսեանն հոկտեմբերի. Բ. օրն Նշի յերես անկեալ խնդրեմ իմաստուն ընթերցողդ. որ զծառայս ձեր անդատապարտ թողուլ ի բանբասանաց. զի կարն իմ այսչափ բաւեաց. և հազիւ թէ հնարել կարացի զգիրքս աշխատութեամբ այսքան։ Նուաստագոյն ծառայ՝ *Աստիք գրիչ, ծնունդ Տիգրանակերտեան եւ նորակերտող գրքիս:*

9. Թ 7ա—57ա. «Ցաղագս մեղացն Ադամա։ Իբրև մեղաւ Ադամ ի դրախտին, կոչեաց Աստուած զայրն...»

Ձախ կողքին սիւնակներով բաժանուած մի կարգ պլրուբնով նշանակուած են տարեթուերը. որոնց վերնագիրն է կարմրատառ «Ամք խեկքանէ Արարածոց». իւրաքանչիւր տարեթուի առաջ գրուած է պատահած իրողութիւնները։ Այնուհետև աւելանում են իւրաքանչիւր նահապետի կեանքի տարիները ծննդից մինչև մահը, որով վերջանում է աղիւսակը. այսպէս՝ առաջին սիւնակին կից աւելանում է «Ամք Կայենի», և ապա հետզհետէ «ամք կենաց Հաբէլի» Թ 9ա—12բ։ «Ամք Սէթա» Թ 13ա—17ա։ Ծնունդք և ամք Ենովսա Թ 17բ—21բ։ Կայնանա Թ22ա—25բ։ Մաղաղիէլի Թ 26ա—29բ։ Ցարեդի Թ 30ա—30բ։ Թագաւոր Ազօրոս և ամքն Թ 31բ—33ա։ «Ծն. և ամքն Ենովքա Թ 33բ—37բ։ Մաթուսաղայի Թ 37բ—42ա։ Ամք Ղամէքա Թ 42բ—45բ։ Ծնունդք Նոյի Թ46ա—55բ։ Սէմա Թ 55բ—56ա։ Քամա Թ 56բ։ Ցաբեթի Թ 57ա։ Թ 57բ կան Նոյեան տապանի *ձեւերը Ա.* ըստ

Մովսէսի, Բ. ըստ Յովսեփայ պատմագրի. Գ. ըստ Հին վարդապետաց. Դ. ըստ Հին վարդապետաց. և Ե. Չև տապանին ըստ կարծեաց փիլիսոփայից: — Թագաւորների աղիւսակում Ազորոսից յետոյ կարգով գալիս են Եղբայրոս, Աղմոն, Ամոսս. Ամք Թագաւորին Ռասոնա. Դինոս, Տուրգինոս. Մամփիոս. Օտարգիոս. Քոխուսթրոս:

10. ԹԹ. 57բ—91ա. Նոյ նահապետի, որդւոց, թոռների և բոլոր ժառանգների տարեթուերը կարմիր ու սեւախառն վերնագրներով, և սոցա գիմաց պատմական անցքերը նահապետների ծիւղագրութեամբ:

11. ԹԹ. 91բ—212 Հին և Նոր արեւելեան և արեւմտեան ազգերի և պետութեանց թագաւորների անունները տարեթըւերով.—Հրէից քահանայապետները, Քրիստոսի ծննդեան և մեր թուականը: Հետաքրքիր է ԹԹ. 144բ Երուսաղէմի յատակագիծը «Քաղաքս այս Երուսաղէմ է, ըստ վերջին շինուածն Նէէմանու»

Հայոց քաղաքական եւ եկեղեցական պատմութիւնը մէջը հիւսուածէ: Շատ հետաքրքիր ձեռագիր է երեւում եւ ամէն կողմից արժանի ուշադրութեան: Թերեւս մի այլ անգամ սորանից ազգային պատմութեան վերաբերեալ նիւթերը հրատարակենք:

1. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԹ 208 ա. Ով ուսումնասէր և իմաստասէր սիրելի և հոգևոր եղբարք մեր՝ են բանքս այսք նախագեկավանք:

Արդ յետինս 'ի սպասաւորաց բանին Յակոբ անուամբ միայն վարդապետս Տամախեցի կոչեցեալ՝ որ ի ՌՃՂԲ թուականիս մերում յորում գրեցուցի և ստացայ զայս գիրք՝ զոր և կարդալ եսու: Այլ և կամեցայ և պաշտած տեսի ի վախճանմանէ սոսի գաւազանական տփոցս՝ զսկիզբն սանել նորայեն՝ գալ և ի ջանել և հաստանել ի մերս ժամանակ. ըստ ոճից և ըստ ձևոց նախկնոյդ գաւազանականի տփոցդ: Գնելով և գրելով համառօտաբար հանդէպ թուականաց՝ զարս ոմանս անուանիս. զեղելութիւնս իրաց և իրակութեանց ոմանց նշանաւորաց անցելոց և ներկայից, որք ի յապագայսն պիտոյացին խնդրողաց: Եւ մանաւանդ զի յայսքան միջոցում ժամանակիս՝ յորում մեք գոմք, անուանի արքն՝ և նշանաւոր եղելութիւնքն ոմանք յոյժ պատշաճաւորք, մի մնասցին յանյայտութեան. այլ յայտնեսցին և իմանիցին և թէ շարք և եթէ բարիք: Ակն ունելով մասին փոքու վարձու բարւոյ, ըստ աշխատանց մերոց սակաւուց, որպէս բազմաշխատ վիպաբանք ընդունին ի Տեառնէ անդ և բարեկրիշխին ի մարդկանէ աստ: Բայց՝ ընդ այսմիկ ժամանակիս ըմբռն վարկայ և բաւական համարեցայ զեօթնեակ գաւազանական տուփս առնել: Յորոց յառաջնումն՝ զամս սկզբան աշխարհիս դնել. յերկրորդումն զամս կենարարին մերոյ Քրիստոսի կարգել. յերրորդումն զթուականն Հայոց կցուցանել ի չորրորդումն զհայրապետսն Հայոց զետեղել. ի հինգերորդումն զթագաւորս Օսմանցեաց դասել. ի վեցերորդումն զթագաւորս Պարսից զՂըզըլբաշից՝ կարգել և յեօթներորդումն զթուականս մահմետականաց դնել: Նաև՝ ըստ հասարակաց գրեանց գրման և ըմբռնման զգրումն գրելեաց և զըմբռնումն գրքոյս ուղղեցի. զի ըստ կարգի ամենայն գրեանց լիցի գրումն և ըմբռնումն նորաշէն գաւազանացս, և մանաւանդ՝ դիւրին և ուղղակի եղիցի ձեռնատու ընթերցողաց: Եւ այսպէս եօթնեակ գաւազանական տփոք, և ուղղակի ձևօք բերեալ հասուցի ի ժամանակս մեր երկամբ բազմօք. և ամենակարող զօրութեամբն և կամեցողութեամբն Աստուծոյ ի փառս նորին. ի յօգուտ մանկանց սորոյ եկեղեցւոյ. ի յիշատակ բարի ի յապագայս՝ իմոյ մեղաւորիս անձինս, այլ և իմոյնոցն ամենից: Վասն որոյ աղաչեմ խոնարհեմ ի հոգևոր եղբարցդ իմոց, զի 'ի յընթեռնուլն ձեր զայս և ի շահիլն՝ յիշեսջիք ի Քրիստոս զիս և զիմայինսն յօժարականօք, զի և դուք յիշեցեալ լինիցիք հանդերձ ձերայինօք ի Քրիստոսէ յաւուրն ահեղին: Ամէն:

Որք վասն իմ ըղթողութիւնս բանիք հայցեն | Նոքա ըղ նոյնս 'ի Քրիստոսէ արդեամբք առցեն:

2. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԹ 211 ա. Երկրորդի հեղինակին գաւազանական գրոցս Տեառն Յակոբայ գիտնականի վարդապետին

Շամախեցւոյ՝ յարակցաբար աշխատութիւն ի գաւազանագիրս յայս ատէն դադարեալ վերջացաւ։

Քանզի էր Թէպէտ սա կարի գիտուն և տեղեակ գրոց աստուածայնոց և փիլիսոփայականաց և հմուտ պատմագրութեանց, և ժամանակին եղելութեանց. և յոյժ առատ և հանճարեղ ի միտս, ի խելս, ի խորհուրդս, ի բանս և ի գործս, և յամենայնի պիտանացու և վարժ ի հոգևորս և ի մարմնաւորս։ Վասն որոյ ոչ Թողուին զսա կաթողիկոսքն ժամանակին հանգիստ և հանդարտ, այլ միշտ ի զբաղալի գործս և ի յաշխատանս ունէին. զի ի գնալ կաթողիկոսաց ի դրունս Թագաւորաց և մեծամեծաց Տաճկաց առանց սորա ոչ գնային և յոչ գնալն իւրեանց զսա առաքէին։ Նա յԱթոռս եկեղոց Տաճկաց մեծաց և փոքունց զսա դիմադրէին։ Նա ամենեքեան եկողքն զսա ճանաչէին։ Նա ժամանակն ևս կարի վրդովեցեալ և աղմըկաշատ և գրեթէ ի ժամանակս Ղազարու, Մինասայ և Աղեքսանդրի կաթողիկոսացն, յորս Թէպէտ նոքա էին կաթողիկոսք. սակայն սա էր կառավարիչն և ցուակիրն սրբոյ Աթոռոյս ըստ յամենայնի։ Նա բաց ի յայսցանեաց, ունէր ևս ինքեան զմեծ և զաշխատալի գործ մի յատուկ ի սուրբ Աթոռոջս. այսինքն զհոգս գրագրութեանց։ Զի գրագիրքն սրբոյ Աթոռոյս ընդ ձեռամբ սորա էին, որոց սա տայր զպատուէրս և զմուսավատայն և զամենայն զցաւսն և հոգսն գրոց և գրելեացս կրէր։ Ուստի ի սրբոյ Աթոռոջս՝ որքան տետր և գիրք օրինակաց և մուսաւատից կոնդակաց Թէ կազմեալ և Թէ անկազմ կոնդակաց՝ նուիրակաց՝ և ժողովքարարաց՝ զմահուանէ և զընտրութենէ կաթողիկոսացն, յանձնարարականաց նուիրակաց՝ և առաջնորդականաց կոնդակաց և շնորհակալական գրոց. և այլոց երկաւորաց, որք գտանին, ի սմանէ են շարադրեցեալք, ըստ մեծի մասին։ Այլ և ունէր սա զգործ մի մեծ և հարկաւոր. այսինքն, զցաստատածութիւն միաբանից սրբոյ Աթոռոյս, որ գրեթէ ի յԱթոռոջս ի սմանէ ծաղկեցաւ ըստ մեծի մասին գիտութիւն գրոց Թէ աստուածայնոց և Թէ իմաստասիրականաց և մանաւանդ արհեստ քերթողութեանց։ Նա զի յայսքան բազմատեսակ և ի զբաղալի հոգս գոլով ի ժամանակս վարդապետութեան և յառաջ հասակին, ոչ կարաց ձեռն արկանել զայսմանէ մեծաց մատենանց արժանի գործոյս, Թէպէտ ունէր միշտ զտենչն և զյօժարութիւն ի սրտին։ Այս 'ի ՌՄԸ Թուականիս մեռաւ մինչ ընտրեցաւ յԱստուծոյ կաթուղիկոս և նստաւ հայրապետ, յայնժամ սկսաւ ձեռն արկանել զսմանէ որոյ հասակն էր լցեալ, կարողութիւն պակասեցեալ, և ոգին և ցաւքն բազմապատկեցեալ. վասն որոյ ի յԱստուածատուր կաթողիկոսէն մինչև ի Ղազար կաթողիկոսն հազիւ երեք ազգաց գաւազանացն, որոյ զաշխատանսն Տէր ի փառս իւր համարեսցէ. և զհոգի նորին ընդ սրբոց հայրապետացն դասեսցէ և ի լոյս երեսաց իւրոց հանգուսցէ. ամէն։

---

Այս ի ՌՄԺԲ Թուոջս մեռաւ և ի մարտի ԻԱ. մինչ վերայիշեցեալ բազմաշխատ Հայրապետն ի Տէր փոխեցաւ, և ի սոյն Թուոջս ի յԱպրիլի ամսոյ Ի ում՞ ընտրութեամբ հոգւոյն Աստուծոյ յաջորդեաց զտեղի սիրածնի և բարեբջանկի հօր իւրոյ և նստաւ Հայրապետ ի սրբոյ Աթոռոջս Էջմիածնի Տէր Սիմէօն առատասիրտ՝ գիտնաշատ և աստուածարան վարդապետն և արհի եպիսկոպոսն Երևանցի (որ էր բնիկ միաբան և մեծավաստակ աշխատաւոր և հոգաակիր զաւակ սրբոյ Աթոռոյս։ Նա և յատուկ և ձեռնասուն աշակերտ նոյնոյ Յակոբայ հոգելոյս հայրապետին)։ Ի յայս դժնէացելում ժամանակոջս և յամենայն անտիրացելումս երկրոջ. յորում նորանոր և արժանի գրեցման եղելութիւնք բաւ շատ պատահէին, և մանաւանդ զաշխատանս ըստ հոգւոյ հօրն իւրոյ ոչ պատշաճ տեսանելով Թողուլ անկատարս. վասն որոյ հարկ եղ ի վերայ անձին Թշուառի և պարսաւակած գրչիս Ղուկիանոսի ծառայիս և ըստ յամենայնի ագիտիս գրել զհարկաւոր եղելութիւնսն 'ի շարս գաւազան ի գրքոյս հասուցանել ի ժամանակս իւր։ Զոր և յանձն առեալ յօժարութեամբ գրեցի բաւ որք հետևեին այսուհետև։ Ուրեմն՝ որք ընթեռնուք և օգտիք ի սմանէ, ընդ երկուց

հեղինակաց զրոցս՝ յիշեսջիք և զվերոյիշեալ Սիմէօն կաթուղիկոսն սրբազան և ծայրագոյն պատրիարքն ամենայն Հայոց և սըրբոյ Էջմիածնի, հանդերձ կրկնակի ծնողիւքն ի Քրիստոս Աստուածն մեր և ի գթութիւնս և յառատ ողորմութիւնս Նորին՝ ի կրկնակի գալստեանն իւրում. Նա յաւէտ յետոյ զիս իբրև երրորդ հեղինակս զՂունկիանոս ապաշնորհ գրիչս ի մաքուր և յերկնաթռիչ յաղօթս ձեր. զի դուք և մեք յիշեցման արժանի լիցուք ի Քրիստոսէ, Ամէն։

3. Թթ 4. Յիշեա Տէր ողորմութեամբ քով զՅակոբ վարդապետ (այս կնիք) բազմամեղ Շամախեցի, զստացողն սորին յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ, հանդերձ կրկնակեօք ծնողօք իւրովք և արիւնակցօք, ընդ որս և զմեզ. և քեզ փառք յաւիտեանս ամէն։

Յակոբ Շամախեցու իսկական ձեռագիրն է, ինչպես եւ հետեւեալը։

4. Թթ 92 բ (կնիք) Շամախեցի ստացող սորին ի ՌՃՂ և Ա=1742 թուին։

## 27.

## ԳԻՐՔ ԽՈՍՏՈՎԱՆԱԿԱՆ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 34×21 սմ։—ԿԱԶՄ նոր խաւաքարտ. մէջքը կաշեպատ, որի վրան ոսկեզօծ տառերով գրքի անունն է դրոշմուած։—ՎԻՃԱԿ լաւ. ճղուած թերթերը նոր կպցրած, էջ 13 վերևի կողմից վերան նոր թուղթ կպցրած եւ գըրուած։—ՆԻՒԹ թուղթ կապոյտ, բարակ պինդ եւ անհարթ։—ԹԵՐԹ 132։—ԴԱՏԱՐԿ մի թերթ սկզբից եւ 10 վերջից նոր սպիտակ թուղթ։—ՏՈՂ 29։—ԳԻՐ նոտրագիր միասին 27,7×14 սմ։—ԹՈՒԱԿԱՆ 1798։—ՏԵՂ Աստրախան։

### Մատեանս է Գիրք Խոստովանական անուանեալ

Ճանապարհ փրկութեան կամ աստուածպաշտական ջերմեռանդ խոկմունք զանազանք. ի յորս պարունակին մասունք աստուածաբանականք և բարոյականք՝ հարկաւորք հասարակաց գիտութեանս Շարադրեալ Թէոդոր Ալեքսանդրովիչ յԷմինայ հանդուցելոյ ի ռէր։ Եւ այժմ թարգմանեալ Յարութիւն Դաւթեան Դելանեան Ջուղայեցւոյ, յամի Տեառն 1798-ին. Աստրախան։

1. էջ 5—10 «Համառօտ կեանք վարուց շարադրողի գրոյս։ Հեղինակ սորին և զայլ բազում մատենից (որոց անուանքն ստորև ամէն ցուցանին) պարոն Էմինն։

2. էջ 11—32 «Նախազգեկութիւն յարինողի գրոյս առ բարեմիտ ընթերցողս։ Այժմ այնքան բազում են յայժ յաշխարհի չարանիւթ կենցաղավարութիւն...»։

3. էջ 3. Ցանկ գլխոց պարունակելոց բանից այսմ մատենի։

4. էջ 33—62 Գլ. (խոկումն առաջնորդ) Ա. Թէ որքան հարկաւոր է մարդոյ զգջալ և խոստովանիլ զմեղս իւր։

5. էջ 62—87 Գլ. (խոկումն) Բ. Մեղքն կուրացուցանէ զմարդ, մինչ զի ոչ տեսանիցէ զչարիսն իւր գործեցեալ, և ոչ իմանայ թէ որքան զօրանս հասուցանէ Նորօք Աստուծոյ։

6. էջ 88—114 Գլ. (խոկումն) Գ. Թէ որպէս սաստկապէս պատժէ Աստուած զմեղաւորս և որպէսի վնասք լինիցին մարդոյ մեղաւորի։

7. էջ 115—149 Գլ. (խոկումն) Դ. Հոգին ի ձեռն մեղաց կորուսանէ զառաջին պայծառութիւն իւր, և լինի գարշելի և զարհուրելի, և թէ որպէսի հնարս ներշնչէ ի նա Աստուած, զի սրբեսցէ զմեղ ի մեղաց։

8. էջ 150—190 Գլ. (և խոկումն) Ե. Յաղագս մոլորութեան, յորում կան մարդիկ, և անմտաբար ի զուր յուսան ողորմութեան Աստուծոյ, կարծելով թէ դիւրաբար փրկիլ կարեն։

9. էջ 191—217 Գլ. (խոկումն) Զ. Ապաշաւումն և գանալն ի մեղաց՝ կայանալ ի խորհուրդ խոստովանութեան և թէ որպէս վայել է, զի խոստովանք մեր լինիցին կատարեալ։

10 էջ 218—251 Գլ. (խոկումն) Է. Յաղագս մահուան. և թէ որպիսի փորձութիւնք, տառապանք և յուսահատութիւնք պատահին մարդոյ մեղաւորի ի վաղճանի աւուր նորին։

11. էջ 252—264 Գլ. (և խոկումն) Ը. Թէ որքան սարսափելի է մարդոյ մեղաւորի դատաստանք Տեառն։

## 28.

## ԲԱՌԱՐԱՆ

**ՄԵԾՈՒԹԻՒՆ** 33×21 *սմ:*—**ԿԱԶՄ** *խաւաքարտ, մէջքը եւ ծայրերը կաշեպատ:*—**ՎԻՃԱԿ** *լաւ:*—**ՆԻՒԹ** *թուղթ, կապոյտ պինդ եւ անհարթ:*—**ԹԵՐԹ** 151։

**Մատեան է Բառարան**

Լատիներէն, ռուսերէն և հայերէն. ամեն երես մէկ-երկու բառ, շատ տեղ միայն լատիներէն։

## 29.

## ՆԱՐԵԿԱՑԻ ԵՒ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ

**ՄԵԾՈՒԹԻՒՆ** 35×22 *սմ:*—**ԿԱԶՄ** *խաւաքարտ, թղթապատ, մէջքը կաշեպատ, վրան կան ոսկեզօծ տառերով «Մեկնութիւն Յովհաննու աւետարանի»։* —**ՎԻՃԱԿ** *լաւ պահուած։ Սկզբից երկու թերթ է կտրուած:*—**ՆԻՒԹ** *նոր թուղթ, գործարանի ռուսերէն կնքադրոշմով:*—**ԹԵՐԹ** 103։—**ԴԱՏԱՐԿ** *մի սկզբից եւ* 3 *վերջից:*—**ՏՈՂ** 42։—**ԳԻՐ** *շղագիր միասին* 27×16 *սմ:*—**ԹՈՒԱԿԱՆ** 1854։—**ԳՐԻՉ** *Ներսէս դպիր Տէր-Բարսեղեան Աբովեանց օծնեցի:*—**ՏԵՂ** *Նոր-Նախիջեւան*—**ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ** *թթ* 103 *ա*։—**ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ** *թթ* 1 *ա. «Ներս. հոգեւ. դպրանոցի» կնքադրոշմը։*

**Մատեան է Մեկնութիւն Աւետարանի**

1. *թերթ* 1—4 «Երանելոյն *Անանիայի վարդապետի ի խորհուրդ Յովհաննու մարգարէի։* Յաղագս Յովհաննու հակիրճ և համառօտ բանիւք...»

2. *թթ* 5*ա*—102 *բ* «Համառօտ *Մեկնութիւն աւետարանին Յովհաննու* նորին *Գրիգորի Տաթեւացւոյ* աշակերտի Յովհաննու Որոտնեցւոյ, հաւաքեալ ի հին և ի նոր թարգմանչաց ի խնդրոյ համաշունչ աշակերտացն։

Երկու հատորի բաժանուած *ա թթ* 5*ա*—44*ա* և *բ թթ* 44 *բ*—102 *բ*։

1. **ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ** էջ 103.

Ի Կայսերութեան Մեծի Ինքնակալին Ամենայն Ռուսաց Նիկողայոսի Պաւլովիչի Առաջնոյ, 'ի հայրապետութեան Տէր Ներսէսի Ե-գի Աշտարակեցւոյ տեառնընտիր Կաթողիկոսի ամենայն Հայոց, Ես Ներսէս ծառայ Քրիստոսի շրջեցայ ընդ հոգևոր հօր իմոյ Սարգիս ծայրագոյն վարդապետի Ջալալեանց գործով քարոզութեան սկսեալ 'ի ծովէն Պոնտոսի ցծովն Կասպից յայսկոյս և յայնկոյս մեծի լերինն Կովկասու և 'ի բոլոր Ռուսաստան ուրանօր գտանէին Հայք և եկեղեցիք Հայոց, հաշիւք քննութիւնք հոգևորական գործոց պատկանելոց հնգեցունց Վիճակաց։ Ի սոյն միջոցի հանդիպեալ եմ 'ի Նոր-Նախիջևան միակ և երևելի քաղաք Հայոց որ 'ի Ռուսաստան առ Դոն գետով, և գտեալ անդանօր զայս պատուական Մեկնութիւն սրբոյ աւետարանին Յովհաննու աւարտեալ սրբոյ հօր մերոյ

Գրիգոր Տաթեւացւոյ. վասն որոյ մեծաւ ուրախութեամբ արտագրեցի զայս 'ի վայելս իմ, բայց միջոցն իմ գոլով սուղ արագեցայ 'ի գրելն։ Ուստի խնդրեմ յեռ ընթեռնելոյ և վայելելոյ զայս գանձ պատուական յիշելոյ արժանի արասջիք զգաստիարակն իմ զՄարգիս վարդապետ, Աղպեան Ջալալեանց. զհայրն իմ Բարսեղ քահանայն Արովեանց օծնեցի, և զմայրնիմ Հռիփսիմէ Սանասարեանց. յուսկ յետոյ և զիս ըզ Ներսէս դպիրս Տէր Բարսեղեանց Արովեանց օծնեցի։ յԱմի Ազգական ՌՅԳ և Փրկչին 1854 'ի 27 յունուարի 'Ի Նոր-Նախիջևան։

Էջիս Ներքև, այլ գրուի

Վերոնշանակեալ Մեկնութեան գիրքս զայս կազմեցաւ 'ի ձեռն Նուաստ ծառայի, և պաշտօնեայ սուրբ Լուսաւորիչ աւագ եկեղեցւոյ Պօղոս քահանայի Խոճեանց, 'ի 1854 և փետրվարի 9. 'ի Նոր-Նախջևան։

## 30

## ԲԻՒԶԱՆԴ ԵՒ ՄԻՔԱՅԷԼ ԱՍՈՐԻ

ՄԵԾՈՒԹԻՒՆ 26,8×20,5 *սմ.*—ԿԱԶՄ *նոր խաւաքարտ, մէջքը կաշեպատ. վրան ոսկեզօծ տառերով դրոշմուած «Փաւստոս Բիւզանդ»:*—ՎԻՃԱԿ *լաւ պահուած. մէկ ամբողջ մին էլ ճղուած կէս թերթ Միքայէլ Ասորուց կազմուած չէ:*—ՆԻՒԹ *թուղթ պինդ եւ յղկուած:*—ԹԵՐԹ 61+2. *հինգ հինգ թերթ եւս սկզբից եւ վերջից նոր կազմելուս կցուած:*—ՏՈՂ *33:*—ԳԻՐ *հին նոտրագիր. երկսիւն, իւրաքանչիւրը* 20,5×6,7 *սմ. վերնագրերը տեղ տեղ բոլորագիր:*—ԽՈՐԱԳԻՐ, ՎԵՐՆԱԳԻՐ և ՍԿԶԲՆԱԳԻՐ *երբեմն թռչնագրով եւ դիմագրով, բոլորն էլ կարմիր:—Մանր մունր* ԽՈՐԱՆԱԶԱՐԴ *էջ* 23,59:—ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ *զոյնզգոյն մեծ եւ փոքր:*—ԹՈՒԱԿԱՆ *ՌՀԳ*=1624:—ՏԵՂ *Տարաշամբի Նախավկայի վանքը՛:*—ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ *էջ* 16—17. 22 *եւ* 23:—ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ *էջ* 1 *կայ* «№ 880», *այստեղ եւ էջ* 122 «*Ներս. հոգևոր դպրանոցի կնքադրոշմը:*—

### Մատեան է Միքայէլ Ասորի և Բիւզանդ։

### Ա.

1. էջ 1—22 Միքայէլ Ասորի։ Յաղագս քահանայութեան և ցուցականաց։

Հատ նման է 1871-ին Երուսաղէմում Միքայէլ Ասորու ժամանակագրութեան հետ տպագրուածին, բայց փոքր ինչ աւել ի ընդարձակ: Թէ տարբերութիւնը տեսնելու և թէ ձեռագրիս վերջին հատուածը մասամբ տպագրուածի մէջ չգտնելուս համար կարեւոր ենք համարում նոյնն այստեղ յառաջ բերել:—

2. էջ 18—22 ՀԳ. Տէր Յովհաննէս մեծարգոյ և յաղթասէր ամս ժը: ՀԳ. Տէր Կոստանդին յերորդ մանէ Հայոց ի գղեկէ Բարձր բերդոյ որ հայի հարաւով ի դաշտն Կիլիկեցւ և ի ծովն Անդրիանու կոչեցեալ, որդի առն արգարոյ և խաղաղականի Վահրամ կոչեցելոյ յորովայնէ ընտրեալ յաստիճան առաքելական 'ի հոգոյն և օրինօք նորին օծեալ, և ըստ կարգի յամենայն գործս եկեղեցւոյ վարժեալ 'ի շնորհս քահանայութեան և յառաջնորդութիւն և յեպիսկոպոսութիւն տեսչութեան, և յամենայնի ընտիր գտեալ և հանգիստ, վասն որոյ և ի կատարման հոգեւորական և մարմնաւորական հասակի, վկայութեամբն Աստուծոյ և մարդկան, մեծի գահու և աթոռոյ հայրապետութեանս Հայաստանեաց արժանաւորանդ լեալ ի շնորհէն և ի բնաւ լրմանէն եկեղեցւոյ բանադատեալ, ըստ օրում և փորձն ցուցաւ, և արդիւնքն յայտնի արարին և միաբանեցաւ ընդ նմա շնորհնւ *Եւ է այժմ ԻԸ. ամ հայրապետութեան նորա ի դղեակն* աստուածապահ *Հռոմկլայ* կոչեցեալ, խաղաղասէր բարուք և անարատ վարուք առ ամենեսեան խաղաղութիւն կալեալ վկայութիւն բարի. և գրուածս յարտաքնոցն կալեալ այցելու որբոց, և այրեաց խնամածու, և գերելոց անխընայ ծախիչ, դարձուցիչ և զարգարիչ հայ-

րենի գծովք զամենեքումբ փարելով և առաւել առ ամենայն կարօտեալս ողորմութեամբ և եկեղեցեաց բազմաց լցուցիչ յարեալ և ի յայլ բարիսն, և զայս մատեան ի գանձս եկեղեցւոյ, և ետ բազմանօք թարգմանել զսա յասորւոյ ի հայս՝ պիտանի և շահաւէտ բուրաստան, լայն և երկայն իմաստիւք լցեալ, և կարճառօտ բանիւք բովանդակեալ. որ ի սուղ ժամանակս կարող է զպատահեալսն 'ի վերայ կացուցանել հին և նոր գիտուածոց։ Այլ և հիմն հաստ և անշարժ աշտարակ իսկ է հայաղաւան հաւատոյ և ուղղափառ խոստովանութեանս վկայս բազումս ցուցանելով յաղգաց ճշմարիտ ուղղեցնացութեան հիմամբ աստուածական և առաքելագիր կայիւք ամրացեալ։ Այլ և յոլովք տարակոյսք և հանկոյցք լուծանուլին 'ի սմա և չէ ինչ զարմանալ ընդ նորալուր և անծանութ բանն որ գտանին ի սմա։ Քանզի Ասորիք բնակութեամբ գաւառաց և բառիւ լեզուաց մօտաւորք են միշտ Հրէիցն լեալ քան զամենայն ազգերդ. և. իջէպ է նոցա, մանաւանդ ծանօթ գոլ հնոյ կտակին քան այլոց։ Նաև որ զայս մատեանս շարայարեալ է Յունաց և յԵգիպտացւոց և ի քաղդէացւոց, գիւանաց և ի դպրոցաց է հաւաքեալ։ Վասն որոյ առաւել սիրելի և պիտանի և հաւատալի է, և վարձ բազումս կալցի առաջի Աստուծոյ, և երախտիս յեկեղեցիս ուղղափառաց վաստակասէր այրն բարեփառ տէր Միխայէլ, զի յոլով սէր և գութ երեւի նա ունել առ ազգս մեր ի գրոց սատի։ Արդ ի յամի Ը երորդի քառասուն երորդի երկերիւր երրորդի Ռ երորդի թվականութեան անժամանակ որդւոյն Աստուծոյ գալստեանն ի ՈՂԷ թվականութեանս հայոց թարգմանեցաւ գիրքս այս յասորոց ի հայս ի հայրապետութեան հայոց տեառն Կոստընդեայ, և ի թագաւորութեան հայոց Հեթմոյ քրիստոսապսակի և զգուշակենցաղ թագուհւոյն իւրոյ Զապէլի, դստեր Լևոնի արքայի, ըստ Աստուծոյ քաղաքավարեալն հնգից եկելոց նոցա զաւակաց ծիրանածնաց, երկուց ուստերաց և երից դստերաց, որոց անուանքն. Լևոն, Թորոս անուամբ հաւուն իւրեանց, որոց հովանի լիցի ամենակալ բազուկն հայրենի, ածելով 'ի գահ հայրենի արքայութեան եղերօք Հայաստանեայց։ Յայսըմ ամի կենդանի էր կորովամիտ և աչողեալն ի բարիս արքահայր նոցա պարոն Կոստանդին և բեկրեալ այլովք դստերօք չորիւք։ Տէր բարսեղ տէրն Դրազարկոնի, և պարոն Սմբատ սպարապետն Հայոց, և պարոն Աւշինն տէրն Կիւռիկոսոյ, և պարոն Լևոն որոց զօրանալ լիցի ըստ հաճոյ Աստուծոյ, հաճել արիութեամբ ըստ հոգոյ և ըստ մարմնոյ։ Եւ էր պատրիարք Ասորւոց ուղղափառաց Մօրիկն տէր Անտիոքու, որ զօրինակն շնորհեաց, և փոխեցաւ 'ի ձեռն Շաւխոյ սրբասնեալ քահանայի, վարժելոյ ի հանճար բժշկական արուեստի, որոյ վարձատու լիցի Տէր Յիսուս 'ի շնորհս իւր։

Այլ և մեք իսկ տառապեալ ոգի Վարդան վարդապետ, որ ըստ մերում կարի սատարեցաք 'ի գիրքս յայս։ Ունիմք հաւատ և յոյս 'ի գթութիւն Աստուծոյ, և յետ նորա ի բարեխօսութիւն և յաղօթս ծառայից նորա առ մեզ դարձուցանել զերեսս ողորմութեան Քրիստոսի 'ի վերայ անկըշռելի պարտուց մերոց անթուապատիկ բիւրոց տաղանդաց, քանզի այսու ակնկալութեամբ ընդոստուցաք զմեզ մոռանալ զօրնընդակից և զընդանացեալս մեր տկարութիւն մարմնոյ, և զբազմազան տրտմութիւն և զցնորս հոգւոց խորհրդոց, վասն անշահաւոր դարաշրջութեանս։ Այլ յաղագս թշուառացուցիչ ժամանակիս զոր ածեն չարիքն յաճեալ, քանզի սակաւ քան զչափ մեղացն մերոց, արդէն մեզ Տէր արտասուս և նուազ քան զյորդառուղի ակնից մերոց ջրհեղեղս խաղացին առ մեզ վտակք արեան, և ըստ գազանական գնացիցն մերոց՝ յագեցան գազանք 'ի մարմնոցն մերոց։ Քանզի չնչեաց բարկութիւն Տեառն Ճաճուն արևելեան հիւսիսայնու օտար և ա՛ընդել ազգին Թորգոմայ ցանգաղարմին Հագարու։ Եւ հողմով անօրէնութեան մերոյ Աստուած զնոսա մինչև առ մեզ՝ նախատես մարգարէութեամբ, և նախնի սուրբ հօրն մերոյ Ներսիսի արտասուապատում ողբոցն, զոր լալով նախաձայնեաց զկորուստ հոգևոր երկանց իւրոց ծննդոց զորս ինչ կրեցաքն յազգէն Նետողաց, զորոց զանուանս կոչէ սուր, և թեթև։ Զի թերևս թաթարն սուր և թեթև ասի ըստ լեզուացն փոփոխման, և կամ

տուր և տար, որ է Թաթար։ Քանզի Հաւրին անյագապէս և տարան աներկիւղաբար զորդիսն Սիոնի ի ստրկութիւն գերութեան։ Եւ առէ ցնոսա սուրբն Ներսէս ի Յացորդացն Հագարու, և Եօրիք անուն զնոսա Թորգոմեանս յայտ է խաւնելով ազգին Թոգգայ որ 'ի Թորգոմայ ընդ զարմն Հագարու, որք ունին զՍկիւթիայ մասն աշխարհի, որ սկսանի յԱթլասայ գետոյ առ Եմաւոն լերամբն, ուր բնակեալ են ազգք, ԽԲ (Բ-ի գլխին գրուած է Գ), որք խուժական անուամբ կոչեն յիւրեանց լեզուս, և գլխաւորի նոցա Թուշխ անուանի և անուն միոյ ազգին Թուղարք առի, զոր կարծեմք թէ այս են Թաթարք։ Եւ որպէս լուաք յոմանց ի նոցանէ եթէ ելին առաջինք նոցա ի Թուրքաստան աշխարհէ, և մերձեցան ի կողմ ինչ յարևելեան, և կային աղքատութեամբ ի գործ աւազակութեան և յափշտակութեան, և պաշտօն ինչ ոչ ունէին։ Բայց ընդ արեգակն զարմանայիւն և ի պատճառս հմայութեան ունէին պատկերս Թաղած, զորս տակաւին կրեն ընդ ինքեանս. և զկնի ժամանակաց անցելոց ոմանց 'ի նոցանէ զգայուն արանց, նեղեալ ի թշուառական արանց իւրեանց կոչեցին զերկնաւորն Աստուած որ զամենայն ինչ արար յօգնականութիւն անձանց, և ուխտեցին նմա ուխտ և ելին 'ի վերայ քաղաքի միոյ փոքու յափշտակեցին զնա 'ի տերանցն, և բնակեցան անդ, և յայնմանէ հյժ տիրեցին երկրին։ Կոչեցին և յերկրէն իւրեանց ի Թիկունս, և զօրացան 'ի վերայ պարսից՝ և առին զիշխանութիւնս նոցա, ուսան և ի մոգուց անտի արուեստս կախարդութեան և առեալ հրաման 'ի գիւթաց անտի, եթէ տուեալ է նոցա յԱստուծոյ զաշխարհս ամենայն եցցին վստահութեամբ և ժառանգեսցեն զնա։ Եւ չէ ինչ զարմանալ, զի Նաբուգոդոնոսոր արքայ Բաբելացոց հմայիւք եկ յԵրուսաղէմ, և մատնեաց Տէր 'ի ձեռս նորա, և զԿիւրոս Պարսից արքայ աւծեալ իւր կոչէր Աստուած, և առաքէր 'ի վերայ բաբելոնի։ Նաև ինքեանք իսկ խոստովանին զամենայն ինչ Աստուծոյ առնել և զինքեանս նորին հրամանաւ առեն եկեալ։ Արդ հաւատացեալ նոցա հրամանի իւրեանց երևմանն, եղեն Գ բաժին ընտրութեամբ իւրեանց Թագաւորին որ Ղաքանն կոչեն։

Մասն առաջին գնաց ի կողմ Հնդկաց, և մասն երկրորդ չոգաւ առ անապատօք հիւսիսոյ, և երրորդ 'ի մէջ Պարսից աշխարհին, և եկին մինչև առ մեզ։ Եւ ասեն թէ Գ. էին գլխաւորք. և մին բարբարանոյ քան զերկուսն Զօրմանն կոչէին, որք և զկնի բազում աշխարհաց աւերման և կոտորման նըստեալ 'ի խորհուրդ, և ասացեալ Զօրմանին թէ բաւական է աւերս և կոտորած, յայսմ հետէ զհնազանդեալսն մի չնչեսցուք իսպառ, զի մի բարկասցի Աստուած։ Իսկ Բ գլխաւորքն հակառակեալ ընդ նմա, ասացին թէ ոչ է պարտ մեզ ապրեցուցանել և ոչ զոք որովհետև աջողէ մեզ Աստուած, և տրտմութեամբ նուէրեցին զգիշերն զայն, և յայնմ գիշերի մեռան երկոքեանն, որ զանողորմութիւն կամէին և զարմացան զօրքն, և հաւուցին զբանն առ խաքանն, և առաքեաց հաստատեաց զկամս Զօրմանին, որին նոր խնայել ի հնազանդեալսն, և զնել 'ի ներքոյ հարկի, և զնա միայն հաստատեաց ի գլխաւորութեան զի այն է առէ կամք Աստուծոյ։ Վասն որոյ Թաւէ կան ի նոյն մինչ ցայսօր։ Իսկ զժամանակ ելանելոյ նոցա առէ սուրբն Ներսէս։ Եթէ զկնի հինգ վախճանիս յորժամ անցանէ ՈՃ ամ, սկսանի այս լինել։ Եւ այդ է ըստ վճռի սորայն. ՃԾ ամ զօրանալոյ նոցա և յաղթութեան, և յորմէ հետէ մտեալ են յարևելեան աշխարհն Հայոց ԻԸ. ամէ։ Եւ զոր ինչ գործեցին աւ պականութիւն երկրի և տապալումն քաղաքաց և գեղից, և աւեր եկեղեցեաց, ի մահ ազգիս և գերութիւնս։ Եւ թէ որպէս յետ այնորիկ հաշտեցան ընդ Յացորդան ի ձեռն իշխանաց աշխարհին, և արարին խնամութիւնս և ճացեալ եկեղեցեացն, և եկեղեցականացն սակաւ դիւրութիւնս, և ազատ կամօք կալ 'ի կրօնս իւրեանց։ Սակայն անլրապէս պահանջումն հարկաց ծըշտիւ, և անխնայապէս ըստ գլխոյ արանց և անասնոց, բայց 'ի մանկանց եկեղեցւոյ՝ և ամենևին որք զձև աղօթականութեան և զկարգ ունէին։ Զայսոսիկ զամենայն գրեալ է լիով 'ի տեղիս տեղիս, և մեք միջիփաթեսցուք զոճ շարադրացն կարգի, որ յաւուկ խնդրէ հատուածս և պարապումն ժամանակաց և հաստատութիւն 'ի տեսիլ աչաց գործելոցս։ Սակայն զյոլովս տեսաք աչօք

մեռեալք ի նախահայնեաց աղետից սուրբ նահատակին Ներսիսի, և մեր իսկ տեսեալ զյոլովութիւն չարեաց նոցա, և կացեալ 'ի գերութիւն զաւուրս ինչ, զեկեղեցիսն մեր նսեմացեալ, և զսեղանն սուրբ կործանեալ և զմատեանս աստուածային այրեցեալ, և առոն կոխեալ զսպասն սրբութեան, և քրիստոսական նշանս անարժանից ձեռօք շաւշափեալ և նախատեալ և յանարգս պետս վարեալ, զաշխարհս մեր անապատացեալ, զքաղաքս բնակութիւն լեալ գազանաց։ Քանզի լցան լերինք և անապատք մեր անզերծ փախստէիւք, և դաշտք դիակրտք ոսկերօք կոտորելոցն. և անդաստանք մեր և հովիտք ոռոգեցան արեամբք, և կերաք ճաշցորդքս զհասկ ննդեան այնպիսի արտորէից, ազատքն մեր 'ի ծառայութիւն իջին, և փափուկքն մեր անըմբերելի չարչարանս։ Բարձունքն մեր խոնարհեցան, և փառաւորք մեր յանարգութիւնս ընկճեցան։ Անուանքն հովասուն լերանց խորշակահարք եղեն յարեւու։ Կուսանքն մեր օտարաց եղեն, և երիտասարդքն մեր հովիւք և կուսպանք այլասեռից։ Կարօտացաք ողբոցն Երեմեայ, և կրեցաք զպատուհաս հնոյն Իսրայէլի։ Տղայք մեր որբք եղեն. և մայրք նոցա այրիք, որդիքն վերնոյն Սիոնի զուգակշիռք ոսկւոյ, զքարի հարան իբրև զանօթ անպիտան, ցրուեցաւ հօտն Տեառն, ճապաղեցան գաւիթք արօտի նորա։ Վաճառակուր եղեն ազգն հեռաւորս գնեցելոցն արեամբն Քրիստոսի, բաժանեցան ծնունդք 'ի ծնողաց, մեկնեցան հարազատքն 'ի միմեանց. հեռացան բարեկամքն 'ի սիրելեաց։ Դարձաւ տօնն մեր 'ի սուգ, և ուրախութիւն յարտասուս, և ոչ գոյ թիւ աղաղակի մերում, զի չէք համար չարեաց մերոց։ Նա ի վերայ այսր ամենայնի ոչ է 'ի մեզ զղջումն, և ոչ ապաշխարութիւն, ոչ պատառեցաք զսիրտս մեր և ոչ խարշեցան փորոտիք մեր, և ոչ դարձաք 'ի գնացից մերոց խոտորնակաց, այլ և յաւելաք 'ի վերս յանօրէնութիւնս մեր յառաջինսն, և խաւարեցան անմտութեան խորհուրդք մեր, և ո՞վ ոչ զարմասցի ընդ լրբութիւնս մեր, զի տակաւին պիտի մեզ արևս այս և խնդրեմք հնարիւք զսէր և զվայելս աշխարհիս և զփառս սորա զփախստականս։

Բայց ես մանաւանդ զանձնէ ասեմ զոր գիտեմ միայն, զկերս զկամս զստորաքարշ անյագապէս եղեալ մոխրասէր յաւուրս իմ և միայն 'ի ձեռն սակաւ ստուարիս այս, ունիմ ակն 'ի գթութիւն Աստուծոյ վասն աղօթից ձերոց, զոր հայցեմք լռութեամբ գրոյս իբրև զսովեալ սպասէակս առ ընթեր սեղանոյ մեծատանց, և յաւելում ի մաղթանս իմ զբարեխօսութիւն եղեալ առաջի ձեր Նուէրս, առիս ածել զգութս ձեր սիրով զիջանել ընդդէս և խնդրել ինձ ողորմութիւն ի կամեցող և ի կարող խնամողն Յիսուսի, և այն որ մեծ է ողորմութեամբ աջն աջողակ հօրն բարձրելոյ, որոյ բնաբար է փրկելն և կեցուցանելն. թէպէտ և 'ի մէնջ բանադատեալ հարկանէ յուսով խրատու այն որ ոչ անցանել և կամօք չարչարէ զանդամս իւր։ Նա բժշկեսցէ զվիրաւորեալ մարմին իւր զսուրբ եկեղեցի, զցրուեալ հօտս իւր հաւաքեսցէ առ ինքն յարօտս խաղաղութեան բարեբար կամովք իւրովք 'ի փառս անուան իւրոյ, և զերկուս ակունս զայսոսիկ զպատուական և զկայծ և զկանաչ զաթոռս հայրապետական և արքայական Հայաստանի ազգիս ուղղափառութեան, զոր եթող մեզ զաւակ յուսոյ տէրն զօրութեանց, յորս գոյ աւրհնութիւն Տեառն ամենակալի զսոսա հաստատուն և անսասան պահեսցէ զօրութիւն ամենակիր և ամենաստեղծ արժանաժառանգ աթոռակալօք մինչև ցյաւիտեան, զայժմու նստեալսն արժանաւոր կոչմամբ հոգւոյն սրբոյ զՏէր Կոստանդին Հայոց Մեծաց և հանուրց վերադիտող, և զնոյնազարմ ազգիս պսակակիրն Հեթում պարագայծ ամօք, առողջակիր մարմնով և անուանի փառօք խնամեսցէ 'ի գովեստ ամենասուրբ տէրութեան իւրոյ, և զաւակօք և զարմօք, որք ըստ հոգւոյ, և ըստ մարմնոյ, յետ աստեացս երանելոյ անասելի աթոռոյն և անթառամ պսակին արժանաւորեսցէ։ Նա որք այժմ ընդ մեզ հարք և եղբարք, եպիսկոպոսք և վարդապետք, և պատկառելի ծերունիք, և ժրաջան ճգնաւորք և պատարագօղք, և կղերիկոսք, և գործաւորք մարմնական պիտոյից և խնամածուք աստուածապաշտ զդեկիս, և սպասաւորք սրբազան աթոռոյս։ Որք են ամենեքեան առ միմեանս սիրունք, և առ մեզ աննախանձք, և փոխանակ մառե-

նիս յօժարամիտք և յորդորիչք զամենեսեան առատաձեռն պարգևօք լի արասցէ Թագաւորն փառաց Հոգևոր և մարմնաւոր յաջողուածովք. ի մեծութիւն և 'ի փառս անուան իւրոյ, որ է աւրհնեալ և փառաւորեալ, գովեալ և գոհաբանեալ, յազգս և յազինս, բոլոր բանականաց յաւիտեանս յաւիտենից ամէն։

Բ.

3. էջ 23—122 վերջը պակաս «*Բիւզանդարան* պատմութիւնք խոստաբանութեան Նախավկային։ Այս ինչ է ի դրպրութիւնս երրորդ պատմութեանցս ժամանակագիր կանոնք մատենից, և առ նմին դպրութիւնք երեք, այսինքն են սոքա չորք մատեանք. և չորեքին միայ իրաց յիշատակարանք են նոյն...»

ՆՇԹ. Կայ ամբողջ երրորդ դպրութիւնը, իսկ Դ դպրութիւնից մինչև Ծ գլուխը. և ԾԱ գլխից 13 տող միայն։

1. ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ էջ 23. Նորքև ա՛ր թուին ՌՀԴ յուլիս ամսոյ 'ի Ւն սկսանի Բիւզանդայ գրել. օգնեա՛(յ) ինձ Հոգիդ սուրբ Աստուած։—

2. էջ 22. (Մ. Աւորու վերջը) Նոր *նոր* գրչով։

Յիշատակ է սուրբ պատմագիրքս Միխայէլի, Բիւզանդարան և *Աղեքսանդրի* * որուն *Ստեփաննոս վարդապետին Ագուլեցւոյ*, որ եա ի գուան սուրբ Նախավկային։ Աստուած այն մարդն աւրհնէ որ խնամով պահէ ՌՃՀԱ թվին=1722 որ եա յիշատակ։

* Յայտնի է որ Աղեքսանդրէ կամ Աղեքսանդրի էր կոչւում Կեղծ-Կալիսթէնէսի պատմութիւն Մեծին Աղեքսանդրի կոչուած առասպելախառն գիրքը (այս մասին տես մեր ցուցակի 1 համարի յիշատակարանը, այլ և Հ. Տաշեանի Վիեննայի Մխիթարեանց տպարանում լոյս տեսած հետազօտութիւն և համառօտ «Կեղծ-Կալիսթենեայ» ուսումնասիրութիւնը): Այստեղից պարզ երևում է որ այս ձեռագիրը 1722 թուականին բովանդակել է եւ Կեղծ-Կալլիսթենէսի «Պատմութիւն Աղեքսանդրի կոչուած գրուածքը. բայց այժմ այս ձեռագիրը ոչ միայն Աղեքսանդրի պատմութիւնը, որն անկասկած ձեռագրիս վերջի մասն էր կազմում, այլ եւ *Բիւզանդարանի*, այսինքն Բիւզանդի պատմագրութեան, մեծ մասը չունի։

3. էջ 16—17. «Ես *Մելքոն երէցս* Հին Ջուղայեցի. գրի արդեամբ հեծարկութեանն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային. ըստ վկայելոյն Միխայէլեան գրքիս, ի ձեռակն Ղամբոյ Ներքնոյ. ընդ որս և հայր ի Գողթան գաւառ. մերձ ի *Մաղարդ* ի յեզր Երախս գետոյն ՌՃՀԴ թվ.=1725 հոկտմբ. ի գ. օրն։

## 31.

## ՅԱՒԵԼՈՒԱԾ

Կոչեցինք երեք թերթ, որոնք ձեռագրների մէջ էին գտնւում, բայց նոյն ձեռագրներինը չէին։ Այլև վերջը դպրանոցիս տեսչի օգնական պ. Ա. Մանդինեանից ստացանք մի փոքրիկ ձեռագրի ծածկոց։—ՏԱՂԱՐԱՆ Ձեռագրի ՄԵԾՈՒԹԻՒՆՆ է 13,7×8,4 սմ։—Գրչած անհարթ ԹՈՒՂԹԻ վերայ—ՆՈՏՐԱԳԻՐ միասիւն 9×5,5 սմ։ Ընդամենը 16 ԹԵՐԹ։—ՊԱԿԱՍ է սկզբից մինչև էջ 52. ապա 57—64 և 71—96։ Վերջանում է 118 էջով։ Այսուհետև քանի էջ է ունեցել գրքոյկը, ի հարկէ կարելի չէր իմանալ։

### Մատեան է Տաղարան

Արիստակէս վ. Տէփկեանցի «Հայերգ»ի և Կ. Կոստանեանցի «Միջնադարեան Հայոց տաղեր եւ տաղասացութիւնների ցանկին» եւ երկրորդ պրակի մէջ չգտանք այս տաղերը. ուստի գէթ մեր ձեռք հասածը հրատարակման փոխադրել եւ ծախելէ ժամանակի ոճիրներից ազատելու համար, ամբողջովին հրատարակում ենք։

## Էջ 53 – 56

### (ՍԿԻԶԲԸ ՊԱԿԱՍ).

Զգոյն անեղական ծաղկին,
Դու բողբոջեցեր կերկին,
Զհօր ծընեալ ծաղիկ ծոցին։ Անձառ
Նզեմ լուսափայլ ծաղկեալ,
Դու ես ծառ կենաց յայտնեալ,
զԱստուած մեր պտուղ բերեալ։ Ան
Ընդ Գաբրիէլեան ձայնին
Ի քեզ բնակեցաւ Հոգին
Անսերմն յըղացար զորդին։ Ան
Թափեալ իւղ անոյշ առ քեզ,
Թըմբեալ մայլեցուց ըղմեզ,
Պաքեալ ծարաւիմք առ քեզ։ Ան
Ժամ գարնանային հասեալ,
Արեգակն առ քեզ դարձեալ,
Ճառագայթ ի քէն ծագեալ,
Անձառ լուսոյ մայր սուրբ կոյս։
Ի յոստ ծաղկափայլ քոյին,
Նկեալ բնակեցաւ Հոգին,
Քեզ բողբոջեցոյց զորդին։ Ան
Լեառըն զըմբուսեայ ծաղկեալ
Զհոտն անմահութեան բուրեալ
Սիրով քո վառիմ թըմբեալ։ Ան
Խանդաղատեցաւ Հոգիս,
Սիրով նուաղեալ առ իս,
Մինչև դու լուսով յայտնիս։ Ան
Ծրար ես դու տաշխից խընկոց,
Բուրումն անուշից վարդոց,
Ծաղիկ լուսափայլ Հոգւոց։ Ան
Կարօտեալ պաքիմ սիրով,
Առ քեզ ծարաւ իմ գոլով,
Արբոյ զմեզ Հոգւով սըրբով։ Ան
Հոտ անմահութեան խընկոց,
Բուրումն անուշից հոգւոց.
Զարդ ես դու ծաղկանց գունոց։ Ան
Ձայնըն տատրակին սըրբոյ
Հընչեաց ի յերկրիս մերոյ
Նշև ցընծութիւն Հոգւոյ։ Ան
Ղամբար երկնային ջահին,
Ի քէն ըղգեցաւ մարմին.
Լոյս ծագեաց նախատեղծին։ Ան
Ճառագայթ փառացըն հօր,
Ի քէն մարմնացաւ այսօր,
Ցընծայ Հերմոն և Թաբոր։ Ան
Մեզու քաղցրածին ես դու,
Անսերմն յըղութեամբ որդւոյ
Նիւթ քո ի ծաղկանց լուսոյ։ Ան
Երկնից մանանայն իջեալ,
Ի քո քաղցր արգանդ խառնեալ
Մեզ քաղցրաճաշակ կազմեալ։ Ան
Նոր գարնանային ծաղիկ,
Քև բողբոջեցան մարգիկք.
Գունով քո փայլին հոգիք։ Ան
Շող ես լուսեղէն ի տան,
Հոգիք մեր ի քեզ խաղան,
Լուսով քո փայլեալ խայտան։ Ան
Ով սուրբ կոյս ընտիր յազգէ
Անսերմ յղացար յերկրէ
Մեզ հանգերձ լուսոյ կազմել։ Ան
Չըքնաղ տաղաւար բանին,
Առեր դու զանձրև բանին,
Ծընար մարգարիտ անգին։ Ան
Պարք մարգարէից ազդեաց,
Ծաղիկ նոր ծընար կենաց
Լոյս և ճառագայթ փառաց,
Անձառ լուսոյ մայր սուրբ կոյս։

## Էջ 65 – 66

### *(Պակաս է էջ 57 – 64):*

Վերացեալ հոգին տեսանէ զնոսին,
Դասք դասք ժողովեալ ըստ արժանեաց զոր
ինչ գործեցին։
Տեսանեն նոքին, զայն գնացեալ հոգին.
Շուրջ պատեալ ողբան, զմեղաւորն զայն
հասարակին։
Բամք հոգոց գասին, անդր ժողովին,
Շուրջ եղեն կոծողք առ է գիրն որպէս յայն
հրապարակին։
Ցուցեալ նոքին, կոծեն զայն հոգին,
Դու եկիր այսօր ոք գերի, պատմէ նմային։
Իխուսեալ ընդ նոսին, ձայնակցի նոցին,
Հառաչմամբ ողբան մինչև օրըն դատաստանին։
Փակեալ է նոցին, դուռըն յառագաստին,
Մորմոքմամբ կոչեն կըսկըծմամբ և ոչինչ
շահին։
Քուն մահու նոցին, տանջէ ըզհոգին.
Վայ եղուկ մարմնոյ է նորին, յորժամ զար-
թիցին։
Տառապեալ հոգին, եկեալ առ մարմինն.
Բամք գործոց ծածկեալ, յայնժամ յայտնեսցին։
Անձամբ եղկելին, ամօթ և գերին.

Առաջի կացեալ դողալով, մեծ դատաստանին։
Քրիստէ գործք նորին, եւ զբարբառք լեզուին
Անձամբ հառաչեմ լալագին,
Զայն հրապարակին, որըն ահագին։

Էջ 67 – 70

## ՏԱՂ ՏՂԱՅՈՑ

Արարիչն արարածոց մեզ բարկացաւ
Քաղցըր բնութիւն մեզ դառնացաւ,
Սուրն հրեղէն այսօր յերկնից տարածեցաւ,
Հուրն ի տանէն աստուածային բորբոքեցաւ։
Ողուկ ու վա՜յ, Ո բերան ինչ գործեցաւ,
Նորապսակ հարսն և փեսայն բաժանեցաւ.
Քանի մանուկ ազա մեռաւ 'ի հող դարձաւ
Եւ թէ քանի մայր որդեմեռ մորմոքեցաւ։
Անմեղ արըղայքն, ի հրեշտակէն խոցեալ լինին,
Եւ թաւալին յարջ և ծնողին ողորմագին,
Աղիողորմ ի գիրկըս մորըն, նուաղին,
Որպէս ծաղիկ գարնանային թառամեին։
Լացէք այսօր և ողբացէք ամենեքեան,
Դառն արտասուօք հառաչեցէք դուք միաբան.
Զի հանց կըսկիծ այլ չէ տեսեր մարդ բանական,
Որ սար ու ձոր որ ծառ ու ծիւղ ամէն կուլան։
Աղէկ մանուկ աղէկ պատկեր յար և նըման,
Յունքըն կարմիր աչքըն կանթեղ էր յանգիման.
Բոլոր անձամբն և հասակաւն էր աննըման,
Ողուկ ու վայ իւր ծընողացն Ո բերան։
Մանուկըն լայր և հառաչէր ողորմագին,
Քանզի հասեալ էր օր մահուն բուռն յատենին.
Հայէր յաջ և յահեակ քակտէր հոգին,
Ողուկ ու վայ Ո բերան իւր ծընողին։
Մանուկն ելաց և հառաչեաց ճարակ չեղաւ,
Դառն արտասուօք դարձեալ ի հայրըն նայեցաւ.
Հայր գլխահար, հասիր մատաթ հոգիս քակտաւ,
Եւ շատ հասրաթ կայր իմ սըրտիս մէկ մի չեղաւ։
Յայնժամ ելեալ լալով ասաց ինձ խըղճացէք,
Եւ ի ձեռաց սուրբ հրեշտակին ազատեցէք.
Զի դեռ մանուկ եմ գլխահար զիս գընեցէք.
Եւ ի ահէ սատանային փարատեցէք։
Հայրըն դարձաւ յորդին ասաց հառաչելով,
Թէ ճար չունիմ ոսկի արծաթ քեզ գին տալով.
Հոգիս կուտամ հոգոյդ փոխան յօժար սիրով.
Զլխահար դու զիս մի խոցեր հրեղէն սըրով։
Յայնժամ եհաս ահեղ հրաման աստուածագիր,
Հրեշտակն եկեալ ի յարարչէն հոգւոյն խընդիր.
Զհոգին առեալ սուրբ հրեշտակին եւ ձեռնագիր,
Եւ գեղեցիկ մարմինն ի հող դարձաւ յերկիր։
Գեղեցիկ գոյն երեսաց թառամեցաւ,
Այն ծովային աչքն ի յուսոյն պակասեցաւ.
Վայելուչ զօրեղ բազուկըն կապեցաւ,
Լայր արծաթոյն ոսկի մանեակըն մանրեցաւ։
Յուխ ծՀ. Թըւականին, և համարով ամփ
(Պակաս է)

Հաւանօրէն այս թուականը 1421 ոտանաւորի գրութեան եւ ոչ թէ գըրչութեան տարին է։

Էջ 117 – 118

## ՏԱՂ ԴԱՏԱՍՏԱՆԻ

Յորժամ Գաբրիէլ գուշէ, և ամենն մեռեալքն ի հողոյն,
Կէսքըն լուսափայլ ամենն, աստեղաց նըման գայնըղըգըյն։
Կէսքն սև երես յառնեն գլխիկոր ի խիստ ամօթուն,
Լալիւ ողորմու խեղճ արտասուեն նըման թուխ ամպուն։
Երանի արդար դասուն, որ թըռչին նըման արծուուն.
Ի յերկինս վերանան և դասեն հետ հրեշտակերուն։
Անմահ բնութիւն դառնան հրեշտակաց նըման գունդգունուն,
Եւ երանելի աչօք տեսանեն զարքայն մեծատուն։
Բազմին առագաստ նըրանին ճաշակեն յանմահ սեղանոյն,
Եւ կենդանարար բաժակ միշտ ըմպեն ի ժամ ծարաւոյն։
Աւաղ զմեղաւորըն ասեմ, զինչ լինին ահեղ հրամանուն,

Կամ զինչ պատասխան տացեն անաչառ ու-
ղորդ դատելոյն։
Անչափ չարաչար տանջին զինչ որ մոմ հա-
լի ի հըրոյն,
Երանի այն պահուն ասեն որ հանեն 'ի
յերգը մահուն։
Եւ սառնամանեաց միջին կըրծըտեն զատամն
'ի ցըրտուն,
Անչափ հառաչեն և լան, որ դառնան ար-
տասուքն արիւն։
Եւ միշտ երերման կենան զինչ չարժի տե-
րեւն 'ի քամուն,
Վայ ասեն Ո՛ բերան և ուաղեն զօր վախ-
ճանելուն։
Որ օր մեր ուսեալ ապրինք, որ գործենք 'ի
պատուիրանուն,
Մի թէ ճարակ լինի նա, աղատին անշէջ
գեհենոյն։
Կամ օր մի հանգիստ առնուն 'ի անքուն որ-
դանց ուտելուն,
Կաթ մի 'ի ջըրոյն խնդրեն, պապակի լե-
զուն 'ի տապուն։
Խաշին և մաշին ի հուրն, կուրանա աչերն
'ի լալուն,
Եւ անչափ լալուն մանրակեր լինի ժանեաց
վիշապուն։

## ՏԱՂ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՂԹԱՄԱՐՑԵՑՈՅ Է։

Եղուկ Ո՛ մի վայ որ մեղօք ես աղտե-
ղացայ.
Դեւօք ես 'ի ծով իջա, և հողմով չա-
րին վարեցայ։
Կանգնեալ գիտելով ծանեայ,
Զերծելոյ հնար իսկ չը կայ։
Ես եմ մոլորեալ ծառայ,
Զիս գերեալ չարին սատանայ
Լուսով քո զիս ակն արկեա,
Զխաւարեալըս լուսաւորեա։
Ինձ յոյս և ճարակ չըկայ,
Ելանել ուստի ես անկայ։
Գերի ու անիմաստ ծառայ
Մերկ մըտեր աներկրայ ուսա,
Ռամից խընամողն է նա,
Զգերելոյ դարձն կամենայ։
Իսկ դու ի մեղաց զըղջայ,
Եւ յուսով 'ի նա հաւատայ։
Գըթած և ողորմած է նա,
Զմաքսաւորն և զպոռնիկն յիշեա։
Որ և նոյն Աստուածն է նա
Ամենի զըղջալն աղերսա,
Ռամից բոլորից արքայ,
Զսառնացեալս 'ի սէր քո վառեա։
Իսկ ես յանցաւոր գըտայ,
Զի 'ի քէն մեղօք հեռացայ։
Սիրով զիս 'ի քեզ կապեա
Զիս արժան տեսոյդ քո արա։
Նաև եղկելոյս գըթա,
Անառակ որդոյս ողորմեա։
Ահա 'ի քէն մերժեցա,
Եւ ըզգուշ սիրոյդ մոռացայ։
Սովամահ եղեալ շըջիմ,
Յագարակ դիւացն ընթացայ։
Եւ այդ ճշմարիտ ծանեա,
Զիմ մեղաց մուրհակն ընթերցա,
Լերինքդ 'ի կշռել կուգա
Եւ մեղաց իմոց թիւ ոչ կայ։
Է ողորմելի ծառայ,
Զքեզ յանձն Աստուծոյ արա։
Թէպէտ քո չարիքն յոլով,
Որ թըւով 'ի հաշիւ չըկայ։
Վերըստին մեղաց թափեայ,
Եւ յուսով դու խոստովանեա։
Ի կոյսն ապաստան լեր դու
Եւ նովաւ զԱստուած աղաչեայ։
Նըշան՚ւ խաչին նորա,
Անդադար զքեզ տեառնագըրեայ։
Զըրօքըդ զիս ոռոգեայ,
Զի տապօք չարին զօրացայ։
Կարկամեալ մեղօք մեռա,
Վերըստին տէր զիս նորոգեա։
Դու զիմ ցաւս ապաքինեա,
Քաջ բըժիշկ Յիսուս ողորմեա,
Եւ քեզ փառք այժմ և ապայ
Անզըրաւ կենօք յարակայ։

## ՏԱՂ ԱԴԱՄԱՅ

Յորժամ Ադամ ստեղծաւ զերդ արեգակն էր.
Իւրոյ արարողին կերպին նըման էր.
Հոգի միտք և մարմին յատուկ նըմանէր,
Որպէս երեք անձնեա բնութեամբն մի էր։
Լուսով Աստուածայինն ճառագայթեալ էր,
Վերին զաւք հրեղինաց նըման նըմա չէր.
Ծաղիկ էր նորածին դեռ թառամեալ չէր.
Եւ հօտն անմահութեան 'ի նմանէ բուրէր։

Իւր դէմքն էր ծաղկափթիթ և լոյսըն հոսէր.
Զի լոյս փառաց հօգոյն յերեսըն փայլէր,
Այնքան գեղեցկութեամբ պայծառացեալ էր,
Որ լուսին ու արեգակն ի մօտն ոչինչ էր։
Գունով ծաղկածաւալ փայլըս փայլի ակր,
Եւ ինքն իւր տեսութեանց խայտացեալ ճեմէր,
Նա միշտ և հանապազ զԱստուած տեսանէր,
Եւ ՚ի Նորին լուսոյն միշտ ճառագայթէր։
Որպէս ըղձալի պարզ և մաքուր էր,
Զի Աստուած միշտ փառօք ի նմա երևէր,
Զերդ ակն էր լուսընկալ մարմնովն փայլէր,
Զերանկս ծաղկանց պէս-պէս յինքըն հա-ւաքէր։
Ի մէջ արարածոցս հանց աննըման էր,
Որ գառք վերին զօրացն ընդ նա հիանէր,
Զաշխարհս ունէր կազմած որ նա բընակէր,
Զանազան կենդանիք նըմա ծառայէր։
Երկինք աստղակառոյց ՚ի տաստաղն էր
Երկիրս ծաղկածաւալ այս տունն յատակն էր.
Դրախտն անմահութեան նըմա գահոյք էր,
Որպէս մեծ թագաւոր ՚ի կառըս հանգէր։
Ադամ զերդ արեգակն ի կառըս փայլէր.
Նըշոյլ ճառագայթիցն ՚ի նմանէ հոսէր.
Լուսինն և արեգակն որպէս ճըրագ էր.
Նոցա միշտ արեգակն ինքն արարիչն էր։
Հայէր աչօքն յԱստուած և հոգին մայլէր,
Լսէր զձայն ականջօքն և մըխիթարէր.
Հոգովն անմահութեան նա միշտ թըմրեալ էր,
Խօսէր ընդ Աստուծոյ խայտացեալ հըրճուէր։
Զըր կայր տիւ և գիշեր հանապազ լոյս էր,
Տուն էր ի մէջ դրախտին զերդ արեգակն էր,
Պըտուղն այն ծառերուն որպէս զաստեղս էր,
Փթթեալ ծաղկածաւալ փայլս փայլի ակր։
Խառնեալ հոտ ընդ իրար քաղցրացեալ մայլէր.
Հայէր ՚ի գոյն ծաղկանց և սիրտըն ծափ տէր.
Որքան նա զուարճանայր և ուրախ լինէր,
Տէր զփառըս պատկերին իւրոյ յայտ հայէր։
Զո՞ այդ կենդանիս նըմա ցուցանէր,
Զի տացէ զեւրն ընկեր զով ոք որ կամէր
Ոչ ումն չըհաւանեցաւ զի իւր նման չէր,
Այլ տայր նոցա անունն որ ինքն հայէր։
Օձըն գալար տալով եկեալ անցանէր,
Տեսեալ զնա խորամանկ և օձ անուանէր.
Պահէր զոխն ՚ի մահ նենգութեամբ սպասէր,
Դըրացէ նա ժամանակ որ զքէնըն հանէր։
Թըմրեցոյց Ադամ Տէրն որ անկեալ ննջէր.
Առեալ մի ՚ի կողէն և զնա ստեղծէր
Էած զնա առ Ադամ եթէ զինչ կոչէր.
Նա ասէր ՚ի ոսկերացս մարգարէանէր։
Ի ստեղծանել կողէն նա անկեալ ննջէր,
Առեալ զկողն ի մարմնոյն և նա չիմանէր
Էած զնա առ Ադամ զի կին անուանէր,
Զի կողէն պատճառաւ մեռանելոց էր։
Եկեր նա ՚ի պտուղն և զԱդամ խաբէր
Ուտել ետուր նըմա զի ձեռագործ էր,
Դարձեալ զանուն կընոջն նա կեանս ա-նուանէր,
Զի պատճառաւ կնոջն նա առնելոց էր։
Վասն այն այլ կենդանեաց Ադամ չըր հա-ւանէր,
Զի կողէն պատճառաւ յերկինս ելանէր,
Վասն այն մի ՚ի կողից Ադամայ առնէր,
Զի ՚ի յազգէն կանանց մինն ընտրելոց էր։
Ցամենայն եղելոց քեզ օրհնութիւն, Տէր,
Զի դու ես ապաւէն, յոյս և կենաց Տէր,
Ի քեզ եմք յուսացեալ զի դու ես մեզ Տէր,
Որ տաս մեզ հանապազ անճառ շնորհաց Տէր։

## ՏԱՂ ՆԱՎԱՑԻ

Անցանէ մեծութիւն ու փառք աշխարհիս,
Աւերի ու քակտի շինուած տաճարիս,
Բայց դու զայս գիտացիր թէ զինչ կուտանիս,
Երբ թողուս տարաց ՚ի հող մըտանիս։
Մի գատիր, մի գատիր ՚նաղաշ մի գատիր,
Մի խաբիր մի խաբիր մեղօք մի խաբիր։
Գիտացիր գիտացիր քեզ որ կայ մահու,
Գերեզման դու շինէ քեզ տուն կենալու.
Դու ոչ ունիս քեզ ճար ատէն մեռալու.
Դու վասն էր գագարիս զաշերդ ՚ի լալու։
Մի գատիր...
Երբ չունիս դու ճարակ ատէն կենալու,
Դու արա քեզ շուտով թադպիր գընալու։
Զինչ ունիս տանենիս փոխ տուր Աստուծոյ,
Զինեհար զինեհար անդ ես գընալու։ Մի գա։
Եր գտանիս եղկելի հետ անցաւորիս,
Զերր յետոյ փոշիման ապրատմ կուլենիս։
Ընդ հոգւոյդ միացիր և գործէ բարի,
Ընտրելոց հետևիր զի սուրբ լինիցիս։ Մի գա։
Թէ կամիս Աստուծոյ լինել սիրելի,
Թող ըղձէր աշխարհիս և գործէ բարի.
Ժամանակս է խառնող քեզ չառնէ բարի.
Ժամ մի քաղցր և յետոյ խիստ դառն ու լեղի։ Մի գա։

Ինչ շահ է քեզ խընդալ 'ի յայամ աշխարհիս,
Երբ յետոյ փոշիման 'ի հող մտանիս.
Լաց լալով եղկելի թէ խելք ունիցիս,
Լաց յիշէ զի վաղիւն 'ի հող լուծանիս. Մի դառ.

Խաբեցար ատենէս քեզ այն վըկայէ,
Խոցեցար չար նետիւ 'ի սատանայէ.
Ծիծաղիլ վայրաբար քեզ ինչ վայելէ,
Երբ վաղիւն արտասունք 'ի լաց ժամանէ, մի դառ.

Կենաց դու գիր չունիս անմահ մնալու.
Ոչ առեալ ես պատգամ ատէն կենալու,
Հիւր եկիր այս աշխարհ այլ ես գնալու.
Հանց ջանա, որ չը լինիս բաժին դու հըրոյ Մի դառիր:

Զայն փրկչին քարոզէ կենալ քեզ արթուն,
Եղկելի դու վասն էր կաս անհոգ ի քուն.
Ղեկավոր նաւաբեկ ես 'ի մէջ ծովուն.
Ալէկոծեալ մեղօք զինչ նաւն 'ի քամուն. Մի դառիր:

Ճանապարհ հեռաւոր ունիս գնալու,
Ճար չունիս, ճար չունիս փըրկիլ 'ի մահու.
Մի առներ դու խափան զաչերդ 'ի լալու,
Միտքըդ արթուն պահէ թէ ուր ես գնալու: Մի դառիր.

Ցորժամ մահ քեզ տիրէ օրըդ հասանի,
Եւ հոգիդ 'ի մարմնոյդ ելեալ բաժանի.
Նայ հոգիս ասա և անդ ողորմ ու լալի,
Ոչ օգնէ քեզ եղբայր և ոչ սիրելի. Մի դառիր ինձ.

Շուրջ ածես ողորմուկ զաչերդ ու նայիս,
Հետ թափես արտասուք ու հետ շուարիս.
Ոչ օգնէ մեծութիւն ոչ սէր աշխարհիս,
Զինչ բարի գործեցիր նայ զայն կուտանիս. Մի դառիր.

Զամաչես թէ վասն էր ի զուր կու դառիս,
Ով չահաւ ատենիս որդու տի չահիս
Պարծենաս ու պահ մի թասպիր դու չունիս
Ով չահաւ ատենիս, որ դու կու չահիս. Մի դառիր.

Զանք արա աղօթից արթուն կենալու,
Բաց հոգոյդ աչքն ու տես թէ ինչ կայ գալու.
Ուրքի ես դու թասպիր արա գընալու.
Գիտացիր, գիտացիր որ չես մնալու. Մի դառիր.

Սուտ ու փուչ մեծութիւնդ ու փառքդ անցանէ,
Ա՜ նաղաշ դու ըզքո խելքըդ ժողովէ.
Վարդապետ ձևանաս գործըն կատարէ,
Վա՜յ անձինդ երբ դատողն առեանն կոչէ. Մի դառիր.

Տէր կոչես տուր համար գործոյն տիրական,
Տես թէ քանի արեան ես դու պարտական
Բարունի անուանիս վարուք ռամկական,
Վայ աւուրն որ համար տաս ընտեսութեան. Մի դառիր.

Ցաւք հոգոյդ ու կըրակ վասն էր աւելես,
Ագահիս ու մեղաց պըտուղ ժողովես.
Խին գաֆթարըդ մեղաց դու նոր կու նորես
Զինչ առնուս օտարաց պիտի վըճարես. Մի դառիր:

Փոխանակ որ առեր ըզկեղտ աշխարհիս,
Զինչ բարի գործեցիր նա զայն կու տանիս.
Քահանայ ես քաւիչ վասն այն մեծարիս,
Անքաւելի մեղանչելով կորնչիս.

Ա՜յ նաղաշ դու լսէ զինչ որ քարոզես,
Զինչ շահէ քեզ ասելդ երբ չը կատարես.
Որչափ շատ մեծութիւն ապրանք ժողովես.
Նա թողնուս օտարաց ի հող մըտանես.

Մի դառիր մի դառիր նաղաշ մի դառիր,
Մի խաբիր մի խաբիր մեղօք մի խաբիր.
Մի մընար մի մընար անդարձ ի մեղաց.
Մի մտներ մի մտներ զհոգիդ տանջանաց:

## ՏԱՂ ՂԱՐԻԲԻ

Հոգի մի ասեր ղարիպ թէ չէ իմ սիրտս կար ունի.
Ղարիպն 'ի օտար երկիր ամա խիստ դըժուար կու լինի
Զինչ հաւք իրամէ 'ի զատ մոլորեալ 'ի տեղ չհանգչի,
Այնչափ երերուն կենար մինչև իւր տեղին հասանի.
Ղարիպ սիրտնեղ մի կենար այս դըժար օբերս անցանի,
Ամէն ղարիպ տուն դառնա մի մընար թէ քեզ չը լինի.
Աստուած ողորմած կասեն ողորմի ամէն ղարիպի,
Քեզ էլ օգնական լինի որ հասնիս սըրտիդ մուրատին.
Հոգիամ՞ դու լաւ կասես սիրտս է սև բան ըզգործելի.

Ի ղարիպութեան դարդէն երեսիս գոյնն կու քաղի։
Յորժամ զիմ տեղիքն յիշեմ իմ գեղքայրք ու զիմ սիրելիքն
Հոգիս բերանիս կուգայ կու քակի ու ճար մի չկայ։
Ղարիպ ղուսա մի անիր ղուսայէն մարդ ինչ կուշահի.
Շատ մանուկ ղուսա կանէ 'ի շահու տեղըն կուզենի։
Ղուսայէն շատ ցաւ լինի, ի ցաւէն մարդիկ մեռանի,
Զինչ սիրտն որ հասրաթ ունի ամենէն մահրում կու լինի,
Աւաղ ըզղարիպն ասեմ, որ օտար երկիր կու լինի,
Զաչերն արտասուօք ի լի աչերուն 'ի վայր կը թափի։
Յորժամ որ մաչլիս նըստի, յանկարծակ սիրտըն կարունի.
Զաչերն ի բոլորն ածէ, կարեւոր զոք ոչ տեսանի։
Ամենքս ենք ղարիպ եղբայրք, հայրենի տեղիք իսկ չունենք
Հաւասար գնալու ենք մենք, զի այն կեանքն է մեզ հայրենի։

## ՏԱՂ ԳՐԻԳՈՐԻՍԻ

Յորժամ զիս ինձէն գըտայ վէս ընդ իս սակաւ խօսեցայ
Ըզմիտս իմ առիս բերի, զայս գիրքս որ յէտ գայ մընայ։
Թէ եկ այրեցած հոգի, լաց ըզքո չարիքդ յարակայ,
Սակաւ մի անդուր տուր քեզ, որ ի յինք դարձեալ կարենայ։
Մի կաս մընալով յոր ես, զի չըկա ճարակ թէ մընայ,
Խարէ բոլորէ ըզքեզ, սիրաբար 'ի քեզ մերձենայ։
Պարէ քաղցրագոյն բանիւ, յետոյ չարճաշ դառնա քեզ տա,
Հայեաց տեսանել յայտնի, թէ այլ օր պահեալ կայ մընայ։

(պակաս)

# ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ


Աթանասի բանք 29բ։
» Հարցմունք փայելուչք 34բ։
Աղերսանք։ Դիրք աղօթից... 18բ։
Աղէքսանդրէ (պատմագրութիւն) 10բ։
Աղօթք. 28բ։
Աղօթագիրք 17։
Ամբրոսիոս առէ 29բ։
Ամք խոկչքանէ արարածոց (և բոլոր նահա- պետների.) 49բ։
Այժմ եկեսցուք ի մեկնութիւն 18բ։
Այլ դաւանութիւն 32ա.
Այլ և այլք 46բ։
Այսօր լոյս 11ա։
Անանիայի (Նարեկացւոյ) ի խորհուրդ Յով- հաննու Մարգարէի 53ա։
Անուններ կաթոլիկութիւն ընդունող վար- դապետների (ունիթոռներ) 32բ։
Աշխարհագրական և պատմական տեղեկու- թիւնք 46բ։
Ապէնիաղ Աստուած... 10բ։
Առ գիտնական Գ. Վանանդեցի 40բ.
Առաւօտու հատորն էւ Որ կատարեալ... 14ա։
Առաջնորդք Երուսաղէմի 31բ։
» Հռոմայ 31բ։
Ասուն ու խոսուն ծառքդ... 10ա։
Աստուածանմանութիւն Աղամալեանի 6ա։
Աստուածաբանութիւն ծայրաքաղ 35։
Աստղաբաշխութիւն 27։
Արիստոտէլի ստորոգելիք 31ա։
» Յաղագս առաքինութեան առ Աղէքսանդր 31ա։
» Վերլուծականէն 31ա։
» Ի սահմանաց գրոց (լօկքս) 31ա։
Բանն որ ի հօրէ 11բ։
Բանք Ոսկիականք 23։
Բանք խրատու Աղէքսանդրի 10բ։
Բառարան 30բ. 50։—
Բառարան Անգլերէն և հայերէն 43։
Բառք պատմագրութեան Եղիշէի 44—45։
Բարսեղի Կեսարացւոյ ասացեալ, 29բ։
Բերնարտոս 29բ.
Բիւզանդ (Փաւստոս) 54։
Բիւզանդարան 58ա։
Բնութիւն անմարմին առանց ենթակայի 32ա։
Գանձարան 11։
Գաւազանագիրք 48։
Գիրք աղօթից 18ա։
» Խոստովանական 52։
» Հռոմայ մեծ եկեղեցւոյն... 17բ։
» Վկայութեանց 28։
Գիւտ առ Դաւիթ (Թուղթ) 54բ։
Գրիգորի Տաթևացւոյ Հարցմանց գրոց 30ա։
» Իրան մարգարէին Հագի Տեառն... 31բ։
Գ. Լուսաւորչի վարք. 38։
» Ասացեալ 29ա։
» Ի բան հաւատոյ և Նորին նմանեացն. 31բ։
Գրիգորի ասացեալ 29 բ։
Գ. Արանձելագործն առէ 29բ։
Գրիգորի Աստուածաբանի բանք 29ա։
Գրոփոնիոսի գրութիւնք 46ա։
Գանձ Թադէոսի և Բարդուղիմէոսի 11ա։— Ոսկեանց և Սուքիասեանց 13ա։ —Աղոմի 13ա։ — Հռիփսիմեանց 15ա։—Ղևոնդեանց և Վարդանանց 13ա։—Լուսաւորչին 13բ։—Թոռանց և որդւոց Լուսաւորչին 15ա։—Թարգ- մանչաց 13ա։—Պաղատման 11բ։— Աղաշխարութեան 16ա։—Նաւակա- տեաց եկեղեցւոյ 15բ—Ձեռնադրու- թեան 16ա։—Կաթուղիկոսին 15բ։— Տապանակին 15բ։—Մեծահրաշին 15 ա։—Հասարակ 15ա։ - Նին(*)։ Գոյին կատարեալ... 13ա։—Վահանայ 12բ։ —Յովհաննու. Մեծապայծառ 12բ։—

ի Պետրոս Հայրապետն և Երիտոզոմ
12բ։—Գէորգայ զօրավարին Խաչա-
տուր վ. 15բ։—Դաւթի և Յակոբայ
11բ։—Ս. Կիրակոս և մօրն 13ա։—
Ղազարու 13բ։—Յովակիմայ և Ան-
նայի 11ա։—Դաւթի և Յակոբայ
11բ։—Ս. Յակոբայ 11բ.—Յովհան-
նու Զաւեբեբբին չորրորդ Կիւրա-
կէի. 13բ։—Յանտառակ որդին. Մկրտիչ։
13բ.—Նիկողայոս Հայրապետին 11ա.
—Որդոցն որոտման 12ա.—Առաքե-
լոց Պետրոսի և Պօղոսի Մխիթար վ.
11բ.—Առաքելոցն Բժ-ից 11բ.—
Թագաւորաց 12բ։—Հայ. գծէր 13ա.
—Ճգնաւորացն 12բ.—Կուսանացն
15բ.—Հայրապետացն սրբոց 15բ.—
Մանկանց Բեթղեհեմի 15ա.—Մար-
գարէիցն 15ա.—Մարտիրոսաց 15բ.
—Մարտիրոսաց 16ա.—Քառասնից
13բ.—Իգնատիոսի Հպ. 11բ.—Սա.
Նախ. 11բ.—Թէոդոսի 13բ.—Սարգ-
սի և Մարտիրոսի 13ա.—Բարսեղի
կեսարացւոյ ի խչ. վարդապետէ 12ա։
—Հրեշտակապետացն Գաբրիէլի և Մի-
քայէլի 16ա.—ի տաւնս 14ա.—
Ծննդեան առաջին 12ա.—Տեառընդ-
առաջին 13ա.—Աշուհացիցն, կիւրա-
կէիցն բուն բարեկենդանուն Մխի-
թարայ Այրիվանեցւոյ 13ա.—Կանոն
երկրորդ աւուրն Մեծ և Հզօր 15ա.—
երկրորդ աւուր. Մարուր և 12ա.—
Երրորդ կիւրակէի 13բ.—Հինգ աւուր
ի Խաչատուրէ 12բ.—Վեց աւուր ծննդ.
12բ.—Վեցերորդ կիւրակէի (աղուհա-
ցիցն) 13բ.—Ութ աւուրն խորան
12բ.—Ութն աւուրն. Գոչում 12բ.—
Արմաւենեաց (ծաղկազարդին) 13բ.—
Աւագ երկուշաբթի 14ա.—Աւագ ե-
րեքշաբթին 14ա.—Աւագ հինգշաբթի
առաւօտին 14ա.—Աւագ հինգշաբթի
Ոտնլուային 14ա.—Աւագ ուրբաթի
(Մատթէոսէ) 14ա.—Կանոն երրորդ
աւուր։ 15ա.—Կիւրակէի յարութեան
15ա.—Նոր կիրակոյն 14բ.—Երկու-
շաբթի Մխիթար վ. 14բ.—Թաղման
շաբաթ աւուր 14ա.—Ճրագալուցին
յայտնութեան Մխիթարայ 12ա.—
Ճրագալուցին ծննդեան 12ա.—Յա-
րութեան (հինգերորդ աւուր) 14բ.—
Յարութեան Մկրտիչ 14բ.—Յարու-
թեան Խաչատուր 14բ.—Յարութեան
երրորդ աւուրն 14բ.—Աւագ զատ-
կին. կիւրակի 14բ.—Համբարձման
Յիսուսի 15ա.—Հոգւոյ Գալստեան
15ա.—Վարդավառի 15բ.—Վարդա-
վառին ի Ներսէս վարդապետէ 15բ.—
Փոխման Աստուածածնին 15բ.—Սուրբ
խաչի. Թէկուր (անցի) 15բ.—Խաչ
գիւտին 15բ.—Շողակաթին եկեղեց-
ւոյ 15ա.—Վարագայ սուրբ խաչին
'ի Ներսէս վարդապետէ 15բ։
Դաւթի Անյաղթի ընդդէմ Պիւրհոնի 31ա։
Դաւանութիւն քաղկեդոնացւոց 32ա։
Դուռն վեցհազարեկին Ա. Շիրակացի 27բ։
Եղիգորոս 29բ։
Երաղացոյց լուսնի և բարի աւուրց 47ա։
Երկու բնութիւնք անձնաւորք և 32ա։
Երգ ի չարչարանս Քրիստոսի 46ա։
Երգ երգոյն Սողոմոնի 32ա։
Եփրեմ Խորին Ասորի 21ա - 22ա։
« տաւնք 31բ։
« յաղագս պահոց պնդութեան 34ա։
« յաղագս ընդունելի և անընդունելի աղօթից 34ա։
« վասն ողորմութեան աղքատաց 34ա։
Զաքարիայի Հ. կաթողիկոսի ի գալուստ Տեառն յԵրուսաղէմ 33բ։
Զօհալն հովէ 32բ։
Ընծայումն լուսնի. Անդրիասայ 34բ։
Ընտիր առացուածք 46ա, 46բ։
Թերութիւնք, ժամ պատարագին 26ա։
Թուղթոսի ասացեալ 29բ.
Ժողովածոյ 30։
Իրաց փերատոսչին Թուղթ 19բ։
Իմաստասիրական 31ա։
» պատմութիւն համառօտ 43ա։
Ներսէս Լամբրոնացւոյ. քանզի նշխարք 30ա։
» մեկնութիւն սրբոյ պատարագին 30ա։
Խաղաղ իմաստասէր Տիւսացի վասն բանական հոգւոյ 31 ա։
Խոկմունք (կրօնական) 52բ — 53։
Խոստովանութիւն հաւատ. ուղղափառաց 32ա։
Խրատ (երկու) առ մոլորեալս 28բ։
Խրատներ ախտերի օրուան մասին 44ա։
Խրատք Նուագրեայ 29բ.

Ծաղկաքաղ ի բանից Ե. Ոսկեբերանի 26բ.
Ծանօթութիւններ, ոտանաւոր են 47բ։
Կամարներ, Հրեղէն, ջրեղէն են 49ա.
Կանոն մկրտութեան 17ա։ —Հարսանեաց 17ա։—Հաղորդ տալոյ 17ա.—Թաղումն 17ա.—յաւուրն Այգելոց 17ա.—Տղայաթաղքն 17ա.—այգոյն Տղաթաղ այգելաց 17բ.—Հոգեհանգիստ առնելոյ 17բ.—Ննջեցելոց 17բ.—տնական 17բ.—ջուր աւրհնելոյ 17բ.—խաչ աւրհնելոյ 17բ.—ոտնալուայի 17բ.—քարոզ պատուիրանին 17բ.—Ը.Սաղմոսի 38բ, 39ա։
Կարգաւորութիւն աւրհնութիւնաբեր ցուցակի 31բ։
Կեանք վարուց շարագրողի խոստովանական գրոց 52ա։
Կերակուր քահանայից 26ա. 44ա։
Կոստանդիանոս Մեծի պատմութիւնը 47բ։
Կրօնական 31բ։
Հայրապետք Հայոց 31բ։
Համառօտ վարդապետաց ասացեալ 29բ։
Հարցմունք ա. եթէ չկայ միա՝ որ երկաբնակացն եկեղեցին բ. բնութիւն ասեն 19 ա։
« բ. մեք ասեմք զբաղում վարդապետս Լաթինացւոց 19ա։
« գ. Լաթինացւոց եկեղեցին ոչ հարկաւոր համարէ 19ա։
« դ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս 19ա։
« ե. Լաթինացւոց եկեղեցին 9բ։
« զ. խոկ թէ այդպէս է 19բ։
Հաւատամք Կ. Պօլսոյ ժողովոյն 18բ։
« Նիկիոյ ժողովոյն 18բ։
Հաւատամք ի մի Աստուած 32ա։
Հերձուածողութիւն Հասարակ 28ա։
Հերոնիմոսի ասացեալ 29բ։
Հին և Նոր Կտակարանի ձիւղաւորութիւնը 49ա։
Հին և Նոր ազգերի թագաւորների անունները 50ա։
Հրեշտակների ինը դասը 48բ։
Ճանապարհ փրկութեան 52ա։
Ճեմարան մտաց 47
Մաշտոց 17։
Մատթէոս վարդապետի աշխատութիւն 38բ։
Մեկնութիւն 20։
« առակաց Աւետարանի 22. 42։
« զանազան նիւթոց 47։
« կաթուղիկէ եկեղեցւոյ 18բ։
« Յովհաննու Գ. Տաթևացւոյ 53 ա.
« Յովհաննու (Նանայի) 40։
Մեհեկի ի. տաւնէ ամենաժողով 33բ։
Մեղեդի Գրիգորիս առաքինի 13բ։
« եկեղեցւոյ 15բ։
« ի քէն աղերսիւ 13ա։
« (տաղ) խաղաղարն 13բ։
« Յարութիւն 14 բ։
« Ներսէսկացւոյն՝ Պարագրի 12բ։
« Նարկ. Ես ձայն զաւիծոյն 14ա։
« Ի տր. Ներսէսէ 14բ։
« Ի տր. Ներսէսէ 14ա։
« Նոր ծաղիկ 12ա։
« Ստեփաննոս վարդապետ 13բ։
« Սրբէ Կոստանդէ ի դասըս 12բ։
Միքայէլ Ասորի յաղագս քահանայութեան և ցուցականաց 54—58։
Մոլորեցուցիչ կարգաւորք 28ա։
Մովսէսի Խորենացւոյ բան իմաստութեան 31ա։
Յալբերթ գրոց (Աղէքսանդրէ) 30ա։
Յաղագս երկնից շարժման Երզնկացւոյ 27բ։
Յակոբ Պատրիարգի քրիստոնէական 47բ։
Յակովբայ սրբոյ Հայրապետին ասացեալ յաւուր Մեծի սուրբ չարչարանաց Տեառն 34բ։
Յառաջաբան Գաւազանագրոց 49ա։
« Պօղոսի առաքելոց 20ա։
« Մեկն. կաթուղ. եկեղեց. 18բ։
Յիշատակարան 10ա. 16ա 17բ. 19բ. 22բ. 24—25. 26բ. 28բ. 33աբ. 34բ. 35բ. 39ա—40. 42բ. 46բ. (Ճաշոցի) 50ա — 52. 53բ. 54—58։
Յովհաննէս Որոտնեցւոյ իրանից իմաստասիրաց 31բ։
« Քննեցին ընդէմ Հայոց 32բ։
Յորդորակ։ Այսօր աւետիս 14բ։
« Խաչատուր վարդապետէ։
« Նոր Լոյս յարիխնայն 12ա։
« Զօրաւեղան զօրեղ փառօք 13ա։
« ի գաւազանէն Յեսեայ 11բ։
« Ով զարմանալի 12ա։

« Տէր Ներսէսէ։ Սահեղծող 12բ։
« Տէր Ներսեսի։ Այսօր 12ա։
Նախախնամութեան վերին դու շարժող 10ա։
Նաւասարդ տարեմուտ Հայոց 25ա։
Ներբողեան յօժուժ Յ. Կարբեցւոյ 45բ—46։
Ներսիսի Հայոց կաթող. Հարց 32բ։
Նշանք քսան Հերձուածողաց 28աբ։
Նշանակութիւն կաթուղիկէութեան 27։
Նոր ուղեցոյց անյաղթելի 19բ։
Նոյ նահապետի ժառանգների տարեթիւերը 50ա։
Նոյեան տապանի ձեւերը 49բ—50ա։
Շնորհալւոյ (քաղուածք) 26ա։
Ողբ Աղէքսանդրի 10ա.—մօրն Աղէքսանդրու, Հռոփսիմէի, Նախարարաց 10բ։
Ոսկեբերան մեկնութիւն թղթոց Պօղոսի 20բ—21ա։
« Յաղագս ապաշխարութեան 34ա։
« ի խաչն տէրունական 34ա։
« Բան 30ա։
« քաղուածք 45բ։
Ոտանաւոր (վերեւից ներքեւ եւ կարդացուող) 48բ։
Ուղերձ նուիրանաց 26ա.
« առ Ներսէս Ե. 45բ։
Չորեքտասան տարեձան հաւատոյ 32բ։
Պատասխանի այնոցիկ, որ երկու ներգործութիւնս ասեն ի վերայ Տեառն 31բ։
« առ քանի մի հարցմունս 19ա։
Պատասխանիք Կիւրղի 34բ.
Պատիւ քահանայից 26ա։
Պատմական 31բ։
Պատմութիւն և խրատ (Արքայ) 33ա։
Պատմութիւն Աղէքսանդրի Մակեդոնացւոյ 9բ։
Պարզատումար 34
Պղատոնի յէակաց 31ա։
Պորփիւրի յառաջաբանութիւն մեկնութեանց 31ա։
Սահմանք Դաւթայ 31ա։
« հաւատոյ, որ ի Նիկիայ...32ա։
Սաղմոսի մեկնութեան քաղուածոյք 38
Սարգսի շնորհալւոյ վարդապետի բանից 29բ։
Սենեքայ 29բ։
Սուրբ և սրբարար... և Ստատիսի (Եւստատիոսի°) 11բ։
Ստեփաննոսի Սիւնեցւոյ Ասա հերետիկոսաց... 32ա։
Սրբէ Կոստանդինէ։ Կոյր կոյսն 12բ։
Վանականայ համեմատութիւն հնոյն առ նորս 30բ։
« բղխումն սուրբ հոգւոյն 32բ։
Վասն գլուխ առացեալ բառին Մ. Վ. Սալլանթեանց 45բ։
« ծննդեան Կայենի 48բ։
« Հոգւոյն Աստուծոյ ի հօրէ միայն 32ա։
« Մեկնչաց աստուածային գրոց մերոց վարդապետաց 19բ։
« Մեղացն Ադամա պատմութեան 48բ։
Վարդան վարդապետի վասն խորհրդոյ պատարագին 32ա։
« « Այլբան 32ա։
Վկայութիւն Դիոնիսիոսի 29ա։
« Կիւրղի 29բ։
Վկայութիւններ հին կտակարանից 29ա։
Վկայութիւնք Պօղոսի առաքելոյն 20ա։
Տաղ Աղամայր Յորժամ 61բ
Այսօր նոր արև. 14բ.—Այսօր է շաբաթ և հոռի. 14բ—Այսօր ցընծասցէ. 11բ.—Աստուածածին մայր 12ա.—Արթունք, զուարթունք.15.—Աւագ ուրբաթի զարհուրեցան. 14ա.—զգոյնն աննզական. (սկիզբը պակաս) 59աբ.—Գրիգորիսի Աղթամարցւոյ.եղուկ. 61աբ։
« « Յորժամ զիս. 64բ.
ի Գրիգորէ։ Եկայք ողբասցուք. 15բ.—Դաստատանի։ Յորժամ Գաբրիէլ 60բ.—Եկեալ Մարիամ. 14բ.—Եկեղեցւոյ 11բ.—Երջանիկ հոգեհրաշ 13ա.—Էջմիածնին 15ա.—ի վերայ մահուան Յովհաննու Վանանդեցւոյ 46ա.—Խաղաղարարն 13բ—Խաչատուր վարդապետէ 12ա.—Ղարիպի։ Հոգի մի. 63բ.—Ճգնաւորացն։ Անոտն, Անոտն. 12բ.—ի Մատթէոս վարդապետէ 11բ։—Յարուցեալ յերրորդ աւուր. 14բ.—Յովհաննէս վարդապետի 11բ.—Նաղաշի. Անտոնէ մեծութիւն. 62բ։—Նարեկացւոյ 12բ.—Նարեկացւոյ. Այրն ծովիծով 12բ.—ի Ներսիսէ։ Զօրք երկնային. 16ա.—Տէր փառաց. 15բ.—Ասա Երզնկեցւոյ 14ա.—Խոստովանիմք Աստուած 13ա.—ի Ներսիսէ։ Որ կոչեցեր զգիմամբ 14ա։ —Աստուածածին 13ա։—Առաքեալք

11բ։ — Այգ բեղ 13բ։ — Տէր փառաց 12ա. — Որդիքն որոտման 12ա. — Խաչին անկեալ 11բ. — Քրիստոս փառ- 13ա. — Ի Որիկ Կոստանդէ Քրիստոս 12. — Հրճուիմք 12ա. — Տեառն ընդ առաջին 13ա. — Պարագայ ս. խաչին 15բ. — Վերացեալ Հոգին ամենայն (սկիզբը պակաս) 59բ. — Տղայոց Արարիչն արարածոյ 60ա. — Փառաց թագաւորն 14ա. — Քառասնից 13բ. — Քեզ ով տէր Յիսուս ձայնեմ 14ա. — Որ ի յիսօթանց 11ա։
Տաղարան 58։
Տելեմաք 42։
Տոմար Հայոց 33ա։
» Հռոմայեցւոյ 33ա.
» Ղևոնդի 32ա.
» Մեկնութիւն 32բ.
Տոմարական 32բ. — աշխատակներ 34բ։
Տրամաբանութիւն Գրանկիսկոսի Սոաւէի 43բ։
Ցերեկ քան զգերդ 17բ.
Քաղուածք ի պատմագրութեանց չորից ինքնակալութեանց 45բ։
» Յաստուածանմանութիւն մատենէ Քարոզներ, 36—37։
» Յովհաննու ծործորեցւոյ 12ա։
Քերականութիւն 31ա։
Օգոստինոս 29բ։
Օրհնութիւն աղի 17բ։

## ՅԱՒԵԼԼԻՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 33ա | 28 | գիր | յաւել | բոլորագիր. |
| 35ա | 15 | նիւթ | „ | թուղթ. |
| 40բ | 38 | մատեանս է | յաւել | նմանոյի |
| 45բ | 20 | փանդամի | „ | մի |

## ՎՐԻՊԱԿՆԵՐ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9բ | 22 | մուս | կարդա | մաս |
| 9բ | 29 | գիմեալ | „ | դիմեալ |
| 9բ | 33 | սաանաւորով | „ | ստանաւորով |
| 10ա | 5 | գոր | „ | զոր |
| 10ա | 7 | հասարակաց | „ | հասարակաց |
| 10բ | 26 | յուսով | „ | յուսով |
| 11ա | 1 | ամա | „ | ամա |
| 11ա | 2 | վասատակեցի | „ | վաստակեցի |
| 12ա | 15 | կիսարացոյ | „ | կեսարացոյ |
| 14ա | 29 | ատաւօտին | „ | առաւօտին |
| 15ա | 26 | հրգոր | „ | հրզօր |
| 17ա | 9 | խզրգած | „ | խզրգած |
| 19ա | 7 | էրկարնակաց | „ | երկարնակաց |
| 19բ | 4 | ազուգնացին | „ | ազուինացին |
| 19բ | 29 | ծգնազգեաց | „ | ծգնազգեաց |
| 19բ | 33 | ձնոնտանոյ | „ | ձեռնտանոյ |
| 22ա | 4 | Նփփրեմի | „ | Նփրեմի |
| 22ա | 25 | գաատրկ | „ | գատարկ |
| 25ա | 1 | բաղաքան | „ | քաղաքն |
| 25բ | 26 | Ազատամած | կարդա | Ազատամած |
| 26ա | 14 | մատեանս | „ | մատեանս |
| 26բ | 4 | աայեռի | „ | աայեռի |
| 26բ | 7 | ապագրեցաւ | „ | ապագրեցաւ |
| 26բ | 10 | յառաուածակերտ | „ | յաստուածակերտ |
| 27ա | 2 | կաշեկագմ | „ | կաշեկազմ |
| 27ա | 5 | գագարկ | „ | դատարկ |
| 27բ | 12 | գուռն հուգարեկին | „ | դուռն հազարեկին |
| 28ա | 17 | Նգան | „ | Նշան |
| 28բ | 30 | Նոսս | „ | Նոսա |
| 28բ | 39 | միաւուն | „ | միաւորին |
| 29ա | 19 | Եզըաս | „ | Եզրաս |
| 30բ | 15 | սաանոյ | „ | ստանոյ |
| 31բ | 2 | Պետրոս | „ | Պետրոս |
| 36ա | 43 | Յոհաննու | „ | Յոհաննու |
| 53ա | 24 | Յէր | „ | Տէր |
| 56ա | 9 | յՄեթլոոյ | „ | յՄեթլոյ |
| 41ա | 33 | Նանան | „ | Նանան |
| 42բ | 8 | եգրոր | „ | եղբօր |
| 81բ | 35 | գորրոյն | „ | զօրքոյն |

# ՑԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ


Աբդիոն 29ա.
Աբէլ 30բ.
Աբիսողոմ 12բ.
Աբրահամ Ասաքէլ Թպրոյեանց 46ա.
Ադամ 49ա (յաճախ) 49բ. 45բ. 48բ. 61բ. 62բ և այլն
Ադամ սուրբ 13ա.
Ադամ քահանայ 16բ.
Աղիզ փաշայ 40ա.
Աղմիոն 50ա.
Ազօրոս 49բ. 50ա.
Աթանաս Աղեքսանդրացի 29բ. 32ա. 34բ.
Աթլոս գետ 56ա.
Ալէքսան 35բ.
Ալի Ղուլի խան 46բ.
Աշարար 46բ.
Աշաճան 40ա.
Աշամալեան Պետրոս 9ա. 22բ.
Աղեքսանդր 30ա.
Աղեքսանդր կաթուղիկոս 18ա. 51ա.
Աղեքսանդր Թայիրեան 18ա. 22ա. 38ա.
Աղեքսանդր Մակեդոնացի 9բ. 10աբ (յաճախ)
Ամբրոսիոս 29բ.
Ամիրաղեզ մահտասի 40բ.
Ամսոս 50ա.
Անանիա. վ. 53ա.
Անանեայ (Շիրակացի) 27բ.
Անդրիանու ծով 54բ.
Անդրիաս իմաստասէր 34բ.
Աննայ 11ա. և այլն և այլն։
Անտոն Պորթոլ
Անտոն ճգնաւոր 12բ.
Անտոն արեղայ (գրիչ) 22ա. 25ա.
Աշտարակ 45բ, 53բ.
Ապրակունիս գիւղ 32բ.
Ապրէսեան Ուսեփիս 40բ.
Առաքել վ. արտազցի 32բ.
Առաքել քահանայ 16բ.
Առանէթ 16բ.
Ասորիք 49ա. 55ա.
Աստուած 41բ. 49բ. 57բ. և այլն և այլն
Աստուածածին 46բ.
Աստուածածնի վանք 19բ։ տ. Կարմիր։
Աստուածատուր կաթուղիկոս. 51բ.
Աստուածատուր քահանայ 16բ.
Աստուածատուր Դաւթեան 42բ.
Ատրախան 52ա.
Արիճան 40ա.
Արիստակէս վ. Տէվկանց 58բ.
Արիստոտէլ իմաստասէր 31ա. 49ա.
Արշարունիք 18բ.
Արսէն վ. Անտոնեան Մխիթարեան 43բ.
Արտազ 32բ.
Արտաւազ 35ա.
Աւգոստոս 30բ.
Աւետիք գրիչ 48աբ. 49բ.
Բաբելոն 56ա.
Բաղդասար 40բ.
Բանաշէն գիւղ 16բ.
Բասեան 32բ.
Բարդուղիմէոս 11աբ.
Բարսեղ Կեսարացի 12ա. 29բ.
Բարսեղ քահանայ Արողեան 54ա.
Բեթանիա 41բ.
Բեթղեհէմ 15ա։
Բերթումեան 47բ տ. Աշամալեան.
Բերնարդոս 29բ.
Բէկ 16ա.
Բիւզանդ 54ա, 58ա.
Բուխարա 45ա.
Բուշխ
Գաբրիէլ Հրեշտակապետ 16ա, 60բ.
Գաբրիէլեան 59ա.
Գալիլիա 41ա (յաճախ)
Գաղատացիք 21բ, 22ա.
Գանձասար 46բ.
Գառնի գիւղաքաղաք 32բ.
Գարեգին Զարպհանալեան 38բ, 41բ 43ա.
Գեղարքունիք 40ա.
Գէորգ 28ա.

Գէորգ վ. Կ. Պոլսեցի 19բ.
Գիւտ կաթող 45բ.
Գլակայ վանք 35ա.
Գողթան գաւառ 58բ.
Գուհար 16ա.
Գրիգոր ճանճ 46բ.
Գրիգոր աստուածաբան 29ա. 31բ.
Գրիգոր Նիւսացի 31բ.
Գրիգոր վ. Ապրակունիսցի 32բ.
Գրիգոր գանձագիր 11—16 յաճախ.
Գրիգոր գրիչ 38ա.
Գ. Լուսաւորիչ 13բ 36ա. 38բ.
Գրիգորի կթղ. Աղթամարցի 10ա. 60բ 64բ.
Գրիգոր կթղկ. 40ա.
Գրիգոր Սքանչելագործ 29բ. 31բ
Գրիգոր Տաթևացի 30ա. 53ա. 54ա.
Գրիգոր տաղագիր 15բ.
Գրիգոր վ. Ջուղայեցի 25ա.
Գրիգոր վ. 37ա.
Գրիգոր մահտասի 39բ.
Գրիգոր Կոստանեանց 46ա.
Գրիգոր Տէր վարժապետեան 46ա.
Գրիգոր քահանայ 16բ.
Գրիգոր քահանայ Լոռու Մելիքեան 43բ. 44ա. 46բ. 47ա.
Գոզալ 40բ.
Գոշ Մխիթար 46բ.
Դամաս 31բ.
Դանիէլ մարգարէ 29ա.
Դաստագուլ 40ա.
Դաւիթ մարգարէ 11բ, 14ա. 38բ.
Դաւիթ 40բ.
Դաւիթ եպիս. 46բ.
Դաւիթ Անյաղթ 45բ. 31ա.
Դարեհ 10ա. 10բ.
Դինոս 50ա։
Դիոնէսիոս 29ա. 31բ.
Դրաշարկոն 55բ.
Դոն գետ 53բ.
Եբրայեցիք 21բ. 29ա.
Եգիպտոս 9բ. 49ա.
Եդուարդ Հիւրմիւզ 42բ.
Եղնիկ 44բ.
Եզրաս 29ա.
Եղբայրոս 49բ.
Եղիշէ 44ա.
Եմաւոն լեռ 56ա.
Ենովք 49բ.
Եսայի Հայրապետ Գանձասարու 46բ. 59բ.
Եսայեաս Տաթևացի 16բ.
Եսայեա մարգարէ 37բ. 29ա.
Եւսուփեան 46ա.
Երասխ 58բ.
Երեմիա 22բ.
Երեմեայ մարգարէ 57ա. 29ա.
Երկքով 33ա.
Երուսաղէմ 25ա. 33ա. 41ա. 50ա. 54ա.
Երևան 18բ. 51բ.
Եւա 62ա.
Եւագր 29բ.
Եւրոպայ 46ա.
Եփեսացիք 21բ. 29ա.
Եփրեմ խորին Ասորի 21ա. և 34ա. (յաճախ) 20ա 31բ.
Եօթնաղբիւր գեղ 32բ.
Զագամ 46բ.
Զապէլ Թագուհի 55ա.
Զարպանալեան տ. Գարեգին.
Զաւհրապ 40բ.
Զաքարեայ կթղկ. 33ա.
Զաքարեայ վ. 17ա.
Զմիւռնիա 46ա. 26բ.
Զօրաբաբէլ 49ա.
Էլպէկ 40բ.
Էմին 52ա.
Էջմիածին 9ա. 15ա, 19ա 42բ, 43ա. 46ա. 47բ. 48ա. 52ա.
Թաբօր 59ա.
Թադէոս առաքեալ 11ա.
Թադէոս վ. Կ. Պոլսեցի Մարուգեան 43ա.
Թակուխի 16ա.
Թահիրբագ 46բ.
Թաճէր պարոն 40բ.
Թամուզ 10բ.
Թայիրեան տ. Աէքսանդր.
Թեսաղոնիկեցիք 21բ, 29ա.
Թէոդորոս (պատրիարք) 25ա.
Թէոդոս 13բ.
Թլկուրանցի, (գանձագիր) Յովհաննէս, 15բ.
Թովմայեան Հայրապետ 46ա.
Թովմաս Ագուլեցի 19բ.
Թորգոմ 55բ.
Թորոս 55ա.
Թորոս կաթուղ. 31բ.
Թուլիոս 29բ.
Թուխթակ 16ա.

Թումայ կրօնաւոր 16ա.
Թումայ քհ. 16բ.
Թուրքաստան 56ա.
Թուրվանդայ | Թրուանդայ 40բ.
Թրեստ 46ա.
Իգնատիոս Հպ. 11բ.
Իլով քաղաք 33ա.
Իսրայէլ 57ա.
Իսրայէլ վ. արտագցի 32բ.
Լաթին 19ա. և այլն
Լամբրոն 46բ.
Լևոն արքայ 55ա.
Խաղաղ իմաստասէր 31ա.
Խաչ (սբ.) վանք 43բ.
Խաչատուր կեչառեցի 10բ.
Խաչատուր վ. գանձագիր 12աբ. 14բ. 15բ.
Խաչատուր Միսաքեան 46ա.
Խաչէն 32բ.
Խաչում աղա 40ա.
Խանփարուար 40բ.
Խաչիկ 16ա.
Խիկար 40բ.
Խնիկ 16ա.
Ծամիկ 39բ.
Ծուան գիւղ 32բ.
Կալլիսթենէս 9բ. 47բ. 58բ.
Կայէն 16բ. 48բ. 49բ.
Կայեան 49բ.
Կանայ 41ա.
Կարապետ Տիգրանակերտցի 25բ.
Կարապետ սուրբ 35ա.
Կարապետ սարկաւագ 16բ.
Կարին 26բ.
Կարմիր վանք 20բ. 19բ.
Կիտրոն (ձոր) 41բ.
Կիրակոս ս. 13ա.
Կիրակոս 16ա.
Կինկղաւդէս կայսր 33ա.
Կիլիկիա 54բ. 32բ.
Կիւռիկոս 55բ.
Կիւրեղ Երուսաղէմացի 29բ. 34բ.
Կիւրոս 56ա.
Կղեմէս 27բ.
Կոստանեանց Կ. 58բ.
Կոստանդին կաթուղ. բարձրբերդցի 54բ 55ա. 57բ.
Կովկաս 53բ.

Կողոսացիք 21բ, 29ա.
Կոստանդին վ. Կիզիկեցի 32բ.ա
Կորնթացիք 21
Կրետէ 22ա,
Հաբէլ 49բ.
Հագար 55բ. 56ա.
Հաթուշէկ 16բ.
Հալեփայ սարկաւագ 16բ.
Հախնազար 46բ.
Հաղբատ 33բ.
Հայ, Հայք 33ա, 35ա. 48բ 47բ և այլն։
Հայաստան 18բ.
Հայրապետ վ. Նօթնաղբիւրցի 32բ.
Հեթում թագաւոր 55ա. 57բ.
Հերման 59ա. 31բ.
Հերոնիմոս 29բ.
Հիլպէ (քաղաք) 20ա.
Հիպողիտէս բոստրացի 31բ.
Հիւրմիւզէա 45ա.
Հնդիկք 43բ.
Հոգիամ 63բ.
Հիւսէյին 46բ.
Հռոմ 17բ.
Հռիփսիմէ Սանասարեանց 54ա.
Հռոմկլայ դղեակ 54բ.
Հռովմայեցիք 33ա. 35ա.
Հոռփսիանէ 10բ.
Ղամէք 49բ.
Ղազար կաթուղ. 48ա. 51աբ.
Ղազարոս 13բ. 36ա. 41բ. 48ա. 51ա.
Ղարադայու ձոր տ. Ղրղու։
Ղևտականք 29ա.
Ղուլիճան 40ա.
Ղուկաս աւետարանիչ 32բ—24ա.
Ղուկաս երէց 43ա.
Ղուկաս վ. 38.
Ղունկիանոս գրիչ 51բ. 52ա 48.
Ղուսայ 64ա.
Ղրղու (ձոր) 46բ.
Ղևոնդեանք 13ա.
Ղօրղան 46բ.
Ճուլղյենց Յակոբ (գրիչ) 17աբ.
Մաթուսաղայ 49բ. 30բ.
Մակարայեցիք 29ա.
Մաղաղիէլ 49բ.
Մաղարդ 58բ.
Մամփիոս 58ա.
Մանդինեանց Ա. 58ա.

Մանուէլ արքեպիսկոպոս պարոն 40ա.
Մանուէլ Ջախջախեան 42բ.
Մատթէոս աւետարանիչ 23
Մատթէոս գանձագիր 14ա.
Մատթէոս վ. 25բ.
Մատթէոս վ. տաղագիր 11բ.
Մատթ. վ. Մխիթարեան 38բ.
Մարգար 40բ.
Մարգարէ 39բ. 40բ.
Մարգարէ վ. Օձոպցի 32բ.
Մարգրիտ 16ա.
Մարթայ 16ա.
Մարիամ Աստուածածին 9բ. ևն.
Մարիամ Մակդաղէնացի 14բ. 37բ. 41բ
Մարտիրոս բրուտ 16ա.
Մարտիրոս սուրբ 13ա.
Մելիք աղա 40ա.
Մելքոն երէց 58բ.
Մեսրոպեան ուսումնարան 49ա
Միխայէլ Ասորի տ. Միքայէլ
Մինաս կաթուղ. 51ա.
Մինաս Սաղաթբէգեան Կամսարական 18ա.
Միրզայ 40ա.
Միրզայ շահ 46բ.
Միրզըջեան Վանանդեցի 26ա յաճախ.
Միրիման 40բ.
Միքայէլ Հրեշտակապետ 16ա.
Միքայէլ Ասորի 54ա. 58ա.
Միքայէլ վ. Սալլանթեանց 45բ.
Միքիա 36բ. 29ա.
Մխիթար տ. Գոշ.
Մխիթար 40բ.
Մխիթար տէր 12ա.
Մխիթար Այրիվանեցի 13ա.
Մխիթար քահ. բանաշէնցի 16բ.
Մխիթար գրիչ 16ա. 11ա.
Մխիթար վ. գանձագիր 14բ.
Մկրտիչ վ. 26բ.
Մկրտիչ քահ. 16բ.
Մկրտիչ գանձագիր 13բ, 14բ.
Մկրտիչ տանուտէր 16ա.
Մովսէս Մարգարէ 36բ.
Մովսէս 49ա. 50ա.
Մովսէս մանկավարժ գրիչ 19բ. 20բ. 26ա.
Մովսէս Խորենացի 31ա. յաճախ.
Մրուաթ 40բ.
Մօրիկ 55բ.
Յաբեթ 49բ.
Յալբերթ 30ա.
Յակովբ Շամախեցի 48ա 50աբ. 51բ. 52բ
Յակովբ Սրճոյ Հայրապետ 34բ.
Յակոբ վ. Գառնեցի 32բ.
Յակոբոս եպս. 31բ.
Յակոբոս վ. Ճէլալեան 47բ.
Յակովբ վ. 19բ.
Յակովբ վանք 40ա.
Յակոբ տէր պարոն 40ա
Յակովբ Նահապետ 11բ, 37աբ.
Յակոբեանց 41ա. 25ա.
Յակովբճան 40ա
Յարութիւն Դաւթեան 9ա. 10բ. 52ա.
Յեսայեայ գծաւղ 33բ.
Յեսու 11բ.
Յիսուս 41ա, 4բ, 57բ, 61բ. ևն.
Յեփթայի 10բ.
Յիվան 40բ.
Յոբ 36ա.
Յոհան 36բ.
Յոհան գանձագիր 13բ.
Յովակիմ 11ա.
Յովէլ մարգարէ 53ա. 29ա.
Յովհան տ. Ոսկեբերան.
Յովհան Որոտնեցի 31բ. 53բ.
Յովհան Ծործորեցի 12ա.
Յովհան մարգարէ 53ա, 37աբ.
Յովհան Քռնեցի 32բ.
Յովհաննէս աւետարանիչ 36ա, 53բ. 29ա.
Յովհաննէս 16բ.
Յովհաննէս Անանեան Մաղբեցի 22բ.
Յովհաննէս Երզնկացի 27բ.
Տովհաննէս Մկրտիչ 30բ.
Յովհաննէս սարկաւագ 16բ.
Յովհաննէս Կարբեցի 34աբ 45բ
Յովհաննէս Վանանդեցի 46ա.
Յովհաննէս քահանայ 16ա.
Յովհաննէս բահանայ 40բ.
Յովհաննէս վ. Կիզիկեցի 32բ.
Յովհաննէս վ. Ծուանեցի 32բ.
Յովհաննէս տէր 54բ. 55ա.
Յովհաննէս արքեպիսկոպոս 19բ.
Յովսէփ պատմագիր 50ա.
Յովսէփ Արղութեանց 43ա. 42բ.
Յուդայ 16բ.
Յոյնք 55ա.
Յօհաջան Գերաքեան 43բ.
Նաբուգոդոնոսոր 56ա.

Նախավկայի վանք 54ա. 58բ.
Նախիջևան Նոր 43աբ. 53աբ. 54բ.
Նաղաշ 62բ. 63բ. (4 անգամ)
Նանա Ասորի 33բ. 40աբ. 41բ.
Նարեկացի Գրիգոր 12բ. 12բ. 14բ.
Նարեկացի Անանիա 53ա.
Նեգգաներոս 9բ.
Ներսէս Ե. Աշտարակեցի. 42բ 53բ.
Ներսէս մեծ 55բ. 56աբ. 57բ.
Ներսէս կթղկ. տաղագիր 11բ. 12ա 12բ. 13ա. 14աբ. 15բ. 16ա.
Ներսէս Լամբրոնացի 30ա.
Ներսէս վ. (գանձագիր) 15բ. (2 անգամ)
Ներսէս վ. Տարոնցի 32բ.
Ներսէս դպիր Արովեանց 54բ.
Ներսիսեան դպրանոց 18ա. 20ա. 42ա. 42բ. 44ա. 47ա.
Նէէման 50ա.
Նիկոդիմոս 41ա.
Նիկողայոս Հայրապետ 11ա.
Նիկողայոս Պաւլովիչ 53բ.
Նիկողայոս Տէր Աւետիսեան Պապով 45բ.
Նինուէ 37ա.
Նոյ 49ա. 49բ. 50ա.
Շահնազարեան 17բ.
Շահրիար Աղաբաբ. 46բ.
Շաղաւատ. 40բ.
Շամախի 51ա. 52բ.
Շամամ 16ա.
Շամբ ձորակ 58բ.
Շամշադին 46բ.
Շարըրման 16բ.
Շաւիխ քահանայ.
Շմաւոն Տէր 40ա.
Շնորհալի 45բ.
Շնոհոր 16ա.
Ոդիսեւս 42բ.
Ոլոմպիոս 9բ. 10բ.
Ողավէրըու ս. Կիւրակէ 17բ.
Ոսկեանք 13ա.
Ոսկեբերան 3ա. 20ա. 30ա. 4բ. և այլն.
Ուրծառափ վանք 40ա.
Չալապի 40ա.
Չորման 56բ (3 անգամ)
Պաղտասար Դէորգեան 27բ.
Պաւրա 42բ.
Պարոն Աւշին 55բ.
Պարոն Լևոն 55բ.
Պարոն Խօճենց 43ա.
Պարոն Կոստանդին 55բ.
Պարոն Մարգար Զաքարիա Խօջենց 43ա.
Պարսք 10ա. 44բ. 45ա.
Պարսիկ-Ղզլբաշ 50բ.
Պաւղոս առաքեալ 20—21 և այլն.
Պետրոս ամիրայ տ. Եսաւուֆեան.
Պետրոս առաքեալ 11բ. 45բ.
Պետրոս վ. 42բ. 24բ.
Պետրոս 34բ.
Պետրոս Հայրապետ 12.
Պետրոս եպիսկոպոս տ. Աշամալեան
Պիղատոս 41բ.
Պղատոն 31ա.
Պիւհոն 31ա.
Պոսիպոս (*) 9բ.
Պորփիւր 31ա.
Պողոմէոս գրասէր 10բ.
Պոլիս 19ա. 18ա. 34ա. 46ա.
Պօղոս Բերթումեան 42բ.
Պօղոս քահ. Խոճեանց 54բ.
Պոնտոս 53բ.
Ջալալեան 54ա.
Ջուղա 52ա.
Ռաոնա 50ա.
Ռափայէլ 22բ.
Ռուսաստան 53բ.
Սադաղ 16ա.
Սահակ քահանայ Սահառունի 46ա.
Սամուէլ քահանայ մեկնիչ տոմարի 33ա.
Սարգիս շնորհալի 29բ.
Սարգիս Ջալալեանց 53բ, 54ա.
Սարգիս Պօղոսեան դպիր 18ա, 19—20բ.
Սարգիս սուրբ 13ա.
Սարգիս 16ա, 16բ.
Սեմ 49բ.
Սենեքայ 29բ.
Սէթ 49բ.
Սիգուեստոս 31բ.
Սիմէոն կաթուղիկոս 2բ, 28բ, 48ա, 51բ, 52ա.
Սիմէոն Երեւանի 30բ.
Սիմէոն վ. Բասենցի 32բ.
Սիմէոն վ. Խաչենցի 32բ.
Սիմէոն 40բ.
Սիրաք 24ա.
Սիոն (Քեբրոն) 36ա, 49ա, 57ա։
Սկիւթեայ 56ա.

Սոփոնիայ 29ա.
Սմբատ իշխան 33բ.
Սմբատ սպարապետ 55բ.
Սողոմոն 49ա.
Սոաւէ Ֆրանկիսկոս 43բ.
Սուրաթ 43բ.
Սուքիասեանք 13ա.
Սօլթան Պ. 40բ.
Ստատիոս 11բ.
Ստեփան 22բ.
Ստեփան մահտեսի 42աբ.
Ստեփաննոս Սիւնեցի 32ա.
Ստեփաննոս իմաստասէր 33ա.
Ստեփաննոս քահանայ 16բ.
Ստեփաննոս վ. Ագուլեցի 586
Ստեփաննոս Նախավ. սբ.—վանք 58բ.
Ստեփաննոս մեղեդագիր 13բ.
Ստեփաննոս արքեպս. Զմիւռնեցի 26ա.
Սրիկ Կոստանդին 12բ. (2 անգամ)
Վահան 12բ.
Վահրամ 54բ.
Վաղթանկ 27բ.
Վանական 30բ.
Վարագ 33բ.
Վարդան 39ա. 55բ.
Վարդան վ. 32ա,55բ.
Վարդանանք 13ա.
Վեննա 34բ.
Վեննայի Մխիթարեան տպարան 58բ.
Վենետիկ 38բ, 43բ.
Վելիճան 40ա.
Վիրապ 40ա.
Տաճիկք 51ա
Տաշեան 35բ, 58բ.
Տարաշամբ 54ա.
Տարոն 32բ.
Տելեմաք 42բ.
Տիմոթէոս 29ա. 29ա.
Տիտոս 22ա.
Տփխիս 17բ, 43բ, 44ա, 45բ, 46բ, 47ա.
Տուրդինա 50ա.
Փարիսեցիք 41ա.
Փարէզ 18բ.
Փերթումեան Պետրոս վ. 20ա տ. Աղամալեան,
Փիլիպեցիք 21բ, 29ա.
Փիլիմոն 21ա.
Քամ 49բ.
Քալանթար Իսկանդար 46բ.
Քաղկեդոն 32ա.
Քեփրոն 49ա.
Քսիսութրոս 50ա.
Քրիստոս 13աբ, 16ա, 33բ, 45ա, 49աբ, 50աբ, 57 ևն.
Օգոստինոս 29բ.
Օծող գիւղ 32բ.
Օսմանցիք 50բ.
Օտարդիոս 50ա.
Ֆէօդօր Ալէքսանդրովիչ Էմին 52ա.
Ֆիլոն Բիբլիոս 46ա.
Ֆրանգ 33ա.
Ֆրանկիսկոս տ. Սոաւէ։